

ԶՀԱՑ ՄԵՐ ՀԱՆԱՊԱԶՈՐԴ

Աստվածաշնչի ամենօրյա անձնական և ընտանեկան
ընթերցումներ և հոգևոր խորհրդածություններ

ԻԶ ՏԱՐԻ

2016 թ.

Դ ԵՌԱՄՍՅԱԿ

Հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում
Radio Bible Class ընկերությանը, որի թույլտվությամբ
Our Daily Bread գրքույկից թարգմանել ենք հաջորդ
էջերի խորհրդածությունները:

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն
AMAA

31 West Century Road

Paramus, New Jersey 07652, USA

E-mail: amaa@amaa.org, Website: www.amaa.org

Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ

0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18

Հեռ.՝ (010) 54-35-76; (010) 54-35-78

Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am

Կայքէջ՝ www.amaa.am

Երգեցե՛ք

Կարդա՛
Ա. Մնաց. 16.23-27

**Երգեցե՛ք նրա համար
ու օրհնաբանեցե՛ք
նրան, պատմեցե՛ք բո-
լորին Տիրոջ սքանչե-
լագործությունները:**
Ա. Մնաց. 16.9

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եսայի 11-13
■ Եփեսացի 4

Երբ դուրս եմ գալիս քայլելու
եմեր տան մոտակա զբոսայ-
գում, հանդիպում եմ մի ծեր կնոջ,
որն ինձ նման քայլելու է գալիս: Քա-
նի որ իրար հակառակ ենք շարժվում,
յուրաքանչյուր անգամ, երբ քայլում
եմ լճակի շուրջը, դեմառդեմ հանդի-
պում եմ նրան: Նա ունի կնճռոտված
սիրուն աչքեր, որոնք ամեն անգամ
ավելի են կնճռոտվում, երբ նա ժպ-
տում է: Բայց երբ ժպտում է, ամբողջ
դեմքը փայլում է:

Շուտով իմացա, որ նա տառապում
է «մոռացության» հիվանդությամբ:
Քայլելու ընթացքում առաջին հան-
դիպման ժամանակ նա հարցնում է.
«Երգս երգեցի՞՞ քեզ»: Երբ ասում եմ՝
ո՛չ, տիկի՛ն, նա սկսում է մի կարճ երգ
երգել արևի մասին. «Բարի լո՛ւյս, արևի՛ լույս...»: Ապա ժպտում
է, բարձրացնում ձեռքերը և ինձ օրհնելու շարժում անելով՝ շա-
րունակում է քայլել: Լճակի շուրջը առաջին շրջանը կատարելուց
հետո, երբ կրկին ենք հանդիպում, նա դարձյալ նույն հարցն է
տալիս՝ «Երգս երգեցի՞՞ քեզ»: Ես ասում եմ. «Նորի՛ց երգիր»: Եվ
նա երգում է: Մտքիցս դուրս չի գալիս նրա այդ հաճելի երգը:

Այդ տարեց կինը առակի կարգ անցած այն անձն է, որին
կուզեի նմանվել: Կուզեի, որ կյանքս այս աշխարհում լիներ
երգելու և երգեր հորինելու մի տեսական ընթացք: Պիտի ու-
զեի սրտիս մեջ երգել Արդարության Արեգակին, որը ծա-
գում է իր բուժող թևերով (Մաղ. 4.2)՝ ամենուր տարածելով
իր սիրո համեցող հիշատակը:

Թող Նրա երգը քո սրտում և շրթունքներիդ վրա լինի
այսօր, և շատերը, լսելով այն, վստահությամբ նվիրվեն Տի-
րոջը:

Սրտիդ մեջ հնչող երգը ժպիտ է ցուլացնում դեմքիդ վրա:

**Հիսուսն
առանձնակա՞ն է
Կարգա՛
Հովհաննես 14:1-12**

**Հիսուսը նրան ասաց.
«Ես եմ ճանապարհը,
ճշմարտությունն ու
կյանքը. ոչ ոք Հոր
մոտ չի գալիս, եթե ոչ
ինձանով»:**

Հովհ. 14.6

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եսայի 14-16

■ Եփեսացի 5.1-16

միայն մի փոքրիկ ընտրանի են համարում: Ամեն մարդ ընդունելի է այնտեղ՝ անկախ գույնից, դասակարգից ու ցեղից:

Հակառակ այս անվիճելի ճշմարտության՝ Հիսուսը կոչ է անում, որ Ի՛նքն է Աստծուն հասնելու միակ ճանապարհը: Այս ճշմարտությունը նախատելի է թվում շատերին (Հովհ. 14.6): Այո՛, Հիսուսն է միակ ճանապարհը, միակ ընտրությունը, որ հնարավոր է գործնականում: Որովհետև մենք բոլորս հանցավոր մեղավորներ ենք Աստծու առաջ: Որպես մեղավորներ՝ մենք չենք կարող մեզ փրկել: Մեր մեղքերից փրկվել կարելի է՝ միայն հավատալով Հիսուսին՝ որպես Աստվածորդու, նրա մարդեղությանը, մեր մեղքերի համար խաչվելուն և գերեզմանից հարություն առնելուն: Ոչ մի այլ կրոնի առաջնորդ չի կարող ապահովել հաղթանակ մեղքի և մահվան նկատմամբ:

Մի անգամ՝ հրապարակային հարցազրույցի ժամանակ, տեսա մեծ ավետարանիչ Բիլլի Գրեհեմի դատերը՝ Աննա Գրեհեմ Լոթցին: Հարցազրույց վարողը հարցրեց. «Դու է՞լ ես այն հավատացյալներից, ովքեր ընդունում են, որ Հիսուսը երկինք տանող բացառապես միակ ճանապարհն է,-ապա ավելացրեց՝ ասելով,- գիտե՞ս՝ շատերին որքա՛ն է ջղայնացնում այս համոզումը»: Աննան պատասխանեց. «Հիսուսն առանձնական չէ: Նա մեռավ, որպեսզի որևէ մեկը կարողանա իրենով փրկություն գտնել»: Ի՛նչ ճշգրիտ պատասխան: Քրիստոնեությունը առանձնական հատուկ դասակարգի պատկանող ակումբ չէ, որին

Ընդունիր Բարի Լուրը: Հիսուսը ոչ առանձնական Փրկիչ է:

**Ճեղքված
ոսկեպնակներ**

Կարգակ
Սաղմոս 140

**Տե՛ր, Տե՛ր քեզ են
ուղղված աչքերն իմ,
Հույսս դրի քեզ վրա:
Մի՛ Հանիր ինձնից իմ
Հոգին:**

Սաղմ. 140.8

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եսայի 17-19
■ Եփեսացիս 6

Ցավը մեզ տալիս է շատ տգեղ և աղավաղված հեռանկար կյանքի և Աստծու վերաբերյալ: Նման պարագաներում մենք կարիքն ունենք Աստծու, որ մեզ Համար նոր ոսպնյակներ Հայթայթի, որպեսզի կարողանանք վերստին Հստակ տեսնել ամեն ինչ: Այդ Հստակ տեսողությունն ընդհանրապես սկսվում է, երբ մեր աչքերը դարձնում ենք դեպի Տերը: Սաղմոսերգունք քաջալերում է մեզ՝ ասելով. «Տե՛ր, Տե՛ր, քեզ են ուղղված աչքերն իմ, Հույսս դրի քեզ վրա: Մի՛ Հանիր ինձնից իմ Հոգին» (Սաղմ. 140.8): Աստծուն Հստակորեն տեսնելը մեզ օգնում է նաև մեր կյանքը ավելի ճիշտ և Հստակ կերպով տեսնել:

Երբ մեր աչքերը Աստծուն դարձնենք ցավի կամ Հոգեկան տազնապնների ժամանակ, Նրան վստահելով՝ կարող ենք մխիթարություն գտնել և կրկին Հույսով լցվել մեր առօրյա կյանքում: Նա մեզ պիտի օգնի, որ ամեն բան դարձյալ Հստակորեն տեսնենք:

Հիսուսի վրա կենտրոնանալը, ամեն բան ճիշտ հեռանկարի մեջ է դնում:

Ես ակնոց գործածել եմ սկսել 10 տարեկանից: Ակնոցը տակավին կարևոր է ինձ Համար, քանի որ ժամանակի ընթացքում աչքերս Հակամետ են տկարանալու: Երբ պատանի էի, կարծում էի, թե ակնոց գործածելը վնասակար բան է, մանավանդ մարզիկների Համար: Մի անգամ գնդակ խաղալիս ակնոցիս ապակիները ճեղքվեցին: Դրանք նորոգելը շաբաթներ տևեց: Այդ ընթացքում ամեն ինչ ծուռ ու աղոտ էի տեսնում:

Մեր կյանքում Հաճախ ցավը գործում է ճեղքված ոսպնյակի պես: Նա մեր մեջ տազնապ է առաջացնում կյանքի ընթացքում մեր ունեցած փորձառություն և Հավատքի միջև:

**Փոխել
պատմությունը
Կարդա՛
Ղուկաս 2.1-14**

**Այսօր ձեզ Դավթի
քաղաքում Փրկիչ
ծնվեց, որ է՝ Օծյալ
Տերը:**
Ղուկ. 2.11

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եսայի 20-22
■ Եփեսացիս 6

Այսօր, երբ բջջային հեռախոսով կարող ենք միջազգային կապ հաստատել, էլեկտրոնային նամակագրությունը հասնել աշխարհի բոլոր անկյունները և անհաշիվ երևույթներով ու նկարներով լցնել մեր համակարգիչները, դժվար է պատկերացնել մի գնդակի ծավալ ու նեցող արբանյակի ազդեցությունը: Սակայն 1957-ի հոկտեմբերի 4-ին Խորհրդային Միության կողմից տիեզերք արձակված առաջին արհեստական արբանյակը փոխեց աշխարհի պատմության ընթացքը: Աշխարհի բոլոր պետություններն ուզեցին հասնել և գնալ զարգացման այդ քայլին համընթաց, և մարդկության ապագայի հանդեպ մարդկանց վախին փոխարինեց հույսը:

Սակայն մարդկային պատմության ներկան և ապագան փոխող դեպքերը մնում են մթության մեջ: Սա ճշմարտություն է նաև Հիսուսի ծննդյան պարագայում: Ծնվածը մի փոքրիկ երեխա էր մի սովորական ընտանիքում՝ մի փոքրիկ գյուղում: Սակայն այդ դեպքը փոխեց ամբողջ պատմության ընթացքը: Հովիվներին ծանուցած հրեշտակի խոսքերը տարածվեցին ամեն կողմ. «Այսօր ձեզ Դավթի քաղաքում Փրկիչ ծնվեց, որ է՝ Օծյալ Տերը» (Ղուկ. 2.11): Տասնինը դար անց Ֆրիլիպս Բրուքսը գրեց. «Բոլոր տարիների հույսերն ու վախերը քեզնով միատեղվեցին այս գիշեր»:

Երբ մեր կյանքերը բացենք Տիրոջը և Նրան ճանաչենք որպես մեր Փրկիչը, մեր ապագայի պատմության ընթացքը կփոխվի հիմա և հավիտյան: Ուրախություն այս Մեծ Ավետիսը (Ղուկ. 2.10) բոլորի համար է, ամենուրեք:

Պատմության ծխնին գտնվում է Բեթղեհեմի մի ախոռի դռան վրա:

Արդարացում չկա

Կարդա՛
Հռոմեացիներ 10.1-13

**Քանի որ ով Տիրոջ
անունը կանչի,
կփրկվի:**

Հռոմ. 10.13

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եսայի 23-25

■ Փիլիպպեցիներ 1

առջև հաշվետու լինելուց:

Ավետարանի ճշմարտությունը կախված չէ նրանից, թե մարդիկ ինչպե՛ս են ապրում իրենց հավատքի կյանքը: Մեր փրկությունը միայն կապ ունի Քրիստոսի հետ: Հռոմ. 10.9 համարն ասում է «Որովհետև եթե Հիսուսին բերանովդ Տեր դավանես և սրտովդ հավատաս, որ Աստված նրան մեռելներից հարություն տվեց, կփրկվես»:

Որոշ մարդիկ հավատացյալների թերությունները որպես պատրվակ են օգտագործում՝ մերժելու Ավետարանի՝ փրկության հրավերը: Սակայն նրանք չեն կարող որևէ մեղադրանք ներկայացնել Հիսուսին: Նա առանց մեղքի է և կատարյալ ամեն ձևով: Պիղատոսն ասաց Հիսուսի մասին. «Այս մարդու մեջ ոչ մի հանցանք չգտա» (Ղուկ. 23.14): Հիսուսն արեց այն, ինչ չէր կարող անել ոչ ոք: Նա կրեց խաչի մահվան տառապանքը, որպեսզի փրկություն ապահովի բոլոր նրանց համար, ովքեր հավատում են Նրան:

Ոչ մի արդարացում չկա՝ «ո՛չ» ասելու Քրիստոսին:

Մարդիկ հաճախ տարբեր պատճառներ են բերում՝ Ավետարանի բարի լուրը մերժելու համար: Տարածված պատճառներից մեկը նրանց մեղադրանք է հավատացյալներին՝ սրանց գործած սխալների կամ այն գործերի համար, որ պիտի անեին, բայց չեն արել: Այդ քննադատողներն ասում են. «Ես ճանաչում եմ մի հավատացյալի, որը վատ վարվեց ինձ հետ»: Կամ «Գնացի եկեղեցի, բայց այնտեղ ոչ վրաս նայեցին, ոչ էլ հետս խոսեցին»:

Պետք է ընդունել, որ հավատացյալները կատարյալ չեն, և շատերը հաճախ վատ օրինակ են ծառայում ուրիշներին: Սակայն ուրիշներին մեղադրելը մեզ չի ազատում Աստծու

**Ճնշող պատասխանատվություններ
Կարգա՛
Նէեմի 4.1-14**

**Նրանցից մի՛
վախեցեք, հիշեցե՛ք
մեր մեծագոր ու
ահարկու Աստծուն....
Նէեմի 4.14**

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եսայի 26-27
■ Փիլիպպեցիներ 2

Երբ դեռևս հայտնի չէր երկ-
րորդ համաշխարհային պա-
տերազմի արդյունքը, Ամերիկայի Մի-
ացյալ Նահանգների նախագահ
Ֆրանկլին Ռուզվելտը մահացավ, և
Հենրի Թրումենը երդում տվեց որպես
նոր նախագահ: Հաջորդ օրը Թրու-
մենն ասաց լրագրողներին. «Երեկ, երբ
ինձ ասացին, թե ի՛նչ է պատահել,
կարծես լուսինը, աստղերը և բոլոր մո-
լորակները վրաս ընկան»: Ակնհայտ է,
որ նախագահն իրեն զգում է ճնշող
պատասխանատվությունների տակ:

Նէեմին մեծ առաջնորդ էր, որ
նույնպես իրեն ծանր բեռան տակ էր
զգում: Որպես Բաբելոնի գերությու-
նից վերադարձող հրեաների առաջ-
նորդի՝ նրան էր հանձնարարված

Երուսաղեմի քանդված պատերի վերակառուցումը: Հակա-
ռակ առկա դժվարություններին և թշնամիների սպառնալիք-
ներին՝ նա չվախեցավ: Նա կազմակերպեց թե՛ պատերը վե-
րակառուցելու աշխատանքը և թե՛ իրենց պաշտպանող բա-
նակ՝ նրանց ճիգերը զորացնելով աղոթքով. «Մենք աղոթքի
կանգնեցինք մեր Տեր Աստծու առջև և թշնամիների պատճա-
ռով մեզ վրա պահակներ նշանակեցինք ցերեկն ու գիշերը»
(Նէեմ. 4.9): Նէեմիան աշխատողների ուշադրությունը կենտ-
րոնացրեց ավելի շատ Աստծու, քան թշնամիներից եկող
սպառնալիքների վրա: Նա ասաց. «Նրանցից մի՛ վախեցեք,
հիշեցե՛ք մեր մեծագոր և ահարկու Աստծուն» (Նէեմ. 4.14):

Դու է՞լ ես քեզ զգում ճնշող պատասխանատվություն-
ների ներքո: Աղոթի՛ր և խնդրի՛ր Աստծու օգնությունը և
ծրագրի՛ր աշխատանքդ Նրա կամքի և ցուցմունքների հա-
մեմատ: Նա բավարար զորություն պիտի տա քեզ:

Աստված մեզ հրավիրում է բեռնավորել Իրեն այն բաներով,
որոնցով մենք ենք ծանրաբեռնված:

**Մայրամուտի
ժամեր**

Կարգա՛
Փիլիպպեցիներ 3.20-4.1

**Դրանք պտղաբեր
կլիներն նաև
ծերության ժամանակ՝
գիրգ ու փափուկ:**
Սաղմ. 91.14

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եսայի 28-29
■ Փիլիպպեցիներ 3

Երբ դեռ երիտասարդ ես և
կենսունակ, քեզ համար
դժվար է հասկանալ այն զգացում-
ները, որոնք ցավ են պատճառում
բազմաթիվ տարեց մարդկանց:
Սակայն բոլոր նրանք, ովքեր
իրենց կյանքի ճամփորդության
կեսն անցել և սկսել են վայրէջքը,
կարող են գնահատել այն, ինչ
Դավիթն է ասում. «Մանուկ էի ես
և ծերացա» (Սաղմ. 36.25): Եվ
որովհետև ծերությունը բերում է
ցավ ու կորուստ, շատերն անի-
մաստորեն փափագում են, որ
իրենց կյանքի ամուսն օրերը չվեր-
ջանան:

Սակայն տեսնենք, թե ի՛նչ է
ասում մի հավատացյալ աստվածաբան գրող. «Մի օր
կյանքիս փոքրիկ օրը պիտի մեղմանա և մոտենա իրիկ-
վան: Պիտի գան իմ մայրամուտի ժամերը: Դրանից հետո,
գիտեմ, մթնշաղի միջից պիտի ծագի ամենագեղեցիկ ար-
շալույսը, որ երբեք չեմ տեսել իմ կյանքի ընթացքում:
Օր, որը երբեք չի ազդոտանալու և չի վերածվելու մթն-
շաղի»:

Ուրեմն, ո՛ւր էլ գտնվելու լինենք դեպի երկինք ըն-
թացող ուխտագնացության մեջ, եթե քայլենք Հիսուսի
հետ, կարող ենք ուրախ և ապահով լինել: Այնքա՛ն ժա-
մանակ, քանի դեռ գիտենք, որ մեր հավատարիմ Հայր
Աստված մեր մեջ է բնակվում, մինչև մեր ճամփորդու-
թյունը իր ավարտին հասնի, մենք կարող ենք գոհունակ
սրտով փառք տալ Աստծուն մեր ստվերները երկարաց-
նելու և մայրամուտը ուշացնելու համար:

Ինձ համար կյանքը Քրիստոս է, իսկ մեռնելը՝ շահ:

Փիլիպպեցիներ 1.21

**Պատրանատ եղիբ
մարզվելու**

Կարգա՝

Փիլիպպեցիներ 4.10-19

....ես սովորել եմ՝
ինչի մեջ որ կամ,
նրանով բավարարվել:
Փիլիպ. 4.11

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եսայի 30-31

■ Փիլիպպեցիներ 4

ձատրվում են չեմպիոնութուն շահելով:

Պողոս Առաքյալը մարզելու և մրցակցության փոխաբերական նույն պատկերն է գործածում իր գրած նամակներում: Երբ ավետարանչութուն էր անում Հեթանոսներին, նա ինքն իրեն ենթարկեց Աստծու մարզումին, որն ընդգրկում էր նեղութուն և ծանր աշխատանք: Փիլիպ. 4-րդ գլխում նա երկու անգամ ասում է. «Ես սովորել եմ» (Փիլիպ. 4.11-12): Առաքյալի և մեզնից յուրաքանչյուրի համար Հիսուսին հետևելը կյանքի տևողությամբ սովորելու մի ընթացք է: Մենք հոգևորապես այն օրը չենք հասունանում, երբ փրկութուն ենք գտնում, ինչպես դպրոցական տարիքի մարզիկը պատրաստ չէ արհեստավարժ մարզիկ դառնալու: Մենք մեծանում ենք հավատքի մեջ, և Աստծու խոսքն ու Սուրբ Հոգին մեզ գորացնում են ծառայության մեջ: Որքան ունակ լինենք սովորելու, այնքան ավելի մարզված կլինենք Տիրոջ ծառայության գործում:

Աստծու գործը մեր մեջ չի վերջանում՝ Քրիստոսին ընդունելով, այլ նոր միայն սկսվում է:

Տուտբուլի մի հաջողակ մարզիչ ասում է, որ իր թիմի գրեթե բոլոր խաղացողներն ասում են «տասն անգամ հարյուր» սկզբունքով մարզումը, որը կատարվում է յուրաքանչյուր փորձի ավարտին: Խաղափորձն ավարտելուց առաջ նրանք պարտավոր են տասն անգամ վազել 100-մետրանոց շրջանով՝ առանց նվազագույն դադարի: Եվ եթե նշանակված ժամին չկարողանան ամբողջացնել իրենց վազքը, ստիպված են կրկնել այն:

Տուտբուլիստներն ասում են այս օրենքը մինչև խաղի օրը, քանզի միայն այն ժամանակ են նրանք զգում, որ կարող են հանգիստի ամբողջ ընթացքում խաղալ առանց հոգնելու: Նրանց ճիգերը հաճախ վար-

Պատմի՛ր
պատմությունը
Կարգա՛
Հեսու 2

....ձեր Աստվածն
Աստված է երկնքում՝
վերևում, և երկրի
վրա՝ ներքևում:

Հեսու 2.11

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եսայի 32-33
■ Կողոսացիներ 1

ցամաքեցրեց ձեր առաջ, երբ դուրս էիք գալիս Եգիպտոսից, և թե ինչ արեցիք դուք ամորհացիների երկու թագավորներին՝ Հորդանան գետի այն կողմում գտնվող...» (Հեսու 2.10):

Բնական պայմաններից ելնելով՝ թվում էր, թե Երիքով քաղաքը աննվաճ էր: Սակայն այն խոցելի դարձավ Աստծու զորությունը հիշեցնող պատմությունների շնորհիվ: Իսրայելցիների դալուց առաջ արդեն իրեն հպարտ և ինքնաբավ համարող այդ թշնամի ժողովրդի մեջ վախ էր ընկել, որովհետև հրաշանման բաներ էին լսել Աստծուն պատկանող այդ ժողովրդի մասին (Հեսու 2.11): Եվ այդ քաղաքում ապրող մի հեթանոս կնոջ՝ սրտով Աստծուն դառնալը մեծապես նպաստել էր Իսրայելի կողմից քաղաքը հաղթանակով գրավելուն:

Քաջաբար պատմենք մեր հրաշագործ Աստծու պատմությունները: Չգիտենք՝ ո՛ւմ սիրտը պատրաստ կլինի Նրան ընդունելու:

Երբեք դու քեզ հարցրե՞լ ես, թե ինչու Երիքով հեթանոսական քաղաքում ապրող Ռախաբ անունով պոռնիկը իր դուռը բացեց իսրայելցի լրտեսների առջև: Եվ այն ի՞նչն էր, որ այդ կնոջը քաջություն տվեց Իսրայելի Աստծուն իր Աստվածը համարելու:

Այնպես է երևում, որ իր լսած պատմություններից նա համոզվել էր Իսրայելի Աստծու իրականության և զորության մեջ: Թեև այդ կինն ամբողջովին թաթախված էր հեթանոսության և անբարոյականության մեջ, սակայն նրա սիրտը ձգտում էր հարելու ճշմարիտ Աստծուն: Ինչպես նա ասաց լրտեսներին. «Մենք լսել ենք, թե ինչպես Տերը Կարմիր ծովը

Կողմնակից

չահողին

Կարգա՝

Կողոսացիներ 2.6-15

Իշխանություններին ու պետություններին մերկացնելով հայտնապես խայտառակեց ու նրանց հաղթեց իր մեջ:

Կող. 2.15

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եսայի 34-36

■ Կողոսացիներ 2

ապրող յուրաքանչյուր մարդու կերակրելու համար:

Աստվածաշունչը հստակորեն ընդունում է անտեսանելի, բայց իրական հոգևոր էությունների կամ ուժերի գոյությունը: Եփես. 6.11-12 համարներում Առաքյալը հայտարարում է, որ մեր պատերազմն ընդհանրապես «չար ոգիների» դեմ է՝ ըմբոստացած հրեշտակների, որոնց ղեկավարը Սատանան է: Վատ լուրն այն է, որ նրանք շատ ավելի իմաստուն են և ուժեղ, քան մենք: Սակայն բարի լուրն էլ այն է, որ Քրիստոսը պարտություն է մատնել նրանց Իր խաչի մահով և հարությունով: «Իշխանություններին և պետություններին մերկացնելով հայտնապես խայտառակեց ու նրանց հաղթեց իր մեջ» (Կող. 2.15):

Շատ բաներ մեր տիրապետությունից դուրս են մնում, բայց չվախենանք: Երբ վստահում ենք Հիսուսին, միշտ շահողի կողմնակիցն ենք:

Մամոնան կարող է առանձին ճակատամարտերում հաղթել, բայց նա չի կարող շահել պատերազմը:

Ոմանք այսօր տակավին հավատում են հեթանոսական այն գաղափարին, թե աշխարհը գտնվում է իրար դեմ կռվող չաստվածների տիրապետություն տակ, որոնցից են Արտեմիսը, Պանը կամ Ապոլոնը: Եվ դեռ կասկածամիտներ կան, որ հավատում են թե կան ներքին անձանոթ «ուժեր», որոնք դուրս են մեր ղեկավարությունից: Նմանները, աշխարհի ամեն կողմում կատարվող վայրագությունները զսպելու մեր անկարողությունը վերադրում են «միջազգային ուժերին», որոնք մարդու իշխանությունից դուրս են: Օրինակ, միլիոնավոր մարդիկ սովի են մատնված՝ հակառակ այն իրողության, որ աշխարհում հարկ եղածից ավելի կերակուր կա երկրագնդի վրա

ԻՆՆՈՒ ԵՆՔ ԽԱԼԻՍ

Կարդա՛
Մատթեոս 6.1-4

**Բայց դու երբ
ողորմություն անես,
թող քո ձախ ձեռքը
չիմանա, թե քո աջն
ի՛նչ է անում:**

Մատթ. 6.3

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եսայի 37-38
■ Կողոսացիներ 3

մարդկանցով, որոնք ջանում են լավագույնն անել իրենց ունեցած բարեգործական գումարներով»,- ասում է նույն հեղինակը: Անկասկած, մի շարք մարդկանց համար էլ գոյություն ունի «մի քիչ՝ քեզ, մի քիչ՝ ինձ» տալու մոտեցումը:

Հիսուսն էլ նյութ դարձրեց մարդկանց՝ տալու շարժառիթը, երբ ասաց, որ մեր ձախ ձեռքը չպիտի իմանա մեր աջ ձեռքի արածը: Հիսուսն ուզում էր ասել, որ Աստծու կամ մեր նմանների տալու նպատակը պետք լինի մաքուր և անշահախնդիր: Տալը պետք է Աստծու սիրո արտահայտությունը լինի: Մաքուր շարժառիթով տալը քաջալերելու համար Հիսուսը պատվիրեց տալ և բարեգործություններ անել գաղտնաբար, առանց փառաբանություն փնտրելու: Աստված, որ տեսնում է, վարձահատույց պիտի լինի (Մատթ. 6.3-4): Մեր առատաձեռնությունը պետք է աստվածակենտրոն լինի, այլ ոչ թե ցուցադրական:

Ի՛նչ էլ լինի մարդկանց կարծիքը «Տալ՝ հանուն տալու» տեսակետի մասին, մի լրագրող գրում է. «Որքան ավելի մոտիկից ենք նայում բարեսիրական նպատակների համար տրվող նվերներին, այնքան ավելի պակաս բարեսիրական են թվում դրանք»: Դռնեղուռ կատարված մի հանգանակություն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բարեգործական կազմակերպությունները ավելի շատ դրամ են հավաքում վիճակախաղի տոմսեր վաճառելով, քան նվիրատվություն ուզելով:

«Այս իրողությունները մեկնաբանելով՝ դժվար է ասել, թե սա մի աշխարհ է՝ բնակեցված այլասեր

Աստված տեսնում է տվողին, ինչպես նաև նվերը:
Սիրտը, ինչպես նաև ձեռքը:

Որբեր և այրիներ

Կարգա՛
Մաղաքիա 3.1-6

**....որբերին և
այրիներին նրանց
նեղության ժամանակ
այցելել.....:**

Հակ. 1.27

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եսայի 39-40
■ Կողոսացիներ 4

որբերի և այրիների համար: Մաղաքիա մարգարեն ասում է, որ Աստված պիտի դատի բոլոր նրանց, ովքեր Աստծուց վախ չունեն և շահագործում են այրիներին ու որբերին (Մաղ. 3.5):

Որպես հավատացյալներ, փոխանակ տկարներին շահագործելու, պարտավոր ենք օգնել բոլոր նրանց, ում մասին հոգում է Աստված: Պետք է առիթներ փնտրենք՝ նյութական ու բարոյական օգնություն ցույց տալու բոլոր նրանց, ովքեր կորցրել են իրենց կենակցին կամ որբ են մնացել՝ զրկվելով ծնողական հոգածությունից: Ճանաչո՞ւմ ես մի այրու, որն օգնությունը կարիքն ունի: Ճանաչո՞ւմ ես մի որբի կամ մի մանկան, որը ծնողական հոգածությունից զրկվել է մահվան, ամուսնալուծության, զինվորական ծառայության կամ լքվածության պատճառով: Փորձի՛ր սեր և հոգածություն ցույց տալ նրանց: Առաքյալը պատվիրում է «որբերին և այրիներին նրանց նեղության ժամանակ այցելել» (Հակ. 1.27):

Գործատեղ հասնելու համար 25 րոպե ճանապարհ պիտի քշեմ և ժամանակա անցկացնելու համար սովորությունն եմ դարձրել տեսաժապավենով գրքեր ընթերցել: Վերջերս այդ կերպ կարդում էի Չարլզ Դիկկենսի դասական վեպը՝ «Օլիվեր Թվիստի արկածները»: Պատմության մի կետում զգացի, որ պետք է կանգնեցնեմ ժապավենը, որովհետև շատ տխուր հատվածի էի հասել: Թեև գիտեի, որ գիրքը լավ վերջաբան ունի, սակայն ինձ շատ նեղեց աղքատ որբի հանդեպ անգույժ վերաբերմունքը:

Աստված հոգ է տանում զժվար կացություն մեջ գտնվող աղքատի մասին և իր սրտում հատուկ տեղ ունի

Որքան ավելի աճենք Քրիստոսի սիրո մեջ, այնքան ավելի այդ սերը կհորդի մեզնից դուրս:

Պայքար վախի դեմ

Կարդա՛
Եբրայեցիներ 2.9-18

**Եթե նույնիսկ
անցնեմ մահվան
սովերների միջով,
չեմ վախենա չարից,
քանզի դու, Տե՛ր, ինձ
հետ ես:**

Սաղմ. 22.5

Աստվածաշունչը
մեկ տարում

- Եսայի 41-42
- Ա թեսաղոնիկեցիներ 1

սարսափազդու խուճապ:

Բայց երբեք կարիք չկա խուճապի մատնվելու, նույնիսկ մահվան առաջ: Մեր Տեր Հիսուսն էլ հանդիպեց մահվանը և հաղթահարեց այն: Եբրայեցիների գրքի հեղինակն ասում է, թե մարդանալով «Հրեշտակներից մի քիչ ցածրացած տեսնում ենք Հիսուսին..., որպեսզի Աստծու շնորհով բոլորի համար մահը ճաշակի» (Եբր. 2.9): Իր մահով Քրիստոսը պարտության մատնեց մահը, «որպեսզի իր մահով խափանի մահվան իշխանությունն ունեցողին, այսինքն՝ սատանային, և ազատի նրանց, ովքեր մահվան ահից իրենց ամբողջ կյանքում ծառայություն մեջ էին բռնված» (Եբր. 2.14-15):

Դու է՞լ ես դարձել վախերիդ զոհը: Հիշի՛ր Աստվածաշնչի՝ սարսափ վանող խոսքերը. «Դու մի՛ վախեցիր, քանզի ես քեզ հետ եմ, մի՛ խաբվիր, քանզի ես եմ քո Աստվածը, ես, որ զորացրի քեզ, օգնեցի քեզ ու պահպանեցի քեզ իմ արդար աջով» (Ես. 41.10):

Եթե հավատաս, որ Քրիստոսն ապրում է, հարկ չունես մահվանից վախենալու:

Մարդաբան հեղինակ էռնեստ Բեյքըրն իր «Մահվան ուրացումը» գրքում ասում է, որ մեր բոլոր մտահոգություններն ու վախերը արմատացած են մահվան սոսկումի մեջ: Թեև Բեյքըրը Հիսուսի հետևորդ չէ, սակայն նրա գիտական ուսումնասիրությունը կարող է շատ լավ մեկնաբանություն դառնալ Եբրայեցիների 2-րդ գլխի համար, որն ասում է, որ մեր բնական կեցվածքով մեր ամբողջ կյանքի ընթացքում մենք ենթակա ենք մահվան վախին (Եբր. 2.15):

Բոլորս էլ որոշ բաներ գիտենք վախի մասին: Ակնհայտ է, որ Աստվածաշնչում հանդիպող բոլոր տղամարդիկ և կանայք ենթակա էին վախի՝ պարզ մտահոգությունից մինչև

Դեմ առ դեմ

Կարդա՛
Եսայի 6.1-10

**....տեսա Տիրոջը, որ
նստած էր բարձր ու
վերացած աթոռին:**
Եսայի 6.1

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եսայի 43-44
■ Ա Թեսաղոնիկեցիներ 2

վան տարին» (Ես. 6.1): Նրան վիճակվեց տեսնել այնքան փառահեղ ու սարսափազդու մի բան, որը հնարավոր չէ համեմատել որևէ այլ բանի հետ: Նա դեմառդեմ հանդիպեց Աստծուն:

Աստված մարգարեին տեսիլքով ցույց տվեց, թե ո՛վ է Ինքը: Այն, ինչ տեսնում է մարգարեն, խորապես ազդում է նրա վրա: Նա տեսնում է Աստծու փառքը: Նա ավելի լավ է հասկանում Աստծու սրբությունը: Այդ հանդիպմամբ մարգարեն գիտակցում է իր մեղավորությունը և այն հակադրում Աստծու սրբությանն ու կատարելությանը: Այդ պահին նա լսում է Աստծու կոչը՝ ծառայելու Իրեն, և պատասխանում է Նրան:

Այսօր ևս կարող ենք տեսնել Աստծուն Իր Խոսքի մեջ և Սուրբ Հոգու՝ մեր մեջ գործելու միջոցով: Կարող ենք հաղորդակցվել Նրա հետ աղոթքով: Սակայն մի օր երկնքում ենք տեսնելու մեր Տիրոջը՝ դեմ առ դեմ (Ա Հովհ. 3.2)՝ Իր փառքի մեջ:

Նշանավոր մարդկանց հետ դեմ առ դեմ գտնվելիս մարդ երբեմն ասես հեղձ է լինում: Որպես մարզական լրագրող՝ պատահել է, որ հարցազրույց եմ ունեցել բասկետբոլի փայլուն աստղերից Դեյվիդ Ռոբինսոնի և էյվլըրի Ջոնսոնի հետ: Հանդիպել եմ նաև բասկետբոլի նախկին մարզիչ և մարզական ավտոմեքենաների տեր Ջոյ Գիբսի հետ:

Մարդ միանգամից իրեն թույլ ու անզոր է զգում, երբ խոսում է սովորական մարդկանց գերազանցող նման անձանց հետ: Ակնածուս ենք նրանցից և մեզ զգում անկարևոր:

Սակայն այդ բոլորը ոչինչ են, եթե համեմատելու լինենք Եսայի մարգարեի տեսած «Օգիա թագավորի մահվան տարին» (Ես. 6.1):

Աստծու ակնածանքի ներկայության մեջ լինելը թե՛ դատապարտելի է և թե՛ մխիթարող:

Թանկ նվեր

Կարդա՛
Հուսմեացիներ 3.21-26

Որովհետև մեզքի վարձը մահ է, իսկ Աստուծո՛ւ շնորհը՝ հավիտենական կյանք, մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով:
Հոռմ. 6.23

Աստվածաշունչը
մեկ տարում

- Եսայի 45-46
- Ա թեսաղոնիկեցիներ 3

«Ռոլեքս» մականիշի ժամացույցը ներկայումս համարվում է լավագույն նվեր: Շատերն են ուզում ունենալ դրանից: Դրա համար էլ արտասահման մեկնած ընկերներիցս մեկը իր զավակներին գնեց մեկական այդպիսի ժամացույց՝ որպես հիշատակ:

Հիշատակի նվե՞ր: Այո՛: Սակայն իր գնած ժամացույցները կեղծ էին և մեծ հեշտուլթյամբ էին վաճառվում զբոսաշրջիկներին, որովհետև էժան էին: Բարեկամիս գնածները մի քիչ էին տարբեր ժամագործների մոտ եղածներից: Կեղծվածների վաճառանիշը միայն մի նիշով էր տարբերվում իսկականներից:

Շատ քիչ բաներ կան, որոնք արժեք ունեն, բայց և էժան են: Ավելի քիչ բաներ բոլորովին ձրի են: Սակայն փրկուլթյունը՝ ամենակարևոր նվերը, ձրի է: Ո՛չ կեղծ «Ռոլեքս» ժամացույցի պես. փրկուլթյունը հավիտենական արժեք ունի: Այն ձրի է, որովհետև, ինչպես մի երգի բառերն են ասում, «Հիսուսը վճարել է ամեն ինչի գինը»: Ոչ ոք չի կարող շահել իր փրկուլթյունը (Եփես. 2.8-9): Մեզ պետք է միայն հավատալ և ընդունել հավիտենական կյանքի պարգևը, որ Աստված է մեզ տալիս (Հոռմ. 6.23):

Մի հեղինակ ասում է, որ մշտատև ճշմարտուլթյուն է, որ թեև փրկուլթյունը ձրի է, բայց նրա համար շատ թանկ գին է վճարված. «Թողուլթյուն գտնելը, որ այնքան դյուրին է ընդունել, արժեցել է Գողգոթայի տառապանքը»:

Որևէ մեկը, ով ուրիշ բան է ուսուցանում այդ ուղղուլթյամբ, ժխտած կլինի ճշմարտուլթյունը:

Մեր փրկուլթյունը անասհմանորեն թանկ է Աստծու մոտ, սակայն բացարձակապես ձրի է մեզ համար:

Ժամանակին ասված

խոսքը

Կարգա՝

Եփեսացիներ 4.17-32

Մարդը ուրախանում

է բերանի

պատասխանով.

որքան՝ գեղեցիկ է

ժամանակին ասված

խոսքը:

Առակ. 15.23

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եսայի 47-49

■ Ա Թեսաղոնիկեցիներ 4

չատ տեղին և օգտակար էր վերջինիս թելադրածը: Այդ օտար մարդու մի դիտողությունն օգնում է գոլֆի մարզիկին՝ չահելու առաջնության գավաթը:

Բառերն էլ այդպիսի մեծ գորություն ունեն: Նրանք գործիքներ են թե՛ լավը, թե՛ վատը անելու: Մենք կարող ենք բառերը գործածել որպես քանդելու միջոց ու նաև՝ կառուցելու և քաջալերելու: Այս ճամարությունը նկատի ունենալով՝ Սողոմոն Իմաստունն ասում է. «Մարդը ուրախանում է բերանի պատասխանով. որքան՝ գեղեցիկ է ժամանակին ասված խոսքը» (Առակներ 15.23):

Աշխարհում, որտեղ ապրում ենք, բառերը հաճախ գործածվում են որպես զենքեր: Մենք՝ որպես հավատացյալներ, կոչ ունենք մեր Տեր Հիսուս Քրիստոսից, որ մեր բառերը միշտ գործածենք կոտրված հոգիները կառուցելու համար:

Անգլիայի Լիվերպոլ քաղաքում 2006 թվականի նախօրեին պետք է բացվեր գոլֆի առաջնության մրցաշարը: Նշանավոր խաղացողներից մեկը իրեն այնքան էլ պատրաստ չէր զգում: Դեռ բավականին մարզումներ պետք է աներ՝ իրեն լավ մարզավիճակում զգալու համար: Մի երեկո, երբ դուրս էր եկել, նրան է մոտենում մի անծանոթ, որ գոլֆի սիրահար էր և ծանոթ այդ նշանավոր մարզիկի խաղաոճին: Նա մի որոշակի դիտողություն է անում մարզիկին և պատվիրում հետևել իր ասածին: Երբ մարզիկը նկատի է առնում այդ դիտողությունը և հետևում անծանոթի խորհրդին, տեսնում է, որ իսկապես

**Նախազգուշացում
և պատասխան**

Կարգա՛

Ա Թեսաղ. 5.1-11

**Ապա ուրիշների պես
չքնենք, այլ արթուն
և զգաստ լինենք:**

Ա Թես. 5.6

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եսայի 50-52

■ Ա Թեսաղոնիկեցիներ 5

2006-ի հոկտեմբերին, երբ Հարվածեց Կոլորադոյի Սփրինգս քաղաքին, նրա բնակիչներն արդեն նախազգուշացված էին օդերևութաբանների կողմից, որոնք դեռ 36 ժամ առաջ գիտեին մոտալուտ փոթորկի մասին: Մի արևոտ և տաք կեսօրից հետո բնակիչները «գրոհել» էին մթերային խանութները՝ իրենց կարիքներն ապահովելու համար: Ձյունը դեռ չսկսված՝ դպրոցներն ու գործատեղերը տեղեկացրել էին, որ այդ օրը փակ էին լինելու: Ձյունամրրիկով փոթորիկն ուղեկցվեց սառնամանիքով, սակայն քաղաքի բնակիչների մեծ մասն ապահով էր իր տան մեջ, որովհետև մարդիկ ո՛չ դպրոց,

ո՛չ էլ աշխատանքի էին գնացել:

Երբ հավատում ենք որևէ ազդարարության, դա փոխում է մեր վերաբերմունքը: Դա ճշմարտացի է կյանքի բոլոր ասպարեզներում, ներառյալ մեր հավատքի ընթացքը: Առաքյալը Թեսաղոնիկեի հավատացյալներին հիշեցնում է, որ Տիրոջ օրը պիտի գա անակնկալ՝ գողի պես, գիշերվա մի ժամի (Ա Թես. 5.12): Նա կոչ է անում հավատացյալներին խուսափել հոգևոր քննադատությունից և արթուն լինել՝ գործի լծվելու համար (Ա Թես. 5.6):

Պողոս Առաքյալի մարտահրավերը արձագանքն է Հիսուսի այն խոսքի, որով Նա կոչ էր անում իրեն հետևողներին արթուն և պատրաստ լինել. «Պատրա՛ստ կացեք, որովհետև Մարդու Որդին այն ժամին կգա, երբ դուք չեք սպասում» (Մատթ. 24.44): Մենք արթուն և պատրա՛ստ ենք Հիսուսի՝ արթուն և պատրաստ լինելու կոչին:

Յուրաքանչյուր հավատացյալ պետք է ակնկալող լինի, վերև նայող, այլ ոչ թե ներքև:

**ԵՐԲ ԶԳԻՏԵՆՔ՝ ԻՆՋ
ԱՆԵԼ**

Կարգա՛
Հոբ 6.1-14

**Մերձավորը չնայեց
երբեք ինձ. նվազած
առվի պես, ալիքի
պես անցան իմ
կողքով:**

Հոբ 6.14

Աստվածաշունչը
մեկ տարում

- Եսայի 53-55
- Բ Թեսաղոնիկեցիներ 2

լացեցին, քանի որ նա խոր վշտի մեջ էր (Հոբ 2. 11-13): «Նրանցից ոչ ոք մի բան չխոսեց հետը, որովհետև տեսնում էին նրան հասած սաստիկ մեծ հարվածները» (Հոբ 2. 13): Նրանց միայն ներկայությունը մխիթարություն էր Հոբի համար:

Սակայն դրանից հետո նրանք սկսեցին «խրատել»: Նրանք Հոբին ասացին, որ նա անպատճառ ինչ-որ մեղք է գործել, և Աստված ուզում է պատժել նրան (Հոբ 4.7-9):

Երբ վերջապես Հոբը կարողացավ պատասխանել իր բարեկամներին, ասաց, թե ի՛նչ էր ակնկալում նրանցից: Նա խնդրեց բարեկամներին, որ շարունակեն հուսալ (Հոբ 6.11) և բարյացակամ վերաբերմունք ցույց տալ (Հոբ 6.14), և իրենց խոսքերով հանցանքի գիտակցություն ենթադրել չտան:

Հոբի և նրա բարեկամների պատմությունը հիշելը կարող է մեզ օգնել այնպիսի հանգամանքներում, երբ չգիտենք՝ ի՛նչ անել:

Երբ մեկը վշտի մեջ է, նախընտրելի է լուռ մնալ, քան խոսել:

Մի պատանի և հայրը դուրս եկան մեռելատնից և նստեցին իրենց ավտոմեքենան: Մի քանի րոպե լուռ մնալուց հետո հայրն իր ձեռքերի մեջ առավ տղայի գլուխը՝ իր վշտակցությունը հայտնելու: Պատանին չիմացավ՝ ի՛նչ պատասխանել և շփոթված ասաց. «Չգիտեմ, հայրի՛կ, թե ի՛նչ պիտի ասեմ»:

Նրանց բարեկամներից մեկը ավտովթարի էր ենթարկվել: Ինքը փրկվել էր, բայց նրա երեք դուստրերը մահացել էին: Ի՞նչ կարող էին ասել իրենց բարեկամին նման պարագայում:

Աստվածաշնչում կարգում ենք, որ Հոբի երեք բարեկամներ եկան՝ նրան ցավակցելու և մխիթարելու: Առաջին յոթ օրը նրանք նստեցին Հոբի հետ և

Մեծ Բժիշկը

Կարդա՛
Հովհաննես 9.1-7

**Նա մեր
Հիվանդությունները
վերցրեց ու մեր
ցավերը կրեց:**
Մատթ. 8.17

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եսայի 56-58
■ Բ Թեսաղոնիկեցիներ 2

դում էր Ավետարանը, Հիսուսի գթոտ և կարեկցող դեմքի վրա տեսնում էր Հայր Աստծու դեմքը: Շատերն են մաքառում Աստծու հանդեպ իրենց ունեցած խոհերի հետ, հատկապես Հիվանդության պարագայում: Գուցե մենք մեծացել ենք մի եկեղեցում, որտեղ մեզ ներկայացված է մի բարկացկոտ Աստված, որը կարող է Հիվանդություններ ուղարկել մեզ: Կարո՞ղ ենք վստահել Նրան: Անկասկած՝ այո՛, եթե մենք էլ մեր ուշադրությունը կենտրոնացնենք Ավետարանի վրա: Այնտեղ կհանդիպենք Նրա Որդուն՝ Տեր Հիսուսին, որը կարեկցեց բոլոր նրանց, ովքեր ցավի մեջ էին՝ անկախ նրանից, թե ի՛նչ պատճառներով: Արդ, Ջոն Դանի պես աղոթենք. «Ո՛վ Աստված, փրկի՛ր ինձ անիմաստ երևակայությունից», այսինքն այն համոզմունքից, թե պատժված և Աստծու բարությունից ու ողորմությունից զրկված ենք մեր մեղքի պատճառով: Մեծ Բժշկապետը գիտե մեր բնական տկարությունները, որովհետև Նա շատ թանկ գին է վճարել այդ ամենի համար:

Անգլիացի բանաստեղծ և հանրահայտ հոգևորական Ջոն Դանը (1572-1631), խոսելով իր առողջության վատթարացման մասին, նկարագրում է իր զգացումները, մինչ բժիշկները քննում էին իրեն՝ իր լուրջ հիվանդության արմատներն ու պատճառը գտնելու համար: Նրանք իրենց եզրակացություն մասին խոսում էին ցածրաձայն, սենյակից դուրս գալով:

Սկզբում Դանը վախենում էր: Բայց ժամանակի ընթացքում, կարեկցություն նկատելով բժիշկների դեմքերին, սկսում է ավելի վստահել նրանց: Նրանց մտահոգությունը Դանին հիշեցնում է, որ ինքը կարող է վստահել նաև Մեծ Բժշկապետին: Եվ երբ կար-

Քրիստոսի խաչը գերագույն վկայությունն է Աստծու անսակարկ սիրո:

Վազել ոչնչի

Համար

Կարգա՝

Հոտմեացիներ 4:1-17

Եվ էլ ուրիշ ոչ մեկով
փրկութիւն չկա, որով-
հետև երկնքի ներքո
մարդկանց տրված ու-
րիշ անուն էլ չկա, որով
հնարավոր լինի մեզ
փրկել: Գործք 4:12

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եսայի 59-61

■ Բ Թեսաղոնիկեցիներ 3

տած լինե՞ր ճիշտ ժամանակին, նրա արդյունքը հաշվի չէր
առնվելու: Վազքը կազմակերպողները կանոններ են սահմա-
նել, և եթե այդ կանոնները չեն հարգվել, ուրեմն կարևոր չէ,
թե որքան լավ է վազում որևէ մեկը. նրա վազքը վավերական
չի համարվում, և վազորդը դուրս է մնում մրցութունից:

Քրիստոնեական հավատքի մեր կյանքն էլ դրա նման մի
բան է. ըստ մեզ՝ կարող ենք վազել մի լավ մրցավազքում՝
հաջող գործեր կատարելով և շատ օրենքներ հարգելով: Սա-
կայն երբ հասնենք քննության վերջին կայանին՝ երկինք, և
ապահոված չլինենք մեր անվան արձանագրումը Գառնուկի
Կյանքի Գրքում՝ մեր հավատքը դնելով Հիսուսի վրա՝ որ-
պես մեր Փրկչի, արժանի չենք համարվի ներս մտնելու:

Հիսուսն ասաց. «Ես եմ ճանապարհը, ճամարտութունն
ու կյանքը. ոչ ոք Հոր մոտ չի գալիս, եթե ոչ ինձանով»
(Հովհ. 14:6):

**Բարեկամներիցս մեկը մաս-
նակցեց 2006-ի Զիկագոյի**
մարաթոնյան վազքին: Նոր էր
վազքն սկսել, երբ գետնին մի բան
նշմարեց: Վազողներից մեկի ժամա-
ցույցն էր՝ վազքի տարածութունը,
կայանները և արագութունը չա-
փող, որ ամեն վազորդ կապած է լի-
նում իր կոշիկին: Այդ ժամացույցի
տերը պիտի կտրեր 26,2 մղոն ճանա-
պարհ և սակայն ոչինչ չպիտի ունե-
նար՝ ճամարտութունը վկայող կամ
հաստատող:

Ըստ օրենքի, այդ վազորդի վազքը
կատարված չէր, որովհետև իր մաս-
նակցութունը հաստատող արձա-
նագրութուն չունե՞ր ներկայացնելու:

Նույնիսկ եթե նա իր վազքն ավար-
տած լինե՞ր ճիշտ ժամանակին, նրա արդյունքը հաշվի չէր
առնվելու: Վազքը կազմակերպողները կանոններ են սահմա-
նել, և եթե այդ կանոնները չեն հարգվել, ուրեմն կարևոր չէ,
թե որքան լավ է վազում որևէ մեկը. նրա վազքը վավերական
չի համարվում, և վազորդը դուրս է մնում մրցութունից:

Եթե մենք կարողանայինք վաստակել մեր փրկությունը,
Հիսուսը չպիտի մեռնե՞ր՝ այն մեզ ապահովելու համար:

Ի՞նչն է ճիշտ

Կարդա՛
Եսայի 1.11-18

...վերջ տվեք ձեր չարագործություններին: Սովորեցեք բարի՛ք գործել, արդարությո՛ւն փնտրեցեք, փրկեցե՛ք զրկվածին: Եսայի 1.16-17

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եսայի 62-64

■ Ա Տիմոթեոս 1

սխալ, սակայն նրանցից շատերը չգիտեն, թե ինչն է ճիշտ:

Նման բաներ երբեմն պատահում են նաև մեր ընտանիքներում: Ընտանիքում, եկեղեցում կամ գործատեղում ինչ-որ բան չի ստացվում կամ բարեփոխվում, որովհետև մենք կենտրոնանում ենք այն բանի վրա, ինչը սխալ է: Մասնագետի կարիք չկա՝ սխալը հասկանալու համար, երբ մարդիկ կռվում են կամ իրար վիրավորում անպարկեշտ խոսքերով ու վարմունքով: Սակայն, անկասկած, մասնագետ է պետք՝ հարցը լուծելու համար:

Աստված Հին Կտակարանի մարգարեներին ոչ միայն մատնացույց արեց սխալը, այլև ցույց տվեց, թե ի՞նչն է ճիշտ. «Վերջ տվեք ձեր չարագործություններին, սովորեցե՛ք բարիք գործել, արդարությո՛ւն փնտրեցեք, փրկեցե՛ք զրկվածին, արդարադա՛տ եղեք որբի հանդեպ, իրավո՛ւնք տվեք այրուն» (Եսայի 1.16-17):

Սխալի վրա կենտրոնանալու փոխարեն ավելի լավ է՝ վստահենք Հիսուսին, որը գիտե, թե ի՞նչն է ճիշտ:

Մի առավոտ համակարգիչս ինձ ողջունեց «մեռյալ կապույտ էկրանով», ինչը նշանակում էր, որ մի բան խափանվել է: Չգիտեի՝ ինչպե՛ս կարգավորել: Մի քիչ կարգացի համակարգչի ձեռնարկը, փորձեցի ինչ-որ բան անել, բայց ի վերջո հասկացա, որ պետք է մասնագետի կանչել՝ խնդիրը վերացնելու համար: Որևէ բանի սխալ լինելը հասկանալը հարցի մի փոքր մասն է միայն: Ես չկարողացա կարգավորել համակարգիչս, որովհետև չգիտեի, թե որտե՛ղ է սխալը, և ինչպե՛ս է պետք ուղղել այն:

Այս դեպքն ինձ հիշեցրեց որոշ հեռուստահաղորդումներ, որոնց ընթացքում մի շարք «հմուտ մասնագետներ» բացատրում են, թե ինչն է

Աստված կողմնացույցի պես միշտ ճիշտ ուղղությունն է ցույց տալիս քեզ:

**Տուփը և
գոհարեղենը**

Կարգա՝

Հոոմեացիներ 2.17-24

**Բայց այս գանձն ու-
նենք հողե անոթնե-
րում, որպեսզի զորու-
թյան գերազանցու-
թյունն Աստծունը լի-
նի և ոչ թե մեզանից:**

Բ Կորնթ. 4.7

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եսայի 65-66

■ Ա Տիմոթեոս 2

վերջինս անկեղծորեն ասում է. «Երանի կարողանայի Հիանալ տուփով այնքան, որքան Հիանում եմ նրա մեջ գտնվող գոհարեղենով»: Գլադսթոնը հավատացյալներին անհանգստացնող համեմատություն է անում Ավետարանի «գոհարի» և եկեղեցու «տուփի» միջև: Ինչքա՛ն մարդ է հաճախ մերժում Ավետարանի Բարի Լուրը եկեղեցու հավատացյալների մոլեռանդ վկայության պատճառով: Արդյոք անգիտակցաբար երբեմն վանող և տհաճ չէ՞ մեր կեցվածքը եկեղեցում, մանավանդ նորեկների հանդեպ: Ինչպե՞ս կարող ենք լինել «կույրերի առաջնորդ և խավարի մեջ գտնվողների լույս» (Հոոմ. 2.19), եթե Քրիստոսի գեղեցկությունը չհայտնվի մեր վերաբերմունքի մեջ:

Հնարավոր ամեն միջոցով քարոզենք Ավետարանը: Սակայն ազոթենք, որ Սուրբ Հոգին մեզ անձնապես ավելի գրավիչ և սիրալիր դարձնի, զերծ ամեն մեղքից, որպեսզի կարողանանք հրապուրել մարդկանց՝ դեպի Քրիստոս գալու:

Մեր սրտի մաքրությունն ու գեղեցկությունն արտացոլվում են մեր նկարագրի և դեմքի վրա:

Կանադացի Հոգևոր Հովիվ Ջոն Գլադսթոնը պատմում է մի շատ հետաքրքիր, բայց միաժամանակ տխուր դեպք Իսահակ Վաթսի կյանքից: Անգլիացի հայտնի երգահան Իսահակ Վաթսը սիրահարվում է էլիզաբեթ Սինգլըր անունով մի երիտասարդ աղջկա: Էլիզաբեթը հիացած է լինում երգահանի բանաստեղծական արվեստով, մտքով և հոգով, սակայն չնայած այդ հիացումին՝ չի կարողանում հաղթահարել այն նողկանքը, որ զգում էր նրա արտաքինի հանդեպ:

Իսահակը կարճահասակ էր և փոքրակազմ, փոքր ու գորշ աչքերով, կեռ քթով և մեծ այտուկներով: Երբ նա խնդրում է Էլիզաբեթի ձեռքը,

Շարունակի՛ր

ուրախ լինել

Կարգա՛

Սաղմոս 125

**Ուրախ սիրտը առող-
ջարար է. հոգսերի
մեջ ընկած մարդու
ոսկորները ցամաքում
են:**

Առակ. 17.22

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Երեմիա 1-2

■ Ա Տիմոթեոս 3

րելակերպի մաս է կազմում, ինչպես ուտելը, խմելը և շնչելը», -ասում է նա: Նա համոզված է, որ բարձրաձայն ծիծաղով արտահայտված ուրախ սիրտը շատ կարևոր է իր առողջությունը և երկարակեցություն համար:

Ուրախ սիրտը նպաստավոր է մեր հոգեկան և ֆիզիկական առողջության համար: Առաքյալն ասում է. «Ուրախ սիրտը առողջարար է» (Առ. 17.22): Սակայն կա մեր մեջ ավելի խորը տեղ գտած մի ուրախություն, որը գալիս է Տիրոջ նկատմամբ մեր ունեցած վստահությունից, այլ ոչ թե արտաքին միջավայրի պայմաններից: Այդ ուրախությունը հիմնված է Աստծու փրկությունը գտած հավատքի վրա, որը մեզ ապահովում է մեղքերի թողություն և վերահաստատում է մեր հարաբերությունը Աստծու հետ՝ Իր Որդու՝ Քրիստոսի միջոցով (Սաղմ. 125.2-3, Ամբ. 3.17-18, Փիլիպ. 4.7): Դու կարող ես այսօր ունենալ Քրիստոսին ճանաչելու այդ մնայուն ուրախությունը:

Ուրախությունը գալիս է Տիրոջից, որն ապրում է մեր մեջ, այլ ոչ թե մեր շուրջը կատարվող բաներից:

Գերմանիայում մի դատավոր ստիպում է մի մարդու, որ դադարեցնի անտառում բարձրաձայն ծիծաղելը: Այդ անձի դեմ դատական գործ են հարուցում նրանք, ովքեր նրա հետ վազում էին անտառում: Նրանք բողոքում են, որ այդ մարդու ծիծաղը խանգարում է իրենց մարզավազքին, որովհետև նա ծիծաղում է ականջ խլացնելու չափ բարձր: Դատարանի որոշմամբ նա կդատապարտվեր վեց ամսվա բանտարկություն, եթե մեկ անգամ ևս բռնվեր իր այդ քրքջոցով: 54-ամյա այդ մարդն ասում է, որ ինքը գրեթե ամեն օր անտառ է գնում ծիծաղելու համար, որպեսզի ձերբազատվի հոգեկան ճնշումից: «Ծիծաղելն իմ ապրելակերպի մաս է կազմում, ինչպես ուտելը, խմելը և շնչելը», -ասում է նա: Նա համոզված է, որ բարձրաձայն ծիծաղով արտահայտված ուրախ սիրտը շատ կարևոր է իր առողջությունը և երկարակեցություն համար:

Վառի՛ր լույսերը

Կարգա՛
Մատթեոս 5.13-20

**Դուք աշխարհի
լույսն եք. մի քաղաք,
որ սարի վրա է
կանգնած, չի կարող
թաքնվել:**

Մատթ. 5.14

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Երեմիա 3-5
■ Ա Տիմոթեոս 4

Մարդիկ հաճախ հարցնում են ինձ, թե ամենից շատ ի՛նչ եմ ակնկալում Մուզի Աստվածաշնչյան Հաստատությունից: Անշուշտ, հարցնողները աշակերտներս են: Ես սիրում եմ նրանց եռանդն առ Քրիստոս և այն ձևը, որով նրանք փորձում են Նրան ներկայացնել իրենց շուրջը գտնվող մարդկանց: Ոչ հավատացյալ մարդիկ հաճախ են ինձ պատմում մեր աշակերտների բարոյապես օրինակելի կյանքի մասին: Չիկագոյի ոստիկանությունից հսկիչը մի անգամ ինձ ասաց. «Երբ Մուզիի աշակերտները վերադառնում են դպրոց, կարծես մեկը հյուսիսային լույսերն է վառում»:

Հենց այս նկատի ունեւ Հիսուսը, երբ ասաց. «Դուք աշխարհի լույսն եք» (Մատթ. 5.14): Շատ գորավոր պատկեր է ներկայացված և՛ ազդեցիկ: Պետք է ակնհայտ և ճանաչելի տարբերություն լինի պարկեշտ քրիստոնյաների և աշխարհում տիրող մթու՞թյան միջև: Հարցը Քրիստոսի մասին մեր խոսելը չէ, այլ նրանց, ովքեր դիտում են մեզ: Թեև նրանք չեն ուզում լսել Քրիստոսի մասին, սակայն կարող ենք վստահ լինել, որ նրանք տեսնում են, թե ի՛նչ փոփոխություն է բերել Հիսուսը մեր կյանքի մեջ: Երբ Հիսուսն ասաց. «Այսպես ձեր լույսը մարդկանց առաջ թող լուսավորի, որ ձեր բարի գործերը տեսնեն» (Մատթ. 5.16), Նա ուզում էր ասել, որ մեր խոսքերից ավելի մեր կյանքով պետք է ցույց տանք մեր հավատքը: Հանուն Հիսուսի փայլելու մեր ընդունակությունը չափվում է մեր գործերով, ինչը ցույց է տալիս Նրա անխուսափելի իրականություն լինելը մեր կյանքում:

Ուրիշներին մեղքի մթությունից դուրս բերելու համար թույլ տանք, որ նրանք տեսնեն Քրիստոսին մեր մեջ:

Որպեսզի աճի

Կարդա՛
Եբրայեցիներ 12.7-11

Եվ ամեն խրատ հենց նույն պահին ուրախությունն չի թվում... սակայն հետո դրանով վարժվածներին արդար խաղաղության պտուղ է տալիս: Եբր. 12.11

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Երեմիա 6-8
■ Ա Տիմոթեոս 5

Հորեղբայրս, որն ապրում է Ֆլորիդայում, շատ էր տխրել իր թուրինջի ծառի անպտուղ լինելուց: Փորձառու մեկը նրան խորհուրդ էր տվել տախտակով մի քանի անգամ հաջորդաբար հարվածել ծառի բնին:

Երևի ինչ-որ ճշմարտություն կա ծառը պտղաբեր դարձնելու այս արտասովոր թվացող միջոցի մեջ: Մի փորձաշատ պարտիզպան ասում է. «Երբեմն պատահում է, որ ծառի ծաղիկ արտադրող կենարար նյութը արգելափակված է լինում, և ծառը չի ծաղկում: Զգուշորեն ծառաբնին հարվածելու դեպքում ծառը ցնցվում է, և կեղևը, մասամբ փափկելով, երբեմն թույլ է տալիս, որ ծաղիկները բացվեն»:

Երբ կյանքի ընթացքում երբեմն նեղություններ են պատահում, մենք էլ ենք մեզ զգում ծանրորեն զարկված: Խիստ հուսահատվում ենք և հարցնում. «Ինչո՞ւ այս բանը պատահեց ինձ հետ»: Հավանական պատճառներից մեկն այն է, որ Աստված այդ ցավով ուզում է մեր ուշադրությունը հրավիրել Իր վրա: Սաղմոս 119.71-ում կարդում ենք. «Լավ է, որ խոնարհ դարձրիր ինձ, որպեսզի քո արդարադատությունը սովորեմ»: Իսկ Եբրայեցիների 12.11-ում Առաքյալը խոսում է ուղղելու նպատակով պատժելու մասին, որը տալիս է արդարության խաղաղության պտուղը:

Արդյոք Աստված քո կյանքում էլ ցավը գործածո՞ւմ է՝ սիրով քեզ համոզելու համար, որ փոխվես: Ցավի եղանակը կարող է դյուրին չլինել, բայց եթե կարողանանք վարժվել նրան, հոգևոր նոր աճումներ կսկսվեն մեր կյանքում և կնպաստեն մեր՝ Հիսուսին նմանվելուն (Փիլիպ. 3.10):

Ցավը հավատացյալների համար կարող է հատող դանակ լինել՝ մեզ պտղաբերության պատրաստող:

Հուսալ Աստծուն

Կարգա՛
Սաղմոս 41

**Արդ, ինչո՞ւ ես
տրտում, հոգի՛ իմ...
հույսդ դի՛ր Աստծու
վրա, օրհներգի՛ր
նրան, իմ անձը
փրկողն Աստված է:**

Սաղմ. 41.6

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Երեմիա 9-11
■ Ա Տիմոթեոս 6

Շրի Լանկայի ծովափնյա շրջանն այցելության ժամանակ դժվարանում էի հավատալ, թե ծովային փոթորիկը մի քամի ամիս առաջ այստեղ քանդել էր ամեն ինչ: Ծովը հանդարտ էր ու գեղեցիկ: Շողացող արևի տակ զուլգեր էին քայլում, և մարդիկ սովորականի պես իրենց գործերին էին շտապում: Ամեն տեսակ երևույթներ փորձում էին ցույց տալ, թե կյանքն իր սովորական հունի մեջ է: Այդուհանդերձ, սակայն, մեծ աղետի ծանր ազդեցությունը տակավին այնտեղ էր՝ վերապրողների սրտերում ու մտքերում խոր տեղ գտած: Հոգեկան այդ վերքը հնարավոր չէր հեշտությունը մոռանալ:

Աղետալի վիշտ, որը մղեց սաղմոսերգուին՝ ասելու. «Գիշեր-ցերեկ իմ արցունքներով սնվեցի, քանզի ամեն օր ինձ ասում էին. «Քո Աստվածն ո՞ւր է» (Սաղմ. 41.4): Հոգեկան այդ պայքարը ավելի խորացած է թվում նրա սրտում: Մինչ շատ մարդիկ սովորականի պես գնում էին իրենց գործերին, նրա սիրտը կարոտ էր խորունկ և ամբողջական բուժման:

Երբ հավատքով համաձայնենք մեր կոտրված սրտերը հանձնել բարի և մեծ Հովվին, միայն Նա է, որ կարող է վերահաստատել մեր վստահությունն ու խաղաղությունը կյանքի հանդեպ: «Ինչո՞ւ ես տրտում, հոգի՛ իմ, կամ ինչո՞ւ ես խռովեցնում ինձ. հույսդ դի՛ր Աստծու վրա, օրհներգի՛ր նրան, իմ անձը փրկողն Աստված է» (Սաղմ. 41.6):

Հույսդ դի՛ր Աստծուն: Այս է միակ և կենսական լուծումը մեր սրտի խորքում եղած վերքերի:

Ոչ որի վիճակն անհույս չի լինի, եթե հույսը դնի Աստծու վրա:

Ուրիշներին թափ

տալ

Կարգա՛

Գործք 11.19-26

...ամենքին

Հորդորում էր, որ

Հոժար սրտով Տիրոջ

Հետ մնային:

Գործք 11.23

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Երեմիա 12-14

■ Բ Տիմոթեոս 1

է: Հովսեւր՝ աստվածավախ մի մարդ, որին Հանդիպում ենք Գործք Առաքելոցում, այդ շնորհքն ուներ: Նա իր եկամտի մի մասը վաճառում և դրամը բերում Հանձնում է իր եկեղեցուն, որպեսզի գործածեն կարոտյալների պետքերի համար: Նա ընկերակցում է միսիոներական ճամփորդութեան՝ Ավետարանը քարոզելու համար (Գործք 11.22-26, 13.1-4):

Հովսեւսին առաքյալները կոչել էին Բառնաբաս, որը նշանակում է «մխիթարութեան որդի»: Երբ Երուսաղեմի եկեղեցին իմանում է, որ Անտիոքում շատերն են Քրիստոսին ընդունում որպես իրենց Փրկչի, նրան այնտեղ են ուղարկում, «որովհետև նա բարի, Սուրբ Հոգով ու հավատով լցված մարդ էր» (Գործք 11.24): Բառնաբասը բոլորին «Հորդորում էր, որ Հոժար սրտով Տիրոջ Հետ մնային» (Գործք 11.21):

Մենք էլ կարող ենք քաջալերական մղում հաղորդել ուրիշներին Տիրոջ Հետ նրանց քայլելու ընթացքում:

Քաջալերանքի մի փոքրիկ կայծը կարող է ջանքի մեծ կրակ բոցավառել:

Երբ Ջոնը պատանի էր, հաճախ էր զբոսնում հանրային զբոսայգում, որտեղ տեսնում էր մայրերի՝ նստարաններին նստած զրուցելիս: Նրանց երեխաները կողքներին էին՝ ճոճանակի վրա, և ուզում էին, որ ինչ-որ մեկը մոտենար և օրորեր իրենց: Ջոնն ասում է. «Ես մոտենում էի և հրում նրանց ճոճանակները: Բավական էր, որ ճոճանակը շարժվեր, և երեխաները, իրենց մարմինն առաջ մղելով, ուժգնացնում էին իրենց օրորվելը: Դա է եղել իմ դերը կյանքում: Ես տեղում եմ՝ իմ կարիքն ունեցողին մեկ անգամ թափ հաղորդելու համար»:

Ուրիշներին մեր կյանքի ընթացքում քաջալերելը ազնիվ նպատակ

**Տրամադրութիւն
չունեմ**

Կարգա՝

Մատթեոս 21. 28-32

**Նա էլ պատասխանեց
ու ասաց՝ չեմ ուզում,
բայց հետո զղջաց ու
գնաց:**

Մատթ. 21.29

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Երեմիա 15-17

■ Բ Տիմոթեոս 2

Երբեւէ քեզ տանջե՞լ է չսիրածդ
գործը կատարելու պարտա-
կանութիւնը, ասե՛ք՝ խոտ հնձել,
լվացք անել, տուն մաքրել կամ նույ-
նիսկ կիրակնօրյա դպրոցի դաս
պատրաստել շաբաթվա հոգնեցուցիչ
աշխատանքից հետո: Բաներ, որ ու-
զում ես հետաձգել:

Ես և տիկինս մի կարգախոս ու-
նենք, որ նման տրամադրութիւն ու-
նենայիս միշտ ասում ենք իրար. «Անե-
լու տրամադրութիւն չունեմ, բայց
պիտի անեմ դա ամեն պարագայում»:
Զգում ենք, որ թեև անելու տրամադ-
րութիւն չունենք, սակայն գիտակ-
ցում ենք մեր պատասխանատվութիւ-
նը, ինչը ստիպում է մեզ անել այն, ին-
չը մեզ այնքան էլ չի հետաքրքրում:

Հիսուսի պատմած առակներում տեսնում ենք Աստծուն
հավատալու և հնազանդվելու կարևորութիւնը:

Հիսուսը պատմեց երկու զավակների մասին, որոնց հայ-
րը խնդրել էր աշխատել այգում: Առաջինն «ասաց՝ չեմ ու-
զում, սակայն հետո զղջաց ու գնաց» (Մատթ. 21.29): Երկ-
րորդն ասաց՝ կգնամ, սակայն չհարգեց իր խոստումը: Հետո
Հիսուսը հարցրեց իր ունկնդիրներին. «Այս երկուսից ո՞րը
հոր կամքը կատարեց» (Մատթ. 21.31): Պատասխանը հստակ
էր՝ առաջինը, որ գնաց և աշխատեց:

Հիսուսի այս բացատրութիւնն ընդգծում է երկու
կարևոր սկզբունք. Աստված հետաքրքրված է մեր ունեցած
հավատքով և հնազանդութիւնամբ, այլ ոչ թե մեր բարձր տրա-
մադրութիւնամբ: Երբ փորձես պարտավորութիւններիցդ խու-
սափել, ասա. «Տրամադրութիւն չունեմ անելու», ապա
խնդրի՛ր Աստծուց, որ շնորհք տա անելու:

Հնազանդութիւնը հավատքն է՝ գործի վերածված:

**Տրամադրություն
չունենմ**

Կարգա՛

Հակոբոս 3.13-18

Բայց վերին իմաստությունը նախ և առաջ սուրբ է, հետո՝ խաղաղարար, հեզ, հլու... անկողմնակալ, անկեղծ:

Հակոբոս 3.17

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Երեմիա 18-19

■ Բ Տիմոթեոս 3

էլ կարևոր չեն թվում, սակայն կենսական է նրանց գոյությունը նաև վր միավորելու և ալեկոծությունից պաշտպանելու գործում: Անկարևոր զգալու տրամադրությունները շատ են ներկայումս, նույնիսկ հավատացյալների մեջ, և շատերն էլ վնասակար գործեր են անում՝ իրենք իրենց կարևոր զգալու համար: Հակոբոս Առաքյալն ասում է. «Ուր որ նախանձ ու կռիվ կա, այնտեղ անկարգություն ու ամեն չար բան կա» (Հակ. 3.16): Մարդիկ ապականված գեղեցկության, հարստության և ուժի տիրանալու իրենց աշխարհիկ ցանկություններով պատճառ են դառնում մեծ եկեղեցիների կործանման, իսկ մաքուր և անարատ եղողները անասան են պահում այն (Հակ. 1.27):

Որպես Աստծու եկեղեցու անդամներ՝ պետք է առողջ «մեխեր» լինենք: Երբ մաքուր ենք (Հակ. 3.17), գորավոր (Եփես. 6.10) և հաստատակամ (Ա Կոր. 15.58), Աստված պիտի գործածի մեզ՝ փոթորկի ժամանակ Իր նավը անխորտակ պահելու համար:

Մեծ բան է փոքր բաների մեջ հավատարիմ լինելը:

Վերջերս կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անխորտակելի համարվող հսկայական «Տիտանիկ» նավի խորտակման պատճառ են եղել անորակ մեխերը: Նավի կառուցման համար օգտագործված մեխերը պողպատից պատրաստելու փոխարեն շինել էին թույլ տեսակի երկաթից, ինչը պատճառ էր դարձել, որ նավը չդիմանար ու ճեղքվեր հզոր հարվածից: «Տիտանիկի» նավաբեկությունը հաստատում է մարդկանց հիմարությունը՝ գործածելու էժան նյութեր և ավելի կարևորություն տալ արտաքինին՝ անտեսելով ներքին կառույցի կանոնավորությունը: Որոշ իմաստով եկեղեցիները նման են մեծ նավերի, և շատ մարդիկ այնտեղ նման են մեխերի: Թեև առաջին հայացքից մեխերն այնքան

**Բարի
ճամփորդութուն**

Կարգա՛
Բ Տիմ. 4.1-8

**...իմ բաժանվելու
ճամանակը հասել է:**
Բ Տիմ. 4.6

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Երեմիա 20-21
■ Բ Տիմոթեոս 4

Այն նշանակում է թողնել հին աշխարհը հետևում և նայել առաջ՝ ավելի լավ մի վայրի՝ իրագործելով այն նպատակը, որի համար ստեղծված ենք: Այն ուրախ առիթ է՝ հուզվածով և սրտանց «բարի ճանապարհ» ասելու: Բոլոր ճամփորդութունները լի են անորոշությամբ, մանավանդ երբ անցնում ենք դեռևս չնավարկված ջրերով: Այնքան մահից չենք վախենում, ինչքան, ո՞վ գիտե, ի՞նչ վտանգների կարող ենք հանդիպել:

Բայց այդ ճամփորդության քարտեզը գծված է: Մեր Տերն այդ ճանապարհով անցել է մեզանից առաջ, և Նա խոստացել է վերադառնալ, որպեսզի մեզ ապահով հասցնի նախանշված տեղը: Թեև մենք անցնում ենք մահվան սուղերի ձորի միջով, սակայն Աստված միշտ մեզ հետ է ամբողջ ճանապարհին (Սաղմ. 22.4): Նրա ձեռքերը դեկի վրա են, երբ Նա մեզ առաջնորդում է մեր երկնային տունը (Հովհ. 14.1-3):

Պողոս Առաքյալի «մեկնումը»
բառը Բ Տիմ. 4.6 համարում
իմաստալից բառ է, որը նշանակում
է «ազատագրված» կամ «խարսխից
արձակված»: Առաքյալը նույն բառը
գործածում է նաև, երբ հառաչում է.
«Երկու կողմից էլ նեղ տեղն եմ՝ փա-
փագելով դուրս գալ ու Քրիստոսի
հետ լինել» (Փիլիպ. 1.23):

«Մեկնում»-ը նավային բառ է,
որը նշանակում է նավարկել՝ նավի
խարսխի պարանը քանդել և դուրս
գալ ճանապարհ: Խզել այն կապը,
որը մեզ կապում է այս աշխարհի
հետ, և ճամփա ընկնել: Այն նաև լավ
փոխաբերութուն է «մեռնել» բառի:

Քրիստոսի հավատացյալների հա-
մար մահը ոչ թե վերջ է, այլ սկիզբ:

Նրանք, ովքեր վախենում են Աստծուց, հարկ չունեն վախե-
նալու մահվանից:

Խաղաղ ճանապարհ
Կարգավ
Մարկոս 6.30-46

**Դուք առանձին
անապատ տեղ
գնացեք ու մի քիչ
հանգստացեք:**
Մարկոս 6.31

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Երեմիա 22-23
■ Տիտոս 1

Ճամփորդում Հիսուսի հետ, արդյոք դուրս գալի՞ս եմ իմ արագընթաց պատասխանատուությունների և մտահոգությունների մայրուղուց՝ ուշադրությունս Հիսուսի վրա կենտրոնացնելու՝ մի ակնթարթ, մի օր»:

Անհրաժեշտ ծառայությունն ամբողջացնելուց հետո Հիսուսն ասաց իր աշակերտներին. «Դուք առանձին անապատ տեղ գնացեք ու մի քիչ հանգստացեք» (Մարկ. 6.31): Երկարատև արձակուրդի փոխարեն նրանք կարճ նավագնացություն ունեցան Հիսուսի հետ՝ ամբոխին խառնվելուց առաջ: Նրանք վկայեցին իրենց Տիրոջ կարեկցությունը և միացան Նրան՝ հոգալու բազմություն կարիքները (Մարկ. 6.33-43): Երբ այդ երկար օրը վերջացավ, Հիսուսն աղոթքով նորոգվելու կարիք զգաց և առանձնացավ Իր Երկնավոր Հոր հետ լինելու աղոթքով:

Հոկտեմբերյան մի հետմիջօրեի 50 մղոն պիտի անցնեի՝ քաղաք հասնելու համար: Խցանված մայրուղուց դուրս գալով՝ ընտրեցի մի կողմնակի ճանապարհ: Լեռնային ճանապարհ էր, և սկսեցի դանդաղ քշել՝ հաճախ կանգ առնելով և դիտելով աշնանային գեղեցիկ բնությունը, դեղնած փայլուն տերևները: Ժամանակ շահելու տեսակետից ճամփորդությունս արդյունավետ չէր, սակայն հոգեկան բավարարություն և թարմություն տվեց ինձ:

Դրանից հետո հաճախ հարց եմ տալիս ինքս ինձ. «Որքա՞ն հաճախ եմ խաղաղ ճանապարհով

**ԵՐԿՈՒ ԹԱԳԱՎՈՐՈՒ-
ԹՅՈՒՆ**

Կարգա՛

Մատթեոս 22.15-22

**Ուրեմն կայսրինը
կայսրի՛ն տվեք, իսկ
Աստծունը՝ Աստծունն:**

Մատթ. 22.21

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Երեմիա 24-26

■ Տիտոս 2

ներից պահանջվում էր տուրք վճարել Հռոմեական կայսրու-
թյանը: Նրանք տանել էին կարողանում այդ, որովհետև հա-
վաքված գումարը գնում էր կայսրի գանձարան, նրա մի մասն
օգտագործվում էր հեթանոսական տաճարների և կայսրության
վերնախավի գեղա կյանքի համար: Ուստի նրանք հարց տվեցին
Հիսուսին, թե իրենք արդյոք որևէ քաղաքացիական պարտավո-
րություն ունե՞ն կայսրի հանդեպ: Հիսուսը հիշեցրեց, որ նրանք
երկու քաղաքացիություն ունեն: Ապրում էին երկու թագավո-
րություններում՝ կայսրի թագավորությունում (մարդկային հե-
ղինակություն) և Աստծու թագավորությունում (հոգևոր հեղի-
նակություն): Երկուսի հանդեպ էլ նրանք պատասխանատվու-
թյուն ունեին, բայց մեծագույնը Աստծունն էր (Գործք 5.28-29):

Որպես քրիստոնյաներ՝ պատվեր ունենք գործակցելու
երկրային իշխանությունների հետ: Սակայն մեր գերագույն
հնազանդությունը պիտի լինի Աստծու թագավորությանը:

Մի լրագրային հոդվածում
ասվում էր. «Ներկայիս երի-
տասարդները չունեն առաջվա երի-
տասարդության քաղաքացիական
հետաքրքրությունը: Նրանք ընտրու-
թյուններում քվեարկելը համարում
են անտրամաբանական արարք»: Եվ
ուղղակիորեն մեջ էր բերվում մի շը-
ջանավարտի խոսքը. «Ես այնքան էլ
չեմ մտածում՝ մտածելու համար, թե
ինչո՛ւ էլ չեմ մտածում»: Երբեմն խոր-
հում եմ, որ մենք էլ նույն ձևով ենք
վերաբերվում մեր քաղաքացիական
պարտավորություններին:

Հիսուսի իրատեսությունը Մատ-
թեոսի 22-րդ գլխում օգնում է հստա-
կորեն մտածելու մեր քաղաքացիական
պարտավորությունների մասին: Հրեա-

**Կորսված
աղոթքներ**

Կարգա՛
Սաղմոս 85.1-7

**Իմ նեղության օրը ես
կանչեցի քեզ, և դու
լսեցիր ինձ:**

Սաղմոս 85.7

Աստվածաշունչը
մեկ տարում

- Երեմիա 27-29
- Տիտոս 3

վիճակով: Ոմանք իրենց սրտերն էին բացել Աստծու առջև՝ օգնություն խնդրելով իրենց անմիջական հարցերի կամ ազգականների համար, որոնք ոգելից խմիչքի կամ թմրանյութի հակում ունեին: Նամակաների մի մասի հեղինակներն էլ անհավատարիմ էին եղել իրենց ամուսնական ուխտին: Մեկ ուրիշը Աստծուց խնդրում էր, որ ամուսինը՝ որպես հայր, սիրի իր զավակին: Տեղեկագիրը եզրակացնում է, թե զբանք բոլորն էլ «անպատասխան մնացած աղոթքներ էին»:

Եթե նամակագիրներն ուղղակի Աստծուն դիմեին, Նա պիտի լսած լիներ բոլորին: Սաղմոսերգուն ասում է. «Տե՛ր, ամբողջ ցանկությունս առջևդ է, և հառաչանքս չծածկվեց քեզնից» (Սաղմ. 37.10): Նա գիտեր, որ մեր բոլոր մտահոգությունները կարող ենք Աստծուն հանձնել, եթե նույնիսկ ոչ ոք չի լսում մեզ. «Իմ նեղության օրը ես կանչեցի քեզ, և դու լսեցիր ինձ» (Սաղմ. 85.7):

Գրության խորագրում ասված էր. «ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՄՆԱՅԱԾ ՆԱՄԱԿՆԵՐ - ԱՍՏԾՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿՆԵՐ ՆԵՏՎԱԾ ՕՎԿԻԱՆՈՍԻ ԽՈՐՔԸ»:

Նյու Աերսիից մի հոգևոր հովիվ հասցեագրված 300-ի չափ չբացված նամակներ նետված էին օվկիանոսի խորքը: Հովիվը վաղուց մահացած էր: Խորհրդավոր երևույթ էր. ինչպե՛ս էին օվկիանոսի ալիքները ծովափ նետել այդ նամակները: Նամակներն ուղղված էին այդ հովիվին, որովհետև նա խոստացել էր զբանք հեղինակների համար աղոթել: Ոմանք խնդրել էին ոչ այնքան լուրջ բաներ: Ոմանք մտահոգված էին իրենց ամուսիններով, զավակներով կամ իրենց այրի

Հիսուսը մեր ամենաթույլ աղաղակն անգամ լսում է:

Ինչպե՞ս քայլել

Կարգա՛
Եփեսացիներ 3.14-4.3

Որպեսզի իր հարուստ փառքի համեմատ տա ձեզ, որ իր Հոգու միջոցով ներսի մարդու մեջ զորությամբ հաստատվեք:

Եփես. 3.16

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Երեմիա 30-31

■ Փիլիմոն

սել եմ հետզհետե Հիսուսի հետ մոտիկից քայլել սովորել և հենց այդ է, որ ուզում եմ»: Փոխանակ Աստծու դեմ բռունցք թափ տալու՝ նա պարզել էր ձեռքը և բռնել Աստծու ձեռքից:

Երբեմն մենք էլ մեր կյանքի ելևէջումներում այդ մարդու պես կարիք ունենք մտածելու մեկի մասին, ով կարող է օգնել մեզ՝ մեր կեցվածքն ուղղելու և հրաշագործ հարաբերություն հաստատելու Աստծու հետ Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով:

Մենք հարկ եղածի չափ զորություն չունենք՝ գլուխ հանելու այն բոլոր հարցերում, որոնց ստիպված ենք դիմադրավել: Բայց Աստված կարող է: Դրա համար է նա մեզ ասել, որ ամեն բան իրեն տանենք. «Հոգսդ դի՛ր Տիրոջ վրա, և նա քեզ կկերակրի» (Սաղմ. 54.23): Վերևում հիշված մարդու պես մենք էլ պետք է ընտրենք Հիսուսի հետ քայլելը, որը կապ ունի ոչ թե մեր ոտքի, այլ մեր սրտի հետ:

Մի գույգ մի օր դուրս եկավ հեծանվով զբոսանքի՝ մարզանք կատարած և կազդուրված տուն վերադառնալու հույսով: Բլրակից ցած իջնելիս ամուսինը կորցրեց իր հեծանվի ղեկավարությունը և զարնվեց մի ժայռի: Մարմինը սաստիկ ճզմված մարդուն հազիվ կարողացան հասցնել հիվանդանոց:

Կինը երկար ժամանակ հավատարմորեն մնաց հիվանդանոցում՝ ամուսնու կողքին, որն անկարող էր ուտել և խմել: Որոշ ժամանակ անց, երբ երկուսով նստած էին հիվանդանոցի բակում՝ ծառի ստվերում, անվասայլակում գտնվող ամուսինը դիմեց կնոջը. «Չգիտեմ՝ արդյոք մի օր նորից կարողանալ՞ե՞մ քայլել, բայց ես սկսել եմ հետզհետե Հիսուսի հետ մոտիկից քայլել սովորել և հենց այդ է, որ ուզում եմ»:

Մենք կարող ենք դուրս գալ ամենամութ փորձությունից, եթե քայլենք Աստծու հետ լույսի մեջ:

**Մարգվել կյանքի
համար**

Կարգա՛

Ա Տիմոթեոս 4.1-11

**...քո անձն աստվածա-
պաշտության՝ վար-
ժեցրու:**

Ա Տիմ. 4.7

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Երեմիա 32-33

■ Եբրայեցիներ 1

որ պատիվ բերի Աստծուն: Մի մշակույթում, որտեղ շատ են սխալ ուսուցումները, և ուր առկա է չափազանցված թողտվություն ամեն ինչում, Առաքյալը պատվիրում է. «Քո անձն աստվածապաշտության՝ վարժեցրու, որովհետև մարմնական վարժությունը քիչ բանի համար է օգտակար, բայց աստվածապաշտությունն ամեն բանի համար օգտակար է՝ ունենալով այժմյան ու գալիք կյանքի խոստումը» (Ա Տիմ. 4.7-8):

Մեր մարմիններն ու մտքերը պետք է նվիրված լինեն Աստծուն և պատրաստված՝ Նրան ծառայելու (Հռոմ. 12.1-2): Աստվածապաշտության մեջ զորանալու նպատակը պետք է լինի մեկը՝ աստվածահաճո կյանքը: Եվ դա իրագործելու համար պետք է կենտրոնացած սերտել Աստծու Խոսքը, հավատքով ու երկար աղոթել և մարմինը կարգապահ պահել:

Ոքան լավ մարգվենք հոգևորապես, այնքան ավելի ազդեցիկ և հաջող կլինի մեր հոգևոր կյանքի վազքը:

Բարեպաշտության մարգումը բանալին է բարեպաշտ
նկարագրի:

Երբ Դեն Քարնազեսը 2006-ին 2-մղոնանոց վազքի մրցմանը, նա գրանցեց անհավատալիորեն բարձր ցուցանիշ: Քարնազեսը մասնակցել էր 50 մրցումների 50 նահանգներում 50 օրվա ընթացքում: Այս բացառիկ մարզիկի անսահման տոկոսունությունը պատահական չէր: Դա հնարավոր էր դարձել 350 մղոն շարունակական վազքի, 24 ժամ հեծանիվ քշելու և երկար ժամանակ Սան Ֆրանցիսկոյի ծովածոցում լողալու շնորհիվ:

Հոգևորապես մարգվելու համար նույնպես ժամանակ և լուրջ մարզանք է անհրաժեշտ: Առաքյալը պատվիրում է Տիմոթեոսին, որ իրեն և իր կյանքը կարգապահության ենթարկի,

Սահմաններ

Կարգա՛
Երեմիա 5.20-29

**(Աստված) ավազը
ծովին սահման
կարգեց:**
Երեմ. 5.22

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Երեմիա 34-36
■ Եբրայեցիներ 2

Չի լինում մի տարի, որ աշխարհի որևէ անկյունում որևէ սոսկալի տարերային աղետ չպատահի: Ջրհեղեղները, մրրիկները և ծովային փոթորիկները կործանում են անհամար տներ, պատճառ դառնում մեծ թվով մարդկանց մահվան և ոչնչացնում ամեն տեսակ կենդանություն:

Քննարկման հարց է, թե ծովերն արդյոք «իրավունք» ունե՞ն, խախտելով իրենց սահման հանդիսացող ծովեզերքը, հարձակվելու ցամաքի վրա: Մարգարեն ասում է, որ Աստված «ավազը ծովին սահման կարգեց» (Երեմ. 5.22): Աստված սահմաններ է դրել նաև մարդկային վարմունքի համար: Հակառակ այդ իրողության՝ օր չի անցնում, որ չխախտենք Նրա անհամար պատվերները և որպես հետևանք՝ հոգևոր և ֆիզիկական աղետալի վիճակներում հայտնվենք: Եվ զարմանալին այն է, որ երբեմն պատճառաբանում ենք, թե մենք «իրավունք» ունենք բեկանելու այդ սահմանները:

Երեմիա մարգարեի ժամանակներում ժողովուրդն իր սահմաններից դուրս էր եկել՝ հարստանալու նպատակով նենգություններ գործելով, և մերժում էր օգնել ու պաշտպանել աղքատներին (Երեմ. 5.27-28): Հետևանքը աղետալի եղավ: Աստված ասաց. «Մեր անօրենությունները խախտեցին այդ կարգը, և մեր մեղքերը մեզնից հեռացրին բարիքները» (Երեմ. 5.25):

Ստեղծագործության մեջ կա մի անքակտելի կանոն: Երբ բեկանում ենք այն, հետևանքներն անխուսափելի են լինում: Աստված Իր սիրով մեզ է հաղորդում այդ կանոնը, որպեսզի խուսափենք նրա խախտման հետևանքներից: Նա մեզ բավական իմաստնություն է տվել՝ ճանաչելու Իր մշակած օրենքի սահմանները և մնալու այդ սահմաններում:

Աստծու կանոնի անտեսումը անկարգության է տանում մեզ:

Դեռ ավելի լավ

Կարդա՛
Փիլիպպեցիներ 1.19-26

**Որովհետև ինձ
համար կյանքը
Քրիստոսն է, իսկ
մեռնելը՝ չա՛հ:**

Փիլիպ. 1.21

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Երեմիա 37-39
■ Եբրայեցիներ 3

Տրենսիս Բեյքն ասել է. «Ես
չեմ հավատում, որ որևէ
մարդ վախենում է մահվանից, բացի՝
մահվան հարվածից»: Իսկ Վուդի
Ալենն ասել է. «Ես չեմ վախենում
մեռնելուց: Բայց չեմ ուզում ներկա
լինել, երբ դա կպատահի»:

Մահը չէ, որ մեզ վախեցնում է,
այլ մեռնելը: Պողոս Առաքյալը, որ
բանտախցում վերապրեց բանտար-
կույթյուն և հավանական մահ, այս-
պես է ներկայացնում կյանքի և
մահվան վերաբերյալ իր տեսակետը.
«Ինձ համար կյանքը Քրիստոսն է,
իսկ մեռնելը՝ չա՛հ» (Փիլ. 1.21): Ի՛նչ
հիանալի հեռանկար:

Մահը մեր թշնամին է (Ա Կոր.
15.25-28): Սակայն այն իր տրամադ-

րույթյան մեջ չունի վերջավորույթյան ահավոր սարսափը:
Մահից այն կողմ կյանք կա, որն սպասում է հավատացյալ-
ներին, չա՛տ ավելի լավ մի կյանք: Ինչ-որ մեկն ասել է.
«Այն, ինչը թրթուրի կարծիքով կյանքի վերջն է, թիթեռնի-
կի համար նոր կյանքի սկիզբն է»: Ջորջ Մաք Դոնալդն ասել
է. «Որքան տարօրինակ է մահվան վախ արտահայտություն-
ներ: Մենք երբեք չենք վախեցել՝ մայրամուտը դիտելով»:

Ես շատ եմ սիրում Փիլիպ. 1.21 համարը. «Որովհետև
ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ չա՛հ»: Մեր
մարմնական կյանքում ավելի շատ առիթներ ունենք Քրիս-
տոսին ծառայելու: Այլ խոսքով, ապրելը Քրիստոսին ծառա-
յելու մի հավելյալ առիթ է, իսկ մեռնելը՝ ավելի լավ: Սա-
կայն այն օրը, երբ իսկապես իր ներկայություն մեջ լինենք,
պիտի փարատվեն մեր բոլոր տեսակի վախերը: Այդ է այն,
ինչը Առաքյալն անվանում է «չա՛տ ավելի լավ»:

Հավատացյալների համար մահվան վախը կյանքի
կատարելության ճանապարհ է բացում:

**Մեր ապավենն ու
գորութիւնը**

Կարգա՛
Եսայի 31

**Ոմանց աչքը ռազմա-
կառքերին է, ուրիշ-
ներինը՝ երկվարնե-
րին, իսկ մենք մեր
Տիրոջ անունն ենք
կանչում:**

Սաղմ. 19.8

Աստվածաշունչը
մեկ տարում

- Երեմիա 40-42
- Եբրայեցիներ 4

քաջալերելու, որ իր ժողովուրդը վստահի իր Տեր Աստծուն:

Եգիպտոսից օգնութիւն խնդրելով՝ Եգեկիան ցույց տվեց, որ ինքը պատմութիւնից ոչինչ չի սովորել: Եգիպտոսն այլ բան չէր եղել իրենց համար, եթե ոչ պարզապէս դաշնակից: Եգեկիան մոռացել էր նաև Աստծու խոսքը: Զիբրի և հեծելագործի շատանալն ու դրանց վստահելը հակառակ էր համարվում Աստծու կամքին (Բ Օր. 17.16): Ի վերջո Եգեկիան Տիրոջից օգնութիւն խնդրեց (Եսայի 37.1-6, 14-20): Եվ Աստված հրաշանման կերպով ոչնչացրեց երկիրը գրաված ասորեստանցիներին (Եսայի 37. 36-38):

Հուդայի թագավորը մեծ սխալ թույլ տվեց. նա Եգիպտոսի գորութիւնն ու օգնութիւնն ավելի վստահելի ու կարևոր համարեց, քան կենդանի Աստծուն վստահելը: Որքան լավ է, որ ամեն առիթով ու ամեն պարագայում մեր վստահութիւնը դնենք մեր Տիրոջ՝ Աստծու վրա (Սաղմ. 19.8):

Ոչ մի կյանք այնքան ապահով չէ, որքան Աստծուն
հանձնված կյանքը:

2004-ի օգոստոսին մի պտտա-
հնդմ ահաւոր ավերածու-
թիւններ արեց Ֆլորիդայի շրջա-
նում: Փոթորկի ժամանակ մի մարդ
զնայ և ապաստանեց խոշոր ծառի
տակ գտնվող իր հյուղակում՝ այն
ավելի ապահով համարելով: Սակայն
փոթորիկը ծառը տապալեց և այդ
մարդու մահվան պատճառ դարձավ:

Երբեմն մեր ապահով համարած
վայրերը կարող են շատ վտանգավոր
լինել: Եսայի մարգարեն այդ մասին
զգուշացնում է Հուդայի Եգեկիա թա-
գավորին: Եգեկիան լավ թագավոր
էր: Բայց նա կրկնեց իր հոր՝ Աքազի
սխալը՝ իր ապահովութիւնը փնտրե-
լով օտար ուժերի միութեան մեջ (Դ
Թագ. 16.7, Եսայի 36.6)՝ փոխանակ

Ճոխ ապրել

Կարդա՛
Բ Կորնթացիներ 6.1-13

**Մենք ամեն ինչ
բացահայտ ասացինք
ձեզ, ո՛վ
կորնթացիներ, մեր
սրտերը բաց են ձեր
առաջ:**

Բ Կորնթ. 6.11

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Երեմիա 43-45

■ Եբրայեցիներ 5

ապրելու նպատակ: Հիսուսի հետևորդներն էլ կանչված են՝ ապրելու մի ճոխ կյանք, սակայն տարբեր կերպով, ինչպես տեսնում ենք Պողոս Առաքյալի և նրա գործակից Տիմոթեոսի օրինակով: Առաքյալն ասում է կորնթացիներին. «Մեր սրտերը բաց են ձեր առաջ» (Բ Կոր. 6.11): Մեկ այլ թարգմանություն ասում է. «Մեր սիրտը լայնացած է»: Նրանք իրենց սրտի ամբողջ կարեկցությունը տվել են ժողովրդին, ճիշտ այնպես, ինչպես հայրն է իր զավակներին առնում իր բազուկների մեջ: Ուրեմն, այդ նույն վերաբերմունքն ակնկալելով, Առաքյալը պահանջում է. «Փոխադարձաբար... դուք էլ ձեր սրտերը բացեք մեր առաջ» (Բ Կոր. 6.13):

Մեծսիրտ մարդն իր կարեկցությունը ցույց է տալիս իր խոսքերով և գործերով, ազատորեն և առատաձեռնությամբ: Որպես հավատացյալներ՝ ճոխությունը ապրենք և սիրով ընդունենք ու ողջագուրենք բոլոր մարդկանց:

Նրանք, ովքեր չեն հայտնում իրենց սերը, ճշմարտապես չեն սիրել:

Նավազնացություն մի թերթ գրում էր, որ նավերին հաճախակի տրվող անուններից են՝ «Հանդարտություն», «Պայծառություն», «Խաղաղություն», «Դադար»: Մի անգամ մի նավահանգստում տեսա «Ճոխ ապրել» անունով մի նավ: Չգիտեմ, թե այդ անունը տալով՝ ինչ էր ուզեցել ասել նրա տերը: Բայց շատերի համար ճոխ ապրել նշանակում է մեծ հարստություն ունենալ, թանկ արժեցող արձակուրդների մեկնել, գնել ուզած ամենաթանկ ապրանքը և շռայլությամբ լեցուն կյանքով ապրել:

Փորձված է, սակայն, որ նման ապրելակերպը մարդկանց չի տալիս գոհունակություն և իրենց կյանքն

Մեծ Համաճարակ

Կարգա՛
թվեր 21.1-9

...այնպես էլ Մարդու
Որդին պետք է բարձ-
րանա: Որպեսզի ամեն
նրան Հավատացող
չկորչի, այլ Հավիտե-
նական կյանք ունենա:
Հովհ. 3.14-15

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Երեմիա 46-47

■ Եբրայեցիներ 6

1918-ի մարտին մի բանակի
խոհարար հիվանդացավ ու-
ժեղ հարբուխով, և տարին չավարտ-
ված՝ այն տարածվեց աշխարհով մեկ
ու 40 միլիոն մարդու մահվան պատ-
ճառ դարձավ: Այդ արագ տարած-
վող մանրէից Համաշխարհային Հա-
մաճարակ բռնկվեց:

Մի բժիշկ ասում էր, որ ծանր թո-
քախտով հիվանդները երբեմն, հար-
բուխի ախտանիշների ի հայտ գա-
լով, կարող են հեղձամահ լինել: Բա-
րեբախտաբար, այդ վարակիչ հար-
բուխը խորհրդավոր կերպով անհե-
տացավ այնպես, ինչպես հայտնվել
էր: Սակայն բժիշկները չկարողացան
գտնել դրա պատճառը, որ կարողա-
նային բուժել այն:

Հին Կտակարանի ժողովուրդն էլ էր տառապում շատ մեծ
և ավերիչ մի համաճարակից: Սակայն այն մարդիկ գիտեին
պատճառը և Մովսեսից խնդրեցին փրկությունը: Նրանք
ապերախտորեն սկսեցին տրտնջալ Աստուծո ղեմ նրա ուղար-
կած մանանայից: Աստված արդարացի բարկությամբ նրանց
ուղարկեց օձեր, որոնց թունավոր խայթոցները մահաբեր
վերքեր էին առաջացնում: Տերն ասաց Մովսեսին, որ մի
պղնձե օձ շինի և մի ձողի վրա կապի: Բոլոր նրանք, ովքեր
նայեին այդ օձին, պիտի բուժվեին (Թվեր 21.1-9): Դարեր
անց Հիսուսը խոսեց այդ մասին՝ որպես խաչի վրա իր մահ-
վան խորհրդանիշի. «Եվ ինչպես Մովսեսն անապատում օձին
բարձրացրեց, այնպես էլ Մարդու Որդին պետք է բարձրա-
նա: Որպեսզի ամեն նրան Հավատացողը չկորչի, այլ Հավի-
տենական կյանք ունենա» (Հովհ. 3.13-14):

Դու վատահե՞լ ես Քրիստոսին՝ հոգիդ բուժելու համար:

Նայի՛ր Քրիստոսին այսօր, հակառակ դեպքում կարող ես
կորսված լինել հավիտյան:

Լավ կյանքը

Կարդա՛
Ղուկաս 12.13-21

**Տեսե՛ք և զգուշացե՛ք
ազահուլթյունից.
որովհետև մարդուս
կյանքը նրա
ունեցվածքի
չատուլթյունից չէ:**
Ղուկ. 12.15

Աստվածաշունչը
մեկ տարում

- Երեմիա 48-49
- Եբրայեցիներ 7

Մայրուղիով մեքենաս արագ վարելիս դեռ հեռվից նկատեցի մի ցուցատախտակ, որի վրա խոշոր տառերով գրված էր. «Լավ կյանք»: Անհամբերությամբ ավելի մոտեցա, որպեսզի կարդամ դրա տակ ավելի մանր տառերով գրվածը, թե ինչ է նշանակում «լավ կյանքը»: Խոսքը լճահայաց մի տան վաճառքի մասին էր, որի գինն սկսվում էր 300.000 դոլարից: Ինքս ինձ հարց տվեցի, թե որոշ ապերձանիկ ընտանիքներ եթե զավակների հետ ապրեին այդպիսի գեղեցիկ տան մեջ, արդյոք պիտի կարողանայի՞ն իրար ավելի լավ հասկանալ և ավելի լավ կյանքով ապրել:

Ղուկասի Ավետարանի 12-րդ գլխում նկարագրված դեպքը հիշեցի: Մի մարդ խնդրեց Հիսուսին, որ իր եղբորն ասի՝ հորից մնացած ժառանգությունն արդարացի բաժանի իրենց միջև: Հիսուսի պատասխանը նման էր զգուշացման. «Տեսե՛ք և զգուշացե՛ք ազահուլթյունից, որովհետև մարդուս կյանքը նրա ունեցվածքի շատուլթյունից չէ» (Ղուկ. 12.15): Ապա Նա շարունակեց պատմել մի հարուստ մարդու պատմություն, որը Աստծու աչքին հիմար մեկն էր. ոչ թե նրա համար, որ հարստացել էր հաջողությամբ, այլ նրա համար, որ Աստծով հարուստ չէր: Որքան շուտ անդրադառնանք և գիտակցենք այն խաբեկանքը, թե շատ ունեցվածքը և հարստությունը նշանակում են ավելի խաղաղ և երջանիկ կյանք, այնքան ավելի մեր կյանքին իմաստ և նպատակ տված կլինենք: Երբ կարողանանք Աստծով հարստանալ, միայն այդ ժամանակ կարող ենք խաղաղություն և երջանկություն գտնել և ունենալ «լավ կյանք»:

«Լավ կյանք» կարելի է գտնել Աստծով հարստանալու մեջ:

«Մեր հայրերի դրոշները»

գրքի հեղինակը պատմում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Շիմայի կռիվների և Սուրիբաչի լեռան վրա դրոշ բարձրացնելու նշանավոր դեպքի մասին: Հեղինակի հայրը՝ Ջոնը, դրոշը բարձրացնողներից մեկն էր: Սակայն ամենից առաջ նա ծովային զինվոր էր, որը մասնակցել էր բոլոր կռիվներին: Պատերազմի ամենակատաղի պահին, երբ երկու կողմերից հրետակոծություն էր ընթանում, Ջոնը, վտանգելով իր կյանքը, հոգ էր տանում իր վիրավոր և մահամերձ զինակիցների մասին: Այդ անձնագրոհ վարմունքը ցույց է տալիս նրա կատարյալ նվիրումն իր պարտականու-

Լավ անել

Կարդա՛
Հակոբոս 1.1-13

Արդ, եթե թագավորական օրենքը գրվածի պես կատարեք՝ «Քո ընկերոջը քո անձի պես սիրի՛ր»,-լավ կանեք:

Հակ. 2.8

Աստվածաշունչը
մեկ տարում

- Երեմիա 50
- Եբրայեցիներ 8

թյանը և կյանքը վտանգելու գնով իր նմաններին ծառայելու պատրաստակամությունը: Որպես պարզե՛ նա արժանանում է Մովսիսի զինվորի խաչի, բայց այդ մասին երբեք չի պատմել իր ընտանիքի անդամներին: Միայն նրա մահից հետո է ընտանիքն իմացել նրա մարտական պարգևների մասին: Ջոնի համար մեղալիներ շահելը չէր կարևոր: Ավելի կարևորը իր զինակից ընկերների մասին հոգալն էր՝ անելով առավելագույնը:

Հակոբ. 2.8 համարում կարդում ենք. «Արդ, եթե թագավորական օրենքը գրվածի պես կատարեք՝ «Քո ընկերոջը քո անձի պես սիրի՛ր», -լավ կանեք»: Կամովին հոգալ ուրիշների մասին, ինչպես պիտի ուզեինք, որ ուրիշները մեր մասին հոգային. այդ մասին Առաքյալն ասում է «Լավ կանեք»: «Լավ» բառը նշանակում է «ձիշտ կերպով, ազնվությունով»: Անձնուրացությունով «լավ անելը» Աստծու սիրո օրենքի կիրարկումն է:

Մերը հնագանդության սիրտն է:

**Անսովոր
փառաբանութիւնս**
Կարգա՛
Ա Պետրոս 2.9-17

**Տերը սիրում է իր
սուրբ ժողովուրդին և
փառավորում
հեղերին
փրկութեամբ:**
Սաղմոս 149.4

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Երեմիա 51-52
■ Եբրայեցիներ 9

այդպիսի «առաքինութիւնն» ավելի քիչ է հետաքրքրում, քան իրենց մոլութիւնը: Ուստի նրանք կառչում են իրենց մոլութիւններին, եթե անգամ ասում են դրանք: Մի հեղինակ ասել է. «Մի կեղծավոր սուրբը կարող է հարյուրավոր մարդկանց անհավատ լինելու պատճառ դառնալ»:

Հավատացյալներն ապրելու են ճշմարիտ և անկեղծ հավատքի կյանքով, որը տեսնելով՝ մարդիկ հմայվեն և հրապուրվեն Քրիստոսի գալով (Ա Պետ. 2.12): «Եթե աշխարհի ամբողջ բնակչութեան միայն 10 տոկոսը սուրբ լինի, շուտով աշխարհի ամբողջ բնակչութիւնը ապաշխարելով երջանիկ կյանք պիտի ունենա», -ասում է նույն հեղինակը: Մենք էլ կարող ենք ունենալ այդ ներքին հոգեկան ուրախութիւնը, եթե թույլ տանք, որ Աստուծո հոգին մեր մեջ բնակվի: Ինչպես Սաղմոսերգուն է ասում, «Տերը... փառավորում է հեղերին փրկութեամբ» (Սաղմ. 149.4):

Ապրի՛ր այնպիսի կյանքով, որ ուրիշներն էլ շահագրգռվեն՝
Հիսուսին ճանաչելու:

Որոշ մարդիկ «սրբութիւն» բառի տակ պատկերացնում են կեղծ և փոքր-ինչ ամաչկոտ դեմքով մարդկանց, մարդիկ, ովքեր «բարի» են բառի ամենավատ իմաստով, խոժոռ և անժպիտ: Այդպես մտածողներն ունեն ինքնարդարացման և սեփական ճշմարտացիութեան խիստ տեսակետներ «գալիք կյանքի մասին», ինչպես գրում է մի թերթի հոդվածագիր:

Շատերը փնտրում են ճշմարտութիւն և բարութիւն: Սակայն այդ փափազն ու փնտրտուքը հուսախաբութեան են մատնվում, երբ տեսնում են հավատացյալ կարծված անձանց, ովքեր իրենց արդարացնող և ուրիշներին վարկաբեկող վերաբերմունք են դրսևորում: Անհավատներին

**Մենք ինչո՞ւ արժեք
ուենենք**

Կարդա՛
Սաղմոս 8

**Բայց ովքեր նրան ըն-
դունեցին, նրանց...
իշխանություն տվեց
Աստծու զավակներ
լինելու:**

Հովհ. 1.12

Աստվածաշունչը
մեկ տարում

- Ողբ 1-2
- Եբրայեցիներ 10.1-18

Այս՝ մեզ հիացում պատճառող իրողությունից ավելին էլ կա: Աստված, որ ստեղծել և կառավարում է այս անսահման, անբացատրելի և անհասկանալի տիեզերքը, առանձին-առանձին սիրում է մեզնից յուրաքանչյուրին: Նա ոչ միայն այս աշխարհի միլիարդավոր մարդկանց է հավաքաբար սիրում, այլև մեզնից յուրաքանչյուրին՝ առանձնաբար: Եթե Պողոս Առաքյալը սա ճշմարտություն է համարում իր համար, այն ճշմարտություն է նաև մեզնից յուրաքանչյուրի համար, որքան էլ մենք մեզ անկարևոր համարենք: Քրիստոսը «ինձ սիրեց ու իր անձն ինձ համար զոհեց», - ասում է Առաքյալը (Գաղ. 2:20):

Աստղագիտության առումով անկարևոր ենք: Բայց Աստծու մոտ մենք միշտ իր սիրուն և հոգածությունն ենք արժանի: Այս ճշմարտությունը չպետք է մեծամտություն առաջացնի մեր մեջ, այլ միշտ պետք է մեզ երախտապարտ զգանք և փառաբանենք Աստծուն, որը մեր հանդեպ իր այդ սերն արտահայտեց Գողգոթայի խաչի վրա:

Մի համալսարանի տարեվերջյան վկայականները հանձնելու արարողության ժամանակ շրջանավարտներին հասցեագրված ուղերձում հիշատակված մի շարք տվյալներ մտածել են տալիս, թե որքան անարժեք ենք մենք՝ որպես մարդ: Այդ տեղեկության մեջ ասվում է, որ գոյություն ունեն մեր երկրի պես 40 միլիարդ աստղեր, որոնք պտտվում են Ծիր Կաթինի շուրջ: Եվ բացի այդ, կան տիեզերքում հայտնաբերված ևս 40 միլիարդ աստղաբույներ: Ասվում է, որ եթե յուրաքանչյուր աստղ գնդասեղի մեծություն ունենա, արդեն նրանք պիտի կարողանային լցնել անհամար թվով ամաններ:

Այս՝ մեզ հիացում պատճառող իրողությունից ավելին էլ կա: Աստված, որ ստեղծել և կառավարում է այս անսահման, անբացատրելի և անհասկանալի տիեզերքը, առանձին-առանձին սիրում է մեզնից յուրաքանչյուրին: Նա ոչ միայն այս աշխարհի միլիարդավոր մարդկանց է հավաքաբար սիրում, այլև մեզնից յուրաքանչյուրին՝ առանձնաբար: Եթե Պողոս Առաքյալը սա ճշմարտություն է համարում իր համար, այն ճշմարտություն է նաև մեզնից յուրաքանչյուրի համար, որքան էլ մենք մեզ անկարևոր համարենք: Քրիստոսը «ինձ սիրեց ու իր անձն ինձ համար զոհեց», - ասում է Առաքյալը (Գաղ. 2:20):

Աստղագիտության առումով անկարևոր ենք: Բայց Աստծու մոտ մենք միշտ իր սիրուն և հոգածությունն ենք արժանի: Այս ճշմարտությունը չպետք է մեծամտություն առաջացնի մեր մեջ, այլ միշտ պետք է մեզ երախտապարտ զգանք և փառաբանենք Աստծուն, որը մեր հանդեպ իր այդ սերն արտահայտեց Գողգոթայի խաչի վրա:

Մենք այլ բան չունենք պարծենալու, քան Աստծու կողմից կաթոգին սիրված լինելը:

Բարեկամ կորցնել

Կարդա՛
Ողբ 3.19-29

**Անսպառ են Տիրոջ
ողորմությունները,
նրա գթությունները
չեն նվազում:**

Ողբ 3.22

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Ողբ 3-5
■ Եբրայեցիներ 10.19-39

կամ ավելի մեծ կորուստ, ասենք, ընտանիքի քանդվելը: Երբեմն մեր երազած հաջողության խափանվելը կամ սիրելիի մահը մեզ համար մեծ կորուստ են, և դրանցից յուրաքանչյուրի դարմանման համար մենք կարիքն ենք զգում օգնող մի ձեռքի կամ բժշկող մի հույսի: «Սուրբ Երեմիա մարգարեի ողբը» գիրքը կոչվում է նաև «Մի քաղաքի հուղարկավորություն»: Երեմիա մարգարեն ողբում է իր ժողովրդի ստրկությունը և Երուսաղեմի կործանումը: Սակայն այդ տխրության մեջ տակավին պահպանվում է Աստծու հավատարմությանը վստահելու հույսը. «Անսպառ են Տիրոջ ողորմությունները, նրա գթությունները չեն նվազում: Ամեն նոր առավոտի հետ բազմանում է քո ճշմարտությունը, Տե՛ր: Իմ հոգին ասաց. «Նա իմ բաժինն է», ահա թե ինչու հույսս պետք է դնեմ նրա վրա» (Ողբ 3.22-24):

Երբ մեր սրտերը ցավեն կորստի պատճառով, կարող ենք հուսադրվել Տիրոջով, որը բնավ չի փոխվում:

Երբ Աստծու սիրո արևալույսը հանդիպի ցավի անձրևներին, կհայտնվի խոստումի ծիածանը:

Երբ 2005-ի դեկտեմբերին Առնդոնում հանրային սպասարկումից հանվեցին կարմիր երկհարկանի ավտոբուսները, շատերն այն զգացումն ունեցան, կարծես բարեկամ էին կորցրել: Այդ նշանավոր ավտոբուսները քաղաքին հավատարմորեն ծառայել էին 51 տարի շարունակ: Նրանք մեծ ժողովրդականություն էին վայելում, քանի որ շատ դյուրին էր դրանք բարձրանալն ու իջնելը: Այսօր այդ հին ավտոբուսներից միայն մի քանի հատ են պահպանվել, այն էլ զբոսաշրջիկներին քաղաքը ցույց տալու համար:

Մեր կյանքում ևս հաճախ շատ փոփոխություններ կորստի են նմանվում, լինի դա վերացած ավտոբուս

**«Ո՛չ» մի ասա
ինքնօգնությանը**
Կարգա՛
Երեմիա 17.1-8

**Տերն իմ օգնականն է
ու պաշտպանը. նրա
վրա դրեց իր հույսը
սիրտն իմ...:**
Սաղմ. 27.7

Աստվածաշունչը
մեկ տարում
■ եգեկիել 1-2
■ եբրայեցիներ 11.1-19

Կրոնական հրատարակություն-
ների խմբագրությունում աշ-
խատելու սկզբնական շրջանում պա-
տասխանատու էի նաև զբքերի մի
շարքի համար, որոնց վրա գրված էր.
«Ինքնօգնություն»: Դա ինձ նեղու-
թյուն էր պատճառում, որովհետև
քրիստոնեական սկզբունքին հակա-
ռակ էր: Ինքնօգնության գաղափարը
մեծ ժողովրդականություն է վայե-
լում, քանի որ այն նշանակում է, թե
մենք ենք կացության տերն ու կառա-
վարիչը: Մի բանաստեղծության մեջ
ասվում է. «Ես եմ տերը իմ ճակա-
տագրի: Ես եմ նավապետը իմ հո-
գու»: Բայց մենք այդպես չենք: Ի
վերջո պատահում է մի բան, որը հիշ-
եցնում է, որ շատ բաներ մեր կյան-
քում դուրս են մեր տիրապետությունից, և ինքնօգնության ոչ
մի գիրք չի կարող օգնել մեզ՝ կացությանը հակակշռելու:

Փա՛նք Աստծու, հավատացյալներն ինքնօգնությամբ չեն
խաբվում, այլ ճիշտ հակառակը: Հավատացյալ լինել նշանա-
կում է, որ մենք ընդունում ենք մեր անգորությունը, մեր անօգ-
նական վիճակը և ամբողջովին Աստծուց կախյալ լինելը: Հի-
սուսն ասաց. «Առանց ինձ ոչինչ չէք կարող անել» (Հովհ. 15.5):

Հին Կտակարանի ժողովուրդը միշտ նեղության էր
մատնվում, երբ Աստծուն վստահելու փոխարեն վստահում
էր մարդկային ուժին (Երեմ. 17.5): Նրանց ձախողություննե-
րից հետո Տերը պատվիրում է նրանց՝ ասելով. «Թող օրհն-
յալ լինի այն մարդը, որ հույսը Տիրոջ վրա կդնի, որ Տերը
նրա հույսը կդառնա» (Երեմ. 17.7):

Երբ դժվարին պայմաններ և դժվարություններ վրա
հասնեն մեզ, դիմե՛նք Աստծուն և վստահե՛նք Նրան:

Այն, ինչ Աստծու հետ չի սկսվում, ավարտվում է
ձախողությամբ:

**2000 տարվա
Հնուլթյան մի ծիլ**

Կարգակ

Սաղմոս 91.13-16

**Արդարներն
արմավենու պես
կծաղկեն... դրանք
պտղաբեր կլինեն
նաև ծերուլթյան
ժամանակ:**

Սաղմոս 91.13,15

Աստվածաշունչը

մեկ տարում

- եզեկիել 3-4
- եբրայեցիներ 11.20-40

րի համար:

Արմավենին կարևոր տեղ ունի Աստվածաշնչում: Հին Կտակարանում այն կապ ունի տաճարի և Աստծու ներկայության հետ: Նոր Կտակարանում տեսնում ենք, թե ինչպես խանդավառ ամբողջը Աստծուն է փառաբանում և արմավի ճյուղեր նետում Հիսուսի ոտքերի առջև, երբ Նա, իշուն նստած, երուսաղեմ է մտնում:

Աստծու խոստումը՝ Աբրահամի սերնդով աշխարհը օրհնելու, նույնպես քնած մնաց 2000 տարի (Մանդ. 12.1-3): Այդ սերմը Հիսուսն էր՝ սպասված Մեսիան: Շուտով հարուլթյան հրաշքը պիտի տարածվեր աշխարհի բոլոր ազգերի մեջ: Այդ հրաշքին մենք նույնպես կարող ենք հասու դառնալ: Ժամանակը պատճառ է, ոչ էլ ամուլ թվացող հողը: Կարևորը թույլ տալն է, որ մեր սրտերը այն հողը դառնան, ուր Քրիստոսը կարող է գալ և բնակվել:

Իսրայելցի բժիշկներն ու գիտնականները 2006-ի հունիսին հաջողուլթյամբ աճեցրին 2000 տարվա վաղեմուլթյուն ունեցող արմավի մի սերմ: Այդ սերմը գտնվել էր Մեռյալ ծովի արևմտյան ափին: Նրա վրա նշված էր Մաթուսաղայի անունը, որի ամենաերկարակյաց լինելը հիշված է Աստվածաշնչում (Մանդ. 5.27): Դարեր շարունակ քնած սերմը արթնացնելով նրան կյանքի կոչելու մարտահրավերից բացի՝ խումբն ուղեցել էր նաև ավելին իմանալ արմավի ծառի մասին, որը բավականին փառաբանված է Աստվածաշնչում իր շուքի, գեղեցկուլթյան և բուժիչ հատկուլթյունների համար:

Աստված երբեք այնպիսի խոստում չի տալիս, որը չկարողանա հարգել:

Նոր մարմիններ

Կարգավ
Ա. Կորնթ. 15.42-49

Նայենք հավատի զորագլխին ու կատարողին՝ Հիսուսին, որ իր առջև դրված ուրախության փոխարեն խաչը հանձն առավ...:
Եբր. 12.2

Աստվածաշունչը
մեկ տարում
■ եգեկիել 5-7
■ եբրայեցիներ 12

Բեն Ֆրանկլինը 1728-ին գրեց իր շիրմաքարի վրա արձանագրվելիք տապանագիրը. «Այստեղ ամփոփված է տպագրիչ Բ. Ֆրանկլինի մարմինը՝ մի հին գրքի կազմի պես: Նրա բովանդակությունը մաշվելու և իր ոսկեգօծ տառերից զրկվելու ու պառկելու է այստեղ՝ որդերին ի կեր: Սակայն նրա գործերը չեն կորչելու: Նրանք նորից պիտի հայտնվեն, ինչպես ինքն է հավատում, այս անգամ ավելի նոր և ավելի գեղեցիկ հրատարակությամբ, նորոգված և սրբազրված հեղինակի կողմից»:

Այս տապանագրի մեջ գաղութային Զարթոնքի ներկայացուցիչ Հանդիսացող այդ երիտասարդի խեղաթյուրված սրամտությունը մերձենում է Սուրբգրային հարություն գաղափարին: Այն մարմինը, որ ունենք հիմա, միշտ հակամետ է ծերանալու և ֆիզիկապես տկարանալով՝ ի վերջո մեռնելու: Սակայն Քրիստոսի հրաշափառ հարություն իր մեջ ունի խոստումը նոր և գերբնական մարմնի՝ փառքով վերակենդանացած: Պողոս Առաքյալն ասում է. «Մարմինը սերմանվում է ապականությամբ և հարություն առնում անապականությամբ: Սերմանվում է անարգություն և հարություն առնում զորություն» (Ա. Կոր. 15.42-43): Մինչ կյանքի ընթացքը դեպի ծերություն է գնում, որպես հավատացյալներ՝ ապրում ենք այն հույսով, որ նոր մարմին պիտի հայտնվի՝ ավելի փայլուն, քան առաջինը: Հակառակ մեր ցավերին և նեղություններին՝ մեր ճակատագիրն ապահով է Քրիստոսի՝ մեր «հավատի զորագլխի և կատարողի» (Եբր. 12.2) ձեռքերի մեջ:

Մի ակնթարթում բոլորս էլ փոխվելու ենք:- Պողոս Առաքյալ

Ուղիղ դեպի երկինք

Կարգա՛

Հովհաննես 3.1-8

Եվ էլ ուրիշ մեկով փրկություն չկա, որովհետև երկնքի ներքո մարդկանց տրված ուրիշ անուն էլ չկա, որով հնարավոր լինի փրկվել
Գործք 4.12

Աստվածաշունչը

մեկ տարում

■ եզեկիել 8-10

■ երբայեցիներ 13

եմ, որ երկինք եմ գնալու, հակառակը չի կարող լինել: Ես ոչ մի սխալ բան չեմ արել: Իմ խիղճը շատ մաքուր է: Եվ ես վստահ եմ՝ ուղիղ երկինք եմ գնալու»:

Միայն Աստված ինքն է որոշում, թե ո՛վ է երկինք գնալու: Աստծու Սուրբ Խոսքն ասում է, որ բոլոր նրանք, ովքեր վստահում են Հիսուսին և Նրան ընդունում որպես իրենց Տեր և Փրկիչ, ընդունվելու են երկնքում: Պետրոս Առաքյալն ասում է. «էլ ուրիշ ոչ մեկով փրկություն չկա, որովհետև երկնքի ներքո մարդկանց տրված ուրիշ անուն չկա, որով հնարավոր լինի մեզ փրկվել» (Գործք 4.12): Երկինք մտնելու արժանի պայման ու չափանիշ չեն մեր ինքնարդարացումը կամ մաքուր հոգի և նկարագիր ունենալը: Միայն Աստծու Խոսքն է, որ կարող է ցույց տալ մեր՝ երկինք ընդունվելու չափանիշը:

Մի հին հոգևոր հաղորդման մեջ ասվում է. «Բոլոր մարդիկ խոսում են երկնքի մասին, ես այնտեղ չեմ գնալու»: Քանի որ երկինքը Աստծու բնակության վայրն է, ուր Նրա ներկայութունն ու փառքն են հայտնվում հրաշալի պայծառությամբ, Նա է որոշում, թե ովքեր են ընդունվելու իր ներկայության մեջ և ինչ պայմաններում: Թե ինչպե՛ս և ինչո՛ւ երկինք մտնելու որևէ այլ հավատք չարաչար սխալ է:

Օրինակ, երբ մի հայտնի դերասանուհու հարցրել են հավատքի մասին, նա պատասխանել է. «Ես ամեն օր աղոթում եմ, Աստվածաշունչ եմ կարդում: Դա երբևէ գրված ամենագեղեցիկ գիրքն է: Ես վստահ

Մի՛ մտահոգվիր

Կարգա՛
Մատթեոս 6.25-34

**Ուրեմն հոգ մի՛
արեք... որովհետև
ձեր երկնավոր Հայրը
գիտե, որ այդ ամենը
պետք են ձեզ:**
Մատթ. 6.31-31

Աստվածաշունչը
մեկ տարում
■ եզեկիել 11-13
■ Հակոբոս 1

գուցեն ենք անում՝ դրականորեն շարունակելու համար մեր կյանքը: Բայց նաև մտահոգվում ենք: Մտածում ենք, թե արածներս ժամավաճառությունն է: Սակայն մեզնից շատերն ընկնում են աղոթելու կամ մտահոգվելու այդ երկընտրանքի մեջ: Գիտենք, որ պիտի վստահենք Աստծուն, բայց չգիտենք, թե Նա ի՛նչ պիտի անի կամ կարող է անել:

Սակայն երբ մեր ուշադրությունը կենտրոնացնում ենք Նրա խոսքի վրա, Նա մեզ հիշեցնում է, որ Ինքը քայլում է մեզ հետ, և առաջարկում է Իրեն հանձնել մեր բոլոր մտահոգություններն ու ճնշող բեռը: Նրա խոսքն ասում է. «Զեր ամբողջ հոգար նրա վրա՛ գցեցեք, որովհետև նա ձեզ համար հոգ է տանում» (Ա Պետ. 5.7), և Աստված «թող իր հարստության չափով ձեր կարոտությունը լցնի՛ փառքով Քրիստոս Հիսուսի մեջ» (Փիլ. 4.19):

Երբ սկսես վաղվա համար մտահոգվել, հիշի՛ր, որ «երկնավոր Հայրը գիտե» (Մատթ. 6.32) և քեզ պիտի տա այն, ինչի կարիքն ունես:

Մտահոգությունը բեռ է, որ Աստված երբեք չի ուզում,
որ կրենք:

Քեռորդուս աշխատանքը շուտով վերջանալու վրա էր, և ես ուրախացա՝ նրա կնոջից լսելով, որ նա արդեն նոր պաշտոնի հրավեր է ստացել:

«Մենք աղոթեցինք, ես մտահոգվեցի, ամուսինս վճռական որոշեց ուրիշ գործ գտնել»-գրում էր կինը՝ նկարագրելով իրենց հոգեվիճակը վերջին ամիսներին:

Շատ հեշտ է խուճապի մատնվել, երբ լուրջ մտահոգություն ունենք, ինչպես աշխատանքը կորցնելը, անբուժելի հիվանդությունը հիվանդանալը կամ անառակ զավակ ունենալը:

Ուրեմն այդ վիճակներից դուրս գալու համար աղոթում ենք: Ամեն միջոցի դիմում ենք: Մեր առավելա-

Հեռու՛ և մնա դրանից

Կարդա՛
Ա. Տիմոթեոս 5.17-25

**...ուրիշներին
մեղքերին մասնակից
մի՛ եղիր...:**

Ա Տիմ. 5.22

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եզեկիել 14-15
■ Յակոբոս 2

անի այնպես, ինչպես իրենք. կրճատի ծախսերի հաշիվները և ավելացնի վճարումները: Այդպես էլ արեց, և սակայն հանցավոր զգալու մտահոգությունն սկսեց ճնշել նրան:

Մի հավատացյալ իմաստուն բարեկամ նկատեց նրա վիճակը և աղոթեց նրա համար: Ապա խրատեց, որ իրատեսորեն գնահատի կացությունը: Մտահոգությունից ընկճված՝ նա ի վերջո պաղատագին և ամաչելով զղջումի եկավ և խոստովանեց իր մեղքերը: Ուղղեց ընկերություն մեջ իր գործած սխալները և այդ ամենի մասին տեղյակ պահեց իր կնոջը: Ի վերջո նա վերագտավ իր կյանքի անդորրը: Առաքյալի պատվերները կիրարկելի են բոլոր քրիստոնյաների համար: Երբ մարդիկ առաջնորդվում են հպարտությամբ և ազահուլությամբ, Առաքյալի պատվերը՝ «Ուրիշներին մեղքերին մասնակից մի՛ եղիր» (Ա Տիմ. 5.22), տեղին է:

Երբ չար հրապույրը քեզ քաշում է՝ միանալու սխալ գործողներին, հեռու՛ և մնա նրանցից:

Նա, ով Հիսուսին է հետևում, երբեք չի շեղվում:

Մեր շրջանից մի հավատացյալ մարդ պաշտոնի բարձրացում ստացավ, ինչի շնորհիվ մեծապես բարձրացավ նրա աշխատավարձը: Գործընկերները նրան խրախուսեցին, որ բարձրացնի նաև իր կենսամակարդակը՝ վարկային քարտով մեծ գնումներ կատարելով: Սկսեց անել ուրիշների ասածները. արձակուրդներն անցկացնում էր ձյունապատ լեռներում, մեկնում էր նավով շրջագայությունների, գնում նոր կահույք:

Շուտով սկսեց նյութապես նեղվել, որովհետև վճարելիքն ավելի շատ էր, քան ստացածը: Նյութական այդ ճնշումը լարվածություն մեջ էր պահում ընտանիքը: Նրա բարեկամները դարձյալ խորհուրդ տվեցին, որ

**Շնորհակալության
մյուս երեսը**

Կարգա՛

Ա. Կորնթացիներ 13

Սերը...

**Անպարկեչտուություն
չի անում, իրենը չի
փնտրում, չի
գրգռվում, չարը չի
մտածում:**

Ա. Կորնթ. 13.5

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եզեկիել 16-17

■ Հակոբոս 3

վել և ապերախտորեն անտեսվել է:

Ամենակարևոր բառերը, որ կարող ենք արտասանել հաճախ, «շնորհակալ եմ» բառերն են: Թեև իրոք կարևոր է շնորհակալությունն հայտնելը, սակայն կա նաև հարցի մյուս կողմը: Երբ որևէ նվեր կամ բարեգործություն ենք անում որպես հավատացյալներ, պետք է այդ անենք առանց փոխարենը որևէ բան ակնկալելու, նույնիսկ շնորհակալություն:

Սերը, որ սահմանում է Պողոս առաքյալը Ա. Կորնթացիս 13.4 համարում, ասում է. «Սերը երկայնամիտ է՝ քաղցր է... չի մեծամտանում»: Սերը իր դեմ գործված սխալների համար հաշիվ չի պահանջում, եթե նույնիսկ որևէ մեկը մոռանա շնորհակալությունն հայտնել իր գործած բարիքի փոխարեն: Շնորհակալության մյուս երեսը մաքուրն է, որն արտացոլում է Աստուծո կատարյալ սերը մեր հանդեպ:

Մի երիտասարդ զույգ երեխա ունենալու կապակցությամբ նվեր ստացավ: Ամուսինները երախտապարտ էին այդ նվերի համար: Երիտասարդ մայրն անմիջապես շնորհակալագիր գրեց, սակայն այդ նամակը, մնալով սեղանի վրա կուտակված այլ թղթերի տակ, այդպես էլ չհանձնվեց փոստատարին: Նվիրատուները երկար սպասեցին իրենց նվերի կապակցությամբ որևէ լուրի, բայց՝ ապարդյուն:

Շուտով այդ երկու ընտանիքների միջև սառնություն առաջացավ: Ընտանիքներից մեկը կարծում էր, թե շնորհակալագիրն ուղարկված է, մյուսն էլ՝ որ իր նվերը չի գնահատ-

Ոմն մեկը եկել է...

Կարդա՛
Տիտոս 3.1-7

**...մեր փրկիչ Աստծու
քաղցրությունը և
մարդասիրությունը
հայտնվեց:**

Տիտոս 3.4

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եզեկիել 18-19

■ Չակոբոս 4

անանուն բարեկամիս իմ հանդեպ ցուցաբերած բարության և սիրո համար:

Մեր ամբողջ կյանքի ընթացքում Աստված իր առատ օրհնություններն է թափում մեզ վրա: Դրանցից կարելի է հիշել իր խոսքի ճշմարտությունը, բնության գեղեցկությունը, ընտանեկան կյանքը, բարեկամություն վայելքները, փոխադարձ սերը, խնդակցությունը և այլն, որոնց աղբյուրը, որտեղից գալը հաճախ մոռանում ենք: Աստված կարծես դարձել է մեր «Ոմն» Բարեկամը:

Բայց Աստված չի ուզում «Ոմն» մնալ: Եթե ուզում ենք ավելին իմանալ Նրա մասին, պետք է կարդանք Ավետարանները, որովհետև Նա շատ հստակորեն հայտնված է այնտեղ Հիսուսի միջոցով: Ճանաչե՛նք Նրան հիմա և մեր երախտագիտությունը հայտնենք Նրան:

Տարիներ առաջ փոստով մի երկար և գլանաձև տուփ ստացա նվեր, որի մեջ շատ գեղեցիկ և թանկ ձկնորսական մի սարք էր, որը ես նյութապես անկարող էի գնել: Մեջը մի այսպիսի փոքրիկ երկտող կար. «Ուզեցի մի բան նվիրել քեզ»: Մինչև այսօր չգիտեմ, թե ո՛վ էր այդ նվերն ուղարկողը:

Բանաստեղծ Վիլյամ Կուպերն էլ է ունեցել մի անանուն բարեկամ, որը երբեմն նրան նվերներ էր ուղարկում: Ամեն անգամ նվեր ստանալիս նա ասում էր. «Ոմն մեկը եկավ»: Այս խոսքը ես էլ եմ հիշում, երբ ձկնորսություն եմ անում: Ես միշտ երախտապարտ պիտի մնամ

Մեր ամենասիրելի բարեկամն անգամ ստվերի է նման՝
Հիսուսի հետ համեմատած:

Ձևացնողը

Կարգավ
Ծննդոց 27.19-33

**Իրար խոստովանեցե՛ք
ձեր հանցանքները և
իրար համար աղո՛թք
արե՛ք, որ բժշկվե՛ք:**
Հակ. 5.16

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եզեկիել 20-21
■ Յակոբոս 5

Մի ճաշարանի մատուցող հա-
ճախորդներից մեկից խնդրեց
ներա վարորդական իրավունքը և շատ
զարմացավ, երբ իր նկարը տեսավ այդ
փաստաթղթի վրա: Նա մի ամիս
առաջ էր կորցրել իր վարորդական
իրավունքի վկայականը, և այս երի-
տասարդը գործածում էր այն՝ ցույց
տալու, որ ինքը Հափահաս տարիք ու-
նի՝ ալկոհոլային խմիչք պատվիրելու
և խմելու համար: Մատուցողն անմի-
ջապես զանգահարեց ոստիկանու-
թյուն, և այդ երիտասարդը ձերբա-
կալվեց ուրիշի ինքնությունը գործա-
ծելու համար: Իր ուզածն ունենալու
համար երիտասարդը ձևացել էր մեկը,
որ իրականում չէր:

Հակոբն էլ Հին Կտակարանում
ձևացնելու խարդախություն արեց: Իր մոր՝ Ռեբեկայի օգ-
նությամբ խաբեց մահամերձ հորը, թե ինքն իր եղբայր
Եսափն է, որպեսզի ստանար հոր օրհնությունը, որն, ըստ
իրենց ընտանեկան օրենքի, հասնում էր երեց եղբորը (Ծննդ.
27): Հակոբն էլ բռնվեց խաբեության մեջ, բայց Եսափի՝ հոր
օրհնությունն ստանալու համար արդեն շատ ուշ էր:

Ձևացնելը կամ կեղծելը այսօր էլ շարունակվում է եկեղեցի-
ներում: Որոշ մարդիկ հավատացյալի դիմակ են կրում, իսկական
«հավատացյալի բառեր» են գործածում, որ սիրաշահեն մարդ-
կանց: Ամեն Կիրակի եկեղեցի են հաճախում: Ուրիշների ներկա-
յությամբ աղոթում են ճաշից առաջ: Սակայն ներքուստ պայքա-
րի մեջ են՝ հանցավոր ու մեղավոր զգալու տրամադրությունը:

Աստված մեզ՝ հավատացյալներին, ներարկել է անկեղծորեն
իրար նեցուկ լինելու հատկությունը: Ընդունե՛նք մեր տկա-
րությունը և անկեղծ լինենք Աստծու մեր մարդկանց առջև:

Եղի՛ր այն, ինչ Աստված ուզում է, որ լինես. մի՛ ձևացրու այն,
ինչ որ չես:

Հունձքի տոն

Կարդա՛
Հակոբոս 4.13-17, 5.7-11

Դուք էլ համբերատար եղեք, ձեր սրտերը ամրացրե՛ք, որովհետև Տիրոջ գալուստը մոտեցել է:

Հակ. 5.8

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եզեկիել 22-23
■ Ա Պետրոս 1

«Եկե՛ք դուք, երախտապա՛րտ մարդիկ, եկե՛ք» Հոգևոր երգը սովորաբար երգվում է Հունձքի տոնին: Երգը գրվել է 1844-ին Հենրի Էլֆորդի կողմից: Այն սկսվում է Աստծուն փառք տալով, որ ձմեռը չեկած՝ Հունձքը տանը ապահով հավաքած է: Սակայն երախտապար լինելուց ավելի երգը գոհունակություն է հայտնում Աստծուն հողի տված պարգևի համար: Երգն ավարտվում է՝ շեշտելով Աստծու «Հունձքն» իր ժողովրդին, երբ Քրիստոսը վերադառնա. Ի՛նչ էլ լինի, Տե՛ր, շուտով եկ Քո վերջին Հունձքի տունը: Նե՛րս հավաքիր քո ժողովրդին Ազատ ամեն վշտից, ազատ ամեն մեղքից:

Այնտեղ հավիտենապես մաքրազարգված՝

Քո ներկայության մեջ բնակվելու:

Ե՛կ քո բոլոր հրեշտակներով, ե՛կ,

Տո՛ւն տար քո փառավոր Հունձքը:

Երբ Աստծուն փառք ենք տալիս մեր ստացած նյութական բարիքների համար, կարևոր է հիշել, որ մեր ծրագրերը անորոշ են, և մեր կյանքը գոյություն պես է, որ շուտով պիտի անհետանա (Հակ. 4.14):

Առաքյալը քաջալերում է մեզ, որ լինենք իր Հունձքի հատունանալուն սպասող հողագործի պես. «Դուք էլ համբերատար եղեք, ձեր սրտերը ամրացրե՛ք, որովհետև Տիրոջ գալուստը մոտենում է» (Հակ. 5.8): Աստծուն մեր գոհունակությունը հայտնելով մեր ամենօրյա կարիքները հավատարմորեն հոգալու համար՝ հիշենք նաև Նրա Երկրորդ Գալստյան խոստումը՝ Իր փառավոր Հունձքը հավաքելու:

Ամեն: Ե՛կ, Տե՛ր Հիսուս: Հայտն. 22.20

Շատ ծեօ՛ր

Կարգա՛
Հոռոմեացիներ 1.14-17

**Դուք աշխարհի
լույսն եք:**

Մատթ. 5.14

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եզեկիել 24-26
■ Ա Պետրոս 2

Աստված մարդկանց հասնելու
 Անհամար միջոցներ ունի:
 Ուրեմն եթե կարծենք, թե բավարար
 միջոցներ և կարողություն չունենք
 ուրիշներին Քրիստոսին ծանոթացնե-
 լու համար, հիշենք շուրջ 76-ամյա
 էթել Հեթֆիլդ անուկով կնոջը: Նա
 Հիսուսին ծառայելու փափագով
 գնում է իրենց եկեղեցի և հոգևոր հո-
 րից խնդրում, որ ծառայի կիրակնօրյա
 դպրոցում: Հովիվը պատասխանում է,
 որ նա շատ ծեօ է: Կինը տուն է վերա-
 դառնում վիրավորված և հուսախաբ:
 Գարնանային մի օր, երբ այդ կի-
 նը խնամում էր իր տան առջև աճող
 վարդերը, մտտենում է մոտակա հա-
 մալսարանի մի չինացի ուսանող և
 հիանում վարդերով: Կինը քաջալեր-
 ված նրան հրավիրում է թեյի: Խոսակցության ընթացքում
 կինը պատմում է Հիսուսի և Նրա սիրո մասին: Երիտասար-
 դը շատ է տպավորվում և հաջորդ օրը գալիս է ընկերոջ
 հետ: Այդ ձևով ծեօ կինն սկսում է ծառայել Հիսուսին: Նա
 մեծ ուրախությամբ Ավետարանի բարի լուրին բաժնեկից է
 դարձնում այդ երիտասարդներին, որովհետև հավատում էր,
 որ Հիսուսը բավարար գորություն ունի մարդկանց կյանքը
 փոխելու: Նրա Ավետարանը «Աստուծո գորությունն է՝ փրկե-
 լու համար ամեն հավատացյալի» (Հռոմ. 1.16):

Այլ հարց է, որ կնոջ տարիքի համար էր, որ չինացի ու-
 սանողները նրան հետևեցին հարգանքով և գնահատանքով:
 Երբ նա մեռավ, շուրջ 70 չինացի հավատացյալներ մասնակ-
 ցեցին նրա հուղարկավորությանը: Նրանք Քրիստոսին ճա-
 նաչել էին այդ կնոջ միջոցով, որը շատ ծեօ էր համարվել կի-
 րակնօրյա դպրոցում ուսուցանելու համար:

Ոչ ոք ծեօ չէ Քրիստոսի վկան լինելու համար:

Երեսս ծածկել

Կարդա՛
Ամբակում 1.1-5

Մաքուր է քո աչքը՝ չարիք տեսնելուց հեռու:

Ամբակում 1.13

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եզեկիել 27-29
■ Ա Պետրոս 3

Աստծուն լքողների հետ: «Ինչո՞ւ ինձ ջանք ու հոգնություն պատճառեցիր, ... Իմ առջև եղավ դատաստանը»- հարցնում է նա Տիրոջը (Ամբ. 1.3): Աստծու պատասխանը շփոթված մարդարեին ցույց է տալիս, որ եթե նույնիսկ չարի պատճառով Աստծու դեմքը աղոտ է երևում, դա չի նշանակում, թե Նա մեր գործերին չի խառնվում: Աստված ասում է. «Տեսե՛ք, արհամարհողնե՛ր, նայեցե՛ք, մեծապես զարմացե՛ք և չբվեցե՛ք, որովհետև մի բան պիտի անեմ ես ձեր օրերին, որին չեք հավատա, եթե նույնիսկ մեկը պատմի ձեզ» (Ամբ. 1.5): Աստված պիտի դատի Հուդային և սակայն պիտի դատի նաև ներխուժող բաբելացիներին նրանց չար գործերի համար (Ամբ. 2): Եվ այդ ամենից հետո «արդարը հավատքով կապրի» (Ամբ. 2.4):

Երբ աշխարհի իրադարձությունները քեզ հուսահատություն մատնեն, անջատիր լուրերը և բա՛ց արա Աստվածաշունչը: Պատմության վերջը գրված է Աստծու կողմից: Չարը պիտի պարտվի:

Պետք չէ հուսախաբվել չարի պատճառով: Աստվա՛ծ պիտի ասի վերջին խոսքը:

Ես չափազանց շատ եմ սիրում լուրերը լսել: Ուզում եմ իմանալ, թե ինչ է կատարվում աշխարհում: Բայց հաճախ կյանքի վայրագություններն այնքան վատ են ազդում վրաս, որ սարսափ-Ֆիլմ դիտող մանուկի նման եմ զգում ինձ: Երեսս շրջում եմ, որ խուսափեմ վայրագ տեսարաններ դիտելուց:

Աստված էլ չարին հակազդում է նույն ձևով: Դարեր առաջ նա հայտարարեց Հին Կտակարանի ժողովրդին, որ երես կղարձնի նրանից, եթե նա դեպի չարը դառնա (Երկ. Օր. 31.18): Նրանք այդպես վարվեցին, և Ինքն էլ իր ասածն արեց (Եզեկիել 39.24):

Ամբակում մարգարեն չէր լքել Աստծուն, բայց նա էլ տառապեց

**Երկու կամակոր
եղբայրներ**

Կարգա՛

Ղուկաս 15.25-32

**Բայց պետք է ուրախ
լինել ու խնդալ,
որովհետև քո այս
եղբայրը մեռած էր ու
կենդանացավ, կորած
էր ու գտնվեց:**

Ղուկ. 15.32

Աստվածաշունչը

մեկ տարում

■ եզեկիել 30-32

■ Ա Պետրոս 4

**«Անառակ որդու պատմու-
թյունը»** իրականում պատմություն
է երկու կամակոր եղբայրների և
նրանց սիրող հոր մասին: Դա հա-
մաշխարհային պատմություն է, որը
ներկայացնում է մարդկային ցեղի
յուրաքանչյուր անդամի:

Ես չեմ կարող ամբողջությամբ
համակերպվել անառակի հետ, որով-
հետև «խռովարար կյանքը» խորթ է
ինձ: Սակայն մեծ եղբոր ինքնարդա-
րացնող կեցվածքը համապատասխա-
նում է իմ ներկա հոգևոր պայքարին:
Նրա մեղքը հավանաբար ավելի լուրջ
էր, քան բացեիբաց ապրված անբարո
կյանքը: Մեծ եղբոր մեղքը թաքուն
կմնար, սակայն հանգամանքների
բերմամբ շուտով հայտնաբերվեց:

Մեծ եղբոր նկարագրի գծերը հետևյալն էին. նա ընտրեց
բարկությունը՝ ընդունելության փոխարեն (Ղուկ. 15.28):
Նա բաժանեց իրեն և «չէր ուզում ներս մտնել» (Ղուկ.
15.28): Նա ասաց իր հորը. «Քո այդ որդին» (Ղուկ. 15.30)՝
փոխանակ ասելու «իմ եղբայրը»: Հաստատ է, որ նա չէր
պատկերացնում շնորհքի հրաշալիքը:

Այս ամենով հանդերձ՝ հայրը երկու զավակին էլ սիրում է
անխտիր: Անառակի պարագայում նա վազեց և ողջագուրվեց
նրա հետ, իսկ մեծ որդու պարագայում նա «գուրս եկավ ու
աղաչում էր» (Ղուկ. 15.28): Մենք չենք հանդիպում որևէ կոշտ
հանդիմանության, այլ տեսնում ենք ուրախություն՝ փոքր զա-
վակի և կարեկից հոգի՝ մեծի համար: Ի՛նչ սքանչելի պատկեր:
Աստված ինչպիսի՛ բարիություն է ջանում համոզել մեզ:

Միրելի՛ բարեկամ, ո՞ր զավակին ես նմանվում: Ինչպիսի՞
դիրք ունես Երկնային Հորդ անսահման սիրո հանդեպ:

Աստու հրաշագործ սերը անառակ որդիներին հիմնովին
փոխում է թանկագին սրբերի:

**Ծեր մարդու
աղոթքը**

Կարգավ՛
Դանիել 9.3-19

**Ես երեսս դարձրի
դեպի իմ Տեր
Աստվածը՝ խնդրելու
համար աղոթքներով
ու աղաչանքներով...:**
Դան. 9.3

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եզեկիել 33-34
■ Ա Պետրոս 5

լու 70 տարի, իսկ հիմա արդեն 67 տարի է, ինչ ժողովուրդը գերուլթյան մեջ է (Երեմ. 25.8-11): Նա անձկուլթյամբ սպասում էր այդ ժամկետի ավարտին:

Աստված կոչ էր արել իր ժողովրդին, որ արդարուլթյամբ ապրի, բայց նա այդպես չարեց: Դանիելը որոշեց ապրել արդարուլթյամբ՝ հակառակ ժողովրդի անհավատարմուլթյան և հավատքի պակասի: Նա սկսեց աղոթել, որ Աստված չուշացնի գերուլթյան ավարտը: Աղոթելու ընթացքում Դանիելը կենտրոնացավ նաև Աստծուն պաշտելու և վկայելու պարտավորուլթյան վրա: Նրա աղոթելու ձևը շատ կարևոր պատկերացում է տալիս Աստծու հետ ուղղակի խոսելու մասին: Պետք է ճանաչենք և ընդունենք, որ «Աստված մեծ է և սքանչելագործ» (Դան. 9.4), և որ «մենք մեղք գործեցինք» (Դան. 9.5): Աղոթքով փառաբանում ենք և խոստովանում: Հետևենք Դանիելի օրինակին: Նրա համար աղոթքը նույնքան կենսական էր, որքան կյանքը:

Լսե՞լ ես 85 տարեկան մարդու պատմուլթյունը, որը ձերբակալվել է աղոթելու համար:

Հավանաբար լսել ես: Դանիելի պատմուլթյունն է այդ, մի տարեց հրեայի, ով գերի էր տարվել Բաբելոն և այնտեղ մահվան դատապարտվել Աստծուն հավատարիմ մնալու և Նրա հետ խոսելու համար (Դան. 6):

Աղոթքը, որ Դանիելին առյուծների գուրը տարավ, կարևոր խոսակցուլթյուն էր Աստծու հետ (Դան. 6.11): Առաջին անգամ չէր, որ նա աղոթում էր:

Դանիելի Զ-րդ գլխում կարդում ենք, թե ինչպես էր նա աղոթում: Նա կարդում էր Երեմիա մարգարեի մագաղաթը, որում ասվում էր, որ նրա ժողովուրդը գերուլթյան մեջ է ապրելու

Ոչ որ այնքան բարձր չէ, որքան ծնկի եկած քրիստոնյան:

Շեքսպիրի

Թարգմանությունը

Կարգավ

Բ Պետրոս 1.16-2.3

Բայց նախ աս՛ իմացեք, որ Գրքերի ամեն մարգարեությունն իր հատուկ մեկնությունը չունի:

Բ Պետ. 1.20

Աստվածաշունչը

մեկ տարում

■ եզեկիել 35-36

■ Բ Պետրոս 1

շարք աղանդներ, առանձին համարներ իրենց նշանակությունից դուրս բերելով, տարբեր իմաստներ են տալիս դրանց՝ ստեղծելով հերետիկոսություն վարդապետություններ: Օրինակ, ոմանք, չակերտելով Հովհ. 14.16 համարը, ասում են, որ «Մխիթարիչը» ակնարկում է իրենց «Նոր հայտնությունը»: Սակայն երբ դա բաղդատելու լինենք ուրիշ խոսքերի հետ, կտեսնենք, որ Հիսուսի ակնարկած Մխիթարիչը բացահայտորեն Սուրբ Հոգին է (Հովհ. 16.7-14, Գործք 2.1-4):

Պետրոս Առաքյալն ասում է. «Գրքերի ամեն մարգարեություն իր հատուկ մեկնությունը չունի» (Բ Պետ. 1.20): Աստվածաշնչյան որևէ համար ճիշտ մեկնաբանելու համար այն պետք է նկատի ունենանք և փորձենք հասկանալ իր բովանդակության մեջ: Ապա պետք է այն համեմատենք այլ թարգմանությունների հետ:

Ոմանք ենթադրում են, որ անգլիացի աշխարհահռչակ գրող Վիլյամ Շեքսպիրն օգնել է Աստվածաշնչի մի անգլերեն թարգմանությունը և ինչ-որ ծածկագիր ներդրել նրա մեջ: Օրինակ, անգլերեն այդ թարգմանության 46-րդ սաղմոսի սկզբից հաշված՝ 46-րդ բառը Շեյքն է, իսկ վերջից հաշված՝ 46-րդ բառը՝ Սպիր: Ավելին, ասվում է, որ 1610-ին, երբ ավարտվել է Աստվածաշնչի թարգմանությունը, Շեքսպիրը 46 տարեկան էր: Սակայն չնայած այս գուգադիպություններին՝ այդ տեսակետը հաստատող լուրջ փաստեր չկան:

Որոշ մեկնաբաններ ասում են նաև, որ իրենք թաքնված իմաստներ են գտել Աստվածաշնչի մեջ: Մի

45 տարվա

խոստում

Կարգա՛

Հեսու 14.6-13

**Մնուցել է ինձ Տերը,
ինչպես որ ասել էր.
սա քառասունհինգե-
րորդ տարին է, ինչ
Տերն ասել է այս
խոսքը Մովսեսին...:**

Հեսու 14.10

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եզեկիել 37-39

■ Բ Պետրոս 2

տալու, որ Աստված պիտի հարգեր 45 տարի առաջ իրեն տված խոստումը (Հեսու 14.10-12): Որպես խոստացված երկիրը խուզարկելու ուղարկված հետախույզներին մեկը՝ Քաղերը տեսել էր քաղաքներ՝ բնակեցված հզոր մարդկանցով (Թվեր 13.28-33):

Սակայն Քաղերը հավատարիմ մնաց Աստծուն և շարունակեց հավատալ, որ Նա պիտի օգնի իրեն՝ նվաճելու այդ երկիրը, որքան էլ նրա բնակիչները հզոր հսկաներ թվային: Ուստի Հեսուն օրհնեց Քաղերին՝ իր ստացած հողամասի հետ՝ իրագործելով 45 տարի առաջ Աստծու տված խոստումը:

Քաղերի պես մենք էլ չպետք է թույլ տանք, որ մեր առաջացած տարիքը պատճառ դառնա չհավատալու այն խոստումներին, որ Աստված տվել է մեզ երկար տարիներ առաջ:

Տոլա Օքսը Կանգաս նահանգի համալսարանի ուսանող եղած ժամանակ տոնեց իր ծննդյան 95-ամյակը: Տարիներ առաջ՝ 1930-ին, նրա համալսարանական ուսումնը ընդհատվել էր ինչ-ինչ պատճառներով: Ապա՝ 2006-ին, նա վերստին սկսել էր համալսարան հաճախել՝ իր ընդհատված ուսումնամբողջացնելու համար: Այդ ձեռք մարդը չէր ցանկացել, որ տարիքը արգելք դառնա՝ իրականացնելու 76 տարի առաջվա իր հանձնառու թյունը, այն է՝ ավարտել ուսումը: Հեսուի գրքի 14-րդ գլխում կարդում ենք Քաղեր անունով մի մարդու մասին: Քաղերը թույլ չտվեց, որ իր առաջացած տարիքը արգելք լինի իրեն՝ հավատալու, որ Աստված պիտի հարգեր 45 տարի առաջ իրեն տված խոստումը (Հեսու 14.10-12): Որպես խոստացված երկիրը խուզարկելու ուղարկված հետախույզներին մեկը՝ Քաղերը տեսել էր քաղաքներ՝ բնակեցված հզոր մարդկանցով (Թվեր 13.28-33):

Աստծու տված յուրաքանչյուր խոստում գալիս է Նրա անձնական երաշխիքի հետ:

Կրակատառ

Հրաբուխը

Կարգա՝

Բ Պետրոս 3.1-13

Այն ժամանակ

երկինքը

չառաչյունով կանցնի,

և տարրերը կրակով

վառված կհալվեն:

Բ Պետրոս 3.10

Աստվածաշունչը

մեկ տարում

■ եզեկիել 40-41

■ Բ Պետրոս 3

գրում է. «Գրում եմ մուխ փոսի մեջ գտնվող կույրի պես, շարունակ տեղացող քարերի և փոշու տակ: Պայթյուններն այնքան ուժեղ են, որ անձնակազմիս կեսից ավելիի ականջների թմբկաթաղանթները վնասվեցին: Համոզված եմ, որ Դատաստանի Օրը եկել է»:

Նավապետ Սիմփսոնը հավատաց, որ աշխարհի վերջը եկել է: Այդ ժայթքումը կարծես համընկնում է Բ Պետ. 3.10 համարին. «Այն ժամանակ երկինքը շառաչյունով կանցնի, և տարրերը կրակով վառված կհալվեն»: Որքան էլ սոսկալի էր այդ ժայթքումը, սակայն նշան չէր աշխարհի վերջի գալուսն:

Տազնապները մեզ ցնցում են՝ մեր ինքնագոհ վիճակից արթնացնելու: Հիշեցնում են, որ աշխարհը մեր տունը չէ, և քաջալերում են, որ աստվածապաշտ լինենք (Բ Պետ. 3.11): Երբ զգանք, որ մեր աշխարհն իր վերջին է հասնում, պետք է կենտրոնանանք հավիտենական կյանքի իրողության վրա:

Աշխարհի պատմության մեջ մեծագույն հրաբխային ժայթքումը տեղի ունեցավ 1883-ին Ինդոնեզիայի Կրակատառ կղզում: Այդ աննախադեպ ժայթքումն այնքան ուժեղ էր, որ լավան, բարձրանալով 24 մղոն, ցրվեց ահագին տարածության վրա՝ ծածկելով ընդարձակ հողեր ու կանաչ տարածքներ, պատճառ դառնալով անհամար թվով կենդանիների ու մարդկանց մահվան: Ասում են, որ այրված ժայռաբեկորները հասել են մինչև 2000 մղոն հեռու գտնվող Մադագասկար կղզին:

Այդ նշանավոր հրաբխի ժայթքման պահին անգլիական մի նավի նավապետ Սիմփսոնը գտնվում էր մոտակայքում: Իր օրագրում նա

Աստծուն վստահելը որևէ տագնապ օրհնության կարող է վերածել:

**Իրազործված
խոստում**

Կարգա՛
Մատթեոս 1.18-25

**Նա որդի կծնի, և նրա
անունը Հիսուս
կղենա, որովհետև նա
իր ժողովրդին կփրկի
իր մեղքերից:**

Մատթ. 1.21

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Եզեկիել 42-44
■ Ա Գովիանես 1

Բեյաբուլի խաղաչը ջանն ավար-
տվելուց հետո թիմերի մար-
զիչներն զբաղվում են մարզիկների
փոխանակմամբ՝ նախապատրաստվե-
լով հաջորդ տարվա մրցաշարին: Սա-
կայն եթե դուք էլ ինձ նման Չիկագո-
յի թիմի երկրպագու եք, շատ բան պի-
տի չակնկալեք, որովհետև տարիների
ընթացքում նրանք չեմպիոն չեն դար-
ձել: Բայց այդ խմբին միացած մի նոր
խաղացող անհավատալի հայտարա-
րուծյուն արեց լրագրողների հետ
հանդիպման ընթացքում. «Մենք պի-
տի հաղթենք առաջնությունում»:
Ինձ համար դժվար էր թերահավատ
չլինելը: Նրա խոսքերը հնչում էին
անհավանական խոստումի պես, որը
հնարավոր չէր իրազործել:

Հիսուսի օրերում հրեաներն ապրում էին Հռոմեական
կայսրության ճնշման ներքո և չէին հավատում, որ Աստ-
ված պիտի հարգեր իր խոստումը՝ ուղարկելով մի Փրկիչ,
որը պիտի ներքո մեղքերը և վերահաստատեր Իս-
րայելի փառքի օրերը (Եսայի 1.26, 53.12, 61): Աստված եր-
կար ժամանակ է, որ խոստացել էր ուղարկել մեկին, բայց
400 տարի ի վեր լուր չկար նրանից: Եվ ճիշտ ժամանակին
հրեշտակն ավետեց Հովսեփին, որ Մարիամը զավակ պիտի
ծներ և «նա իր ժողովրդին կփրկի իր մեղքերից» (Մատթ.
1.21):

Ծնունդը հաստատում է, որ Աստված իր խոստումը հար-
գող Աստված է: Նա ասել էր, որ Փրկիչ պիտի ուղարկի, և ու-
ղարկեց: Նա պատրաստ է և սպասում է, որ մենք բոլորս էլ
խոստովանենք մեր մեղքերը՝ իր ներումն ստանալու համար:

**Շարունակի՛ր, որ
Հասնես գագաթին**

Կարգա՛

Փիլիպպեցիներ 3.12-21

**Եվ անցե՛ք մեր Տեր
ու Փրկիչ Հիսուս
Քրիստոսի շնորհով և
գիտութ՛յամբ:**

Բ Պետրոս 3.18

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եզեկիել 45-46

■ Ա Յովհաննես 2

Լրագրող և լեռնագնաց Ջոն Քրաքաուները որոշել էր հասնել «աշխարհի տանիք»՝ Էվերեստ լեռան գագաթը: Թեև այդ դժվարին վերելքը պատճառ դարձավ նրա մի քանի ընկերների մահվան, սակայն նա համառորեն շարունակեց ուղին և 1996-ի մայիսի 10-ին հասավ գագաթին:

Արտահայտելով իր զգացումները՝ նա ասում է. «Հիմա, երբ գտնվում եմ Էվերեստ լեռան գագաթին, ոտքերիս տակ մի սքանչելի աշխարհ է տարածված: Ինձ դատարկված եմ զգում այն զգացումից, որը ամիսներ շարունակ ինձ լարված էր պահում և մղում նպատակիս իրագործմանը: Հիմա ամեն ինչ ավարտված է թվում ինձ»:

Ժամանակավոր նպատակները չեն կարող մեզ լիովին գոհացնել: Այս իրողությունը հանդիպում ենք Պողոս Առաքյալի ծառայության մեջ: Նա ասում է Փիլիպպեի եկեղեցու հավատացյալներին. «Հետևում եմ դեպի նպատակը՝ Հիսուս Քրիստոսով Աստծու վերին կոչման նպատակին» (Փիլիպ. 3.14): Այդ նպատակին հասնելու և բռնելու ընթացքում «Քրիստոս Հիսուսն էլ հասավ ինձ» (Փիլիպ. 3.12), ասում է նա: Նա պիտի «մեր խոնարհ մարմինը նորոգի, որ իր փառավոր մարմնին կերպարանակից լինի» (Փիլիպ. 3.21), հայտնում է Պողոս Առաքյալը:

Այդ նպատակակետը կարող է մեզ տալ ամենից հզոր մղումը: Այն մեզ ներշնչում է հետզհետե ավելի նմանվել Քրիստոսին: Առաջադիմություն յուրաքանչյուր քայլ մեզ հոգեկան ուրախություն և գոհունակություն է բերում: Որքա՞ն ճիշդ ենք թափում՝ այդ նպատակակետին հասնելու:

Թույլ մի՛ տուր, որ երկրավոր նպատակների գոհունակությունը արգելք լինի հասնելու հավիտենականին:

**Գործնական
կարեկցություն**

Կարգա՛

Ա. Հովհաննես 3.16-24

**Որդյակնե՛ր, խոսքով
չսիրենք և ոչ էլ
լեզվով, այլ գործով
ու ճշմարտությամբ:**
Ա. Հովհ. 3.18

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Եզեկիել 47-48

■ Ա Գովհաննես 3

ներին: Սակայն այդ բոլոր մտքերն ու խոսքերը այնքան ազդեցիկ ու քաջալերական չէին կարող լինել տիկնոջ համար, որքան այդ փոքրիկ գործնական քայլը:

Ա. Հովհ. 3.18 համարում Առաքյալն ասում է, թե ի՛նչ կարող ենք անել, երբ տեսնում ենք կարիքավոր մարդկանց: Նա ասում է, որ պետք է մեր կարեկցությունը գործնականորեն արտահայտենք. «Խոսքով չսիրենք և ոչ էլ լեզվով, այլ գործով և ճշմարտությամբ»: Որևէ կարիք նկատելիս լավ է այդ մասին խոսելը, սակայն պետք չէ բավարարվել խոսելով: Պետք է մի բան անել դրա համար: Հակոբոս Առաքյալը պատվիրում է. «Խոսքը կատարողնե՛ր եղեք և ոչ միայն լսողներ» (Հակ. 1.22):

Խնդրի՛ր Սուրբ Հոգուց, որ սրտիդ մեջ մեկին գնի՝ օգնելու Հիսուսի անուկով: Ապա անցիր գործնականի. մի երկտող գրիր, մի նվեր ուղարկիր, մի ծառայություն մատուցիր, գանգահարիր: Իսկական սերը գործով հայտնված սերն է:

Կարեկցությունը սերն է՝ գործի վերածված:

Հաճախ առավոտյան գրասենյակս մտնելով՝ տեսնում եմ սեղանիս դրված մի անակնկալ: Անցյալ օրը դա սուրճի մի գեղեցիկ գավաթ էր, որ դրել էր բարեկամ մի աշխատակից: Նա այդ գեղեցիկ գավաթը տեսել էր խանութում և գիտենալով, որ այն կարող է մեծապես ուրախացնել տիկնոջս, գնել և բերել էր՝ գրասեղանիս դնելով մի գեղեցիկ երկտողի հետ:

Ինձ համար հաճույք էր այդ նվերն առնել և տուն տանելով՝ կնոջս հանձնել նվիրատու կնոջ անունից:

Այդ տիկինը կարող էր պարզապես դրականորեն մտածել կնոջս մասին կամ նրա մասին պատմել ուրիշներին:

Փոխված բնանկար

Կարգավ
Մատթեոս 4.1-11

**Այն ժամանակ
Հիսուսը Հոգուց
անապատ տարվեց, որ
փորձի սատանայից:**
Մատթեոս 4.1

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Դանիել 1-2
■ Ա Յովիանցես 4

Շատ եմ սիրում իմ պարտեզը:
Մակայն քանի որ ապրում եմ
Միացյալ Նահանգների միջին-
նարևմտյան շրջանում, ճամանը իմ
գեղեցիկ պարտեզն ամբողջութամբ
սառչում է և թաղվելով ձյան տակ՝
վերածվում անկենդան բնանկարի:

Այդպես չէր, սակայն, Եղեմի պար-
տեզում: Եղեմը գեղեցիկ պարտեզ էր
ամբողջ տարին: Այնտեղ էր, որ Ադամն
ու Եվան, Աստծու ստեղծագործու-
թյամբ ջերմացած ու սքանչացած, ու-
րախ ապրում էին՝ ներդաշնակ հարա-
բերություններով թե՛ իրար, թե՛ Աստ-
ծու հետ: Այդպես եղավ մինչև Սատա-
նայի գալն ու նրանց արանքը մտնելը՝
բերելով որո՞մ ու փուշ, կործանում և
մահ:

Չես կարող չնկատել Ծննդոց 1-ի և Մատթեոս 4-ի բնան-
կարների հակադրությունը: Նույն փորձիչը, որը մտել էր
Աստծու ստեղծած Եղեմի պարտեզը, հիմա Նրան հանդիպում
էր չոր ու վտանգավոր անապատում: Անապատը կարող է
ներկայացնել այն պատկերը, որին վերածվում է աշխարհը
կամ մեր կյանքը, երբ այնտեղ ներթափանցում է Սատանան:
Մի վճռական հարվածով Եղեմի ուրախությունը փոխարին-
վեց ամայությունը և ամոթով (Ծննդ. 3): Սակայն Հիսուսը
հաղթական դուրս եկավ Սատանայի պատրաստած ճահճից
(Մատթ. 4): Այդ հաղթանակով Նա մեզ համակում է այն հույ-
սով, որ մենք էլ կարող ենք հաղթահարել մեզ վրա հասնող
փորձությունները: Այդ հաղթանակը մեզ վստահեցնում է, որ
պիտի գա այն օրը, երբ մենք այլևս կարիք չենք ունենա մա-
քառելու Սատանայի դեմ: Մեզ ցույց է տրվելու Եղեմի ճամ-
փան, և ուրախությունը մերը պիտի լինի հավիտյան:

Մինչ ճամփորդում եմք փորձության անապատում, Քրիստոս-
սի հաղթանակը կարող է մերը լինել:

Նվերի մեջ՝

նվերներ

Կարգա՛

Ա. Հովհաննես 5.9-13, 20

Եվ

չնորհակալություն

Աստծուն իր

անպատմելի պարգևի

համար:

Բ. Կորնթ. 9.15

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Դանիել 3-4

■ Ա Գովհաննես 5

մեղքերի թողությունն իր շնորհի մեծության չափով» (Եփես. 1.7):

- Ուսուցում Սուրբ Հոգուց. Հիսուսը խոստացավ. «Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որին Հայրն իմ անունով կուղարկի, նա ամեն բան կսովորեցնի ձեզ» (Հովհ. 14.26):

- Հավիտենական կյանք և տուն երկնքում. Հովհաննես Առաքյալն ասաց. «Ով որ որդուն ունի, նա կյանք ունի» (Ա Հովհ. 5.12): Հիսուսը խոստացավ. «Իմ Հոր տանը շատ բնակարաններ կան... Գնում եմ ձեզ համար տեղ պատրաստելու» (Հովհ. 14.2):

- Սեր, որի նմանը չկա. «Ինչպես իմ Հայրն ինձ սիրեց, այնպես էլ ես ձեզ սիրեցի... Ոչ ոք ավելի մեծ սեր չունի նրանից, քան այս, եթե մեկն իր կյանքն է տալիս իր բարեկամների համար» (Հովհ. 15. 9,13):

Ընդունե՞՞լ ես Աստծու աննկարագրելի մեծ նվերը: Եթե ոչ, միայն խնդրելու ես այն, որ ստանաս:

Հիսուսը թե՛ նվերն է և թե՛ բոլոր նվերները տվողը:

Մարիայի նախասիրած

սուրբծննդյան նվերը ամուսնու տված թանկարժեք հին գանձանակն էր: Նրա մեջ կային երեք տուփեր, որոնց մեջ լրացուցիչ նվերներ կային՝ շոկոլադե և ոսկեղեն: Նա շատ ուրախացավ նվերի միջի նվերներով:

Երբ Աստված Իր Որդուն՝ Հիսուսին աշխարհ ուղարկեց՝ մեր բոլորի Փրկիչը լինելու, դրանով նա մեզ բազմաթիվ նվերներ տվեց՝ այդ մեկ նվերի մեջ ծրարված: Ամեն անգամ, երբ մարդիկ Քրիստոսին ընդունեն որպես մեծ նվեր իրենց Հորից՝ Աստծուց տրված, ընդունած կլինեն նաև այլ նվերներ, որոնք անհնար է ստանալ այլ կերպ.

-Մեղքերի ներում. «Որով (Քրիստոսով) փրկություն ունենք նրա արյունով

Փոխի՛ր անունդ

Կարդա՛
Գործք 3.1-6

**Քանի որ ով Տիրոջ
անունը կանչի,
կվերկվի:**
Հռոմ. 10.13

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Դանիել 5-7
■ Բ Հովհաննես

Անունները շատ կարևոր են: Ծնողները երբեմն ամիսներ շարունակ պրպտումների մեջ են լինում, մինչև կարողանում են որոշել, թե ինչ անուն տան նորածնին: Հաճախ ի վերջո ընտրվում է այն անունը, որը լավ է հնչում, եզակի է և լավ իմաստ ունի:

Մի կնոջ գիտեմ, ով փոխել էր իր իսկական անունը, որովհետև չէր սիրում: Այդ կինը մեծապես սխալվում էր, թե փոխելով իր անունը՝ կփոխի նաև իր ճակատագիրը: Նման բան անհնար է: Սակայն միայն նրանք, ովքեր Հիսուսին են վստահում՝ որպես իրենց Փրկչի, հիմնական փոփոխություն են տեսնում իրենց կյանքում:

Մի զորավոր կապվածություն կա Հիսուսի անվան հետ: Առաքյալները հրաշքներ գործեցին (Գործք 3.6-7, 16. 4. 10) և դեեր հանեցին (Ղուկ. 10.17) Հիսուսի անունով: Նրանք խոսեցին և սովորեցրին Հիսուսի անունով: Նրանք հավատացյալների մկրտեցին Հիսուսի անունով (Գործք 2.38): Եվ միայն Հիսուսի անունով է, որ կարող ենք փրկություն գտնել և Հոր մոտ լինել (Գործք 4.12):

Եթե քրիստոնյա ենք, կարող ենք նաև Նրա անունը բաժնեկցել: Եվ քանի որ հետևում ենք Քրիստոսին, կարող ենք Նրա լույսը ցոլացնել մթնոլորտի մեջ: Մեր հարևանները, մեր գործընկերները կամ մեր ընտանիքի անդամները երբ մեզ նայեն, մեր մեջ տեսնեն Քրիստոսին:

Մեր անունները երբեմն կարող են իմաստ ունենալ: Սակայն «Քրիստոնյա» անունը կրելը կարող է կյանք հեղաշրջել:

Հիսուսի անունը այն միակ անունն է, որը զորություն ունի բարեփոխելու:

**Մենք է՞լ ենք
ծախում**

Կարգա՛

Եբրայեցիներ 12.12-17

**Զգո՛ւյշ կացեք... որ-
պեսզի մեկը պիղծ
չլինի, ինչպես Եսալը,
որ մի կերակուրի հա-
մար իր անդրանիկու-
թյունը ծախեց:**

Եբր. 12.15-16

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Դանիել 8-10

■ Գ Գովհաննես

նենք առջևում՝ լեցուն նոր առիթներով, նոր հնարավորու-
թյուններով ու անակնկալներով: Աստված մեր անցյալը չպի-
տի հետ բերի, երբ դարձի գալով ապաշխարենք: Նա պիտի
ների մեզ և մեր առջև նոր ուղի բացի:

Աստված կարող է առիթներ ստեղծել՝ ցույց տալու մեզ,
թե իրականում որքան ենք զղջացել մեր անցյալի սխալների
համար, և որ իսկապես դարձի գալով՝ պատրաստ ենք իրեն
ծառայելու նոր որոշումներով: Նա երբեք չպիտի հիշի այն
գործերը, որոնց պատճառով ամոթահար արեցինք ուրիշնե-
րին և ինքներս մեզ: Դրանք ներված և մոռացված պիտի լի-
նեն ընդմիշտ:

Աստված մեզ տեղ և առիթ պիտի տա կրկին ասելու.

- Սիրել, ծառայել, հոգիներ սիրաշահել իր համար: Այս
բոլորը ցույց են տալիս մեր Երկնավոր Հոր անսահման և նե-
րող սերը մեր հանդեպ:

Աստու ներողամտությունը դուռն է նոր սկզբնավորման:

Արդյոք երբեմն մենք է՞լ Եսա-
լի պես ծախում ենք բարո-
յական մի շարք արժեքներ (Եբր.
12.16): Արդյոք հարստությունը, ու-
ժը, վարկը, դիրքը, ապահովությունը
մեզ մղո՞ւմ են Աստծով հարստանալը
փոխանակելու մեկ ճաշի հետ:

Եսալը փորձեց փոխել հոր միտ-
քը և վերաշահել իր անդրանիկու-
թյան իրավունքը, որից զրկվել էր
խարդախության հետևանքով: Նա
կրելու էր իր սխալ որոշման
հետևանքները: Անհնար է հետ
դարձնել ժամացույցի սլաքները և
ջնջել այն սխալ արարքը, որ գործվել
է մեր անձի կամ ուրիշների հանդեպ:

Թեև անցյալը անհնար է հետ բե-
րել, սակայն միշտ էլ մի նոր օր ու-

Կապույտ ծնունդ

Կարգա՛
Եսայի 53.1-6

**Նա մեր մեղքերն էր
վերցնում և մեզ
համար չարչարվում...:**
Եսայի 53.4

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Դանիել 11-12
■ Գուդա

Հետզհետե աճում է այն եկեղեցիների թիվը, որոնք Կապույտ Ծնունդ կոչված պաշտամունքն են կատարում ցավի և սզի մեջ գտնվողների համար: Տոնական եղանակներն ընդհանրապես ուրախություն են շեշտում: Ուրախ տրամադրությունը հաճախ ավելի է ծանրացնում բոլոր նրանց ցավն ու վիշտը, ում սրտերը կոտրված են սիրելի կորստով:

Մի հոգևոր հովիվ Կապույտ Ծնունդի պաշտամունքի մասին ասում է. «Սա առիթ է, որ մարդիկ զան Աստծու ներկայությունը և խոստովանեն իրենց վիշտը, հուսահատությունն ու մենակությունը և այդ բոլորը հանձնեն Աստծուն»:

Ծնունդի մեղեդու տակ եկեղեցիների բեմերից սովորաբար կարդացվում են Եսայի մարգարեի մարգարեացած խոսքերը գալիք Մեսիայի մասին, որ պիտի ծնվեր մի կույսից (Եսայի 7.14) և պիտի կոչվեր «Աքանջելի խորհրդակից, Աստված հզոր, Իշխան, Հայր հանդերձյալ աշխարհի» (Եսայի 9.6):

Թերևս պետք է ավելացնել նաև Եսայու 53-րդ գլխից. «Նա հարվածների ենթակա մի մարդ եղավ... Նա մեր մեղքերն էր վերցնում... Եվ նրա վերքերով մենք բժշկվեցինք» (Եսայի 53.3-5): Սաղմոսերգուն մեզ հիշեցնում է, որ «(Տերը) բժշկում է բեկյալ սրտերը և կապում բոլոր վերքերը նրանց» (Սաղմ. 146.3):

Եթե այս ծնունդի եղանակին ցավի և վշտի մեջ ես, հիշի՛ր, որ Հիսուսը եկավ մեզ փրկելու, օգնելու և բժշկելու:

Հիսուսի շնորհի օազիս հայթայթիր մեզ մեր վշտի անապատում:

Եղի՛ր աստղ

Կարդա՛
Մատթեոս 2.1-12

Իմաստուն մարդիկ պիտի ճառագեն իբրև երկնակամարի լուսատուներ, իսկ արդարներից շատերը ստապել և՛ իբրև հավիտենական աստղեր:

Դանիել 12.3

Աստվածաշունչը
մեկ տարում

- Out 1-4
- Հայտնություն 1

վեցին: Մի գիշեր իր բարեկամների հետ աղոթելուց հետո Դանիելը Աստծուց ստացավ թագավորի երազի բովանդակությունն ու մեկնաբանությունը: Թագավորը վարձատրեց նրան՝ տալով գլխավոր խորհրդականի պաշտոնը (Դան. 2):

Հատկանշական պիտի լինեք, եթե պատմությունն այստեղ վերջանար: Սակայն Աստվածաշնչի մի շարք ուսումնասիրողներ այն կարծիքին են, որ Դանիելի ազդեցությունը «արթնացրել» է Բաբելոնի ժողովրդին Մեսիայի՝ որպես Փրկիչ գալու լուրով, որը պիտի ծնվեր Բեթղեհեմում: Դանիելի ուսուցումները կարող են անուղղակի պատճառ եղած լինել 500 տարի հետո երեք իմաստունների՝ Արևելքից գալու, աստղին հետևելով՝ Բեթղեհեմում ծնված Թագավոր մանուկին գտնելու, Նրան երկրպագելու և իրենց նվերները տալուց հետո բարի լուրով իրենց երկիրը վերադառնալու (Մատթ. 2.1-12): Մենք էլ կարող ենք Դանիելի պես ուրիշներին դեպի ճշմարտություն առաջնորդող աստղ լինել:

Շատերն այսօր փորձում են Շիայլոդ աստղ լինել, որպեսզի հաճախակի ցուցադրվեն լրագրողների լուսարձակների ներքո: Սակայն մի հրեա գերի երիտասարդ փայլող աստղ դարձավ ավելի լավ ձևով:

Դանիելն ու ընկերները անգուլթ ազգի կողմից գերի էին տարվել Բաբելոն: Հասկանալի էր, որ որպես գերի՝ նրանց բանի տեղ դնող չկար: Սակայն այդ աստվածավախ երիտասարդները շուտով հայտնաբերեցին իրենց իմաստուն և հավատարիմ մարդ լինելը:

Երբ թագավորը մի երազ տեսավ, նրա իմաստուն համարած մարդիկ չկարողացան ո՛չ հիշել, ո՛չ էլ մեկնաբանել այն և մահվան դատապարտվեցին:

Դու կարող ես մարդկանց հմայել առ Քրիստոս, երբ Նրա լույսն ունենաս կյանքիդ մեջ:

**Առատօրին
օրհնված**

Կարգա՝
Սաղմոս 32

**...Տիրոջ
ողորմությամբ է
լցված երկիրը:**
Սաղմոս 32.5

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Out 5-8
■ Հայտնություն 2

Մեր բազմի թխկիները աշնան
ամենավերջում են տերևա-
թափվում: Նոյեմբերի մի ցուրտ օր,
ինքս ինձ տրտնջալով, մի տոպրակի
մեջ էի հավաքում թափված վերջին
տերևները:

Այդ միջոցին էր, որ մի սիրալիբ
ձայն ասաց. «Բարև՛»: Էլեկտրական
ժամացույցը կարգավորող պաշտոն-
յան էր: «Ինչպե՞ս ես այս առա-
վոտ», - հարցրի նրան:

«Ես ինձ առատօրին օրհնված եմ
զգում», - պատասխանեց նա ժպտա-
լով: Ես էլ անմիջապես փորձեցի
տրամադրությունս փոխել և ասացի.
«Ես նույնպես: Իսկապես Աստված
հրաշալի է, չէ՞»:

«Վստահաբար», - պատասխանեց
նա, ապա հարցրեց, - դու Հիսուսին հավատում ես, չէ՞»:
«Այո՛, - պատասխանեցի և ավելացրի, - և Նա իմ կյանքը լց-
րել է առատ օրհնություններով»:

Այս կարճ խոսակցությունը ոչ միայն տրամադրությունս
փոխեց, այլև հիշեցրեց ինձ, որ մենք՝ Քրիստոսին հավատա-
ցողներս, իսկապես չափից ավելի օրհնված ենք: Նրա հեռա-
նալուց հետո երկիրքը առաջվա պես մռայլ չթվաց ինձ: Քա-
մու թափը կարծես թուլացավ, և տերևներ հավաքելը դար-
ձավ չհոգնեցնող մի աշխատանք: Տերն օգտագործել էր այդ
հավատացյալ պաշտոնյային, որ ուշադրությունս կենտրո-
նացնեմ իր վրա՝ տեսնելու իր բարությունն ու օրհնություն-
ները (Սաղմ. 32.5):

Հավատացյալները մի հավաքականության մաս են կազմում:
Քաջալերենք իրար: Չգիտենք, թե երբ մի բարեկամ կարիքը կու-
նենա այնպիսի մեկի, որն իրեն հիշեցնի Աստծու բարությունը:

Աստծու բարության հավատքը երգ է դնում մեր սրտերի մեջ
և փառաբանություն՝ մեր շուրթերին:

ՎԻԶՄԸ ԽԱՓԱՆՈՂ Է

Կարդա՛
Ա. ԹԵՍ. 4.13-18

Չենք կամենում, եղբայրներ, որ ննջեցյալների նկատմամբ տգետ լինեք ու չտրտմեք, ինչպես ուրիշները, որ հույս չունեն: Ա. ԹԵՍ. 4.13

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Out 9-11
■ Հայտնություն 3

Օղբանավի վթարը, որը 1970-ի նոյեմբերի 4-ին տեղի ունեցավ Միացյալ Նահանգների Վիրջինիա նահանգում, պատճառ դարձավ 75 հոգու մահվան, որոնց մեջ էր նաև համալսարանական ֆուտբոլի մի թիմ իր մարզչի հետ: Այդ ահավոր դեպքը ցնցեց ոչ միայն համալսարանը, այլև ամբողջ քաղաքի և նահանգի բնակչությանը: Իրենց սիրելիներին կորցրած Փոլի և Անիի պատմությունը միախառնվեց, որովհետև Փոլի որդին Անիի նշանածն էր: Երկուսի սիրտն էլ կեղեքվում էր անտանելի ցավից, որովհետև, ինչպես Փոլն էր ասում Անիին, «վիշտը խափանող էր»:

Փոլն իրավացի էր. վիշտը խափանող և խանգարող է: Բոլորս էլ, ներառյալ Հիսուսի հետևորդները, մեկ կամ ավելի անգամ ցավ ու վիշտ զգացել ենք կամ կարող ենք ունենալ: Սակայն հավատացյալների համար արցունքից, ցավից ու կորստից ավելի մի բան կա: Կա կարևորը՝ Հույսը:

Առաքյալը գրում է եկեղեցու մի ընտանիքի, որը կորցրել է իր սիրելիին, որ հասկանում է նրա վշտի ծանրությունը: Սակայն կոչ է անում նրանց, որ «չտրտմեն, ինչպես ուրիշները, որ հույս չունեն» (Ա. ԹԵՍ. 4.13):

Կորուստը և մահը մեր կյանքի մաս կազմող իրողություններ են: Բայց հավատացյալները կարող են դիմագրավել դրանց՝ վստահ, որ Քրիստոսը երբեք «մնաք բարով» չի ասում վերջին անգամվա համար: Մենք կարող ենք իրար մխիթարել (Ա. ԹԵՍ. 4.18) հարություն հույսով և ապագայում վերամիացման հավատով:

Որովհետև Քրիստոսն ապրում է, մահը աղետ չէ, այլ հաղթանակ:

**Տալ առանց
ակնկալության**

Կարգա՛
Ղուկաս 6.27-36

**Եվ եթե ձեր
բարեկամներին
բարիք անեք, ձեզ
համար ի՞նչ շնորհ
է...:**

Ղուկ. 6.33

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Out 12-14
■ Հայտնություն 4

անում: Գուցե նա մեզ թշնամի համարվող ազգից կամ հավատքից է: Ինչո՞ւ տալ առանց հույսի, թե փոխարենը կարող ենք մի բան ստանալ: Սա թերևս համամշակութային հարց է, սակայն այս տեսակետը շատ հզոր սուրբգրային հիմք ունի:

Հիսուսը, երբ մի մեծ ամբոխի էր պատգամում, ասաց. «Եթե դուք ձեզ սիրողներին սիրեք, ձեզ համար ի՞նչ շնորհ կլինի, քանի որ մեղավորներն էլ են իրենց սիրողներին սիրում: Եվ եթե ձեր բարերարներին բարիք անեք, ձեզ համար ի՞նչ շնորհ է, քանի որ մեղավորներն էլ են այդպես անում» (Ղուկ. 6.32-33):

Հարցն այն է, որ ինչ-որ մեկի գնումի համար վճարենք կամ աղքատի ձեռքի մեջ դրամ դնենք կամ բարեսիրական նպատակի համար գումար տանք: Կարևորը հոժարակամ, Հիսուսի սիրով և առանց ակնկալության տալն է, որովհետև «Աստված սիրում է հոժարությամբ տվողին» (Բ Կորնթ. 9.7):

Տպարավաճառի խանութում գնումներ կատարելիս պիտի ուզեիր՞ վճարել նաև քո հետևում կանգնած մարդու փոխարեն, եթե նույնիսկ նրան չես ճանաչում: Այսպիսի մարտահրավեր էր նետում մի քրիստոնեական ռազիոկայան՝ շրջանի ժողովրդին բարեփոխելու և բարեգործության մղելու նպատակով: Կոչի նպատակն էր Հիսուսի նման ազնվացնող գործեր անել մարդկանց, որոնք չեն ակնկալում քո արարքը, և մի երկտողով տեղեկացնել, որ դու դա արեցիր, որովհետև սիրում ես Քրիստոսին:

Ինչո՞ւ այդպիսի բան անել: Ինչո՞ւ փոխ ծախսել ուրիշի համար, երբ չգիտենք, թե ո՛ւմ համար ենք

Կյանքի

Ճշմարտություններ

Կարգա՛

Ղուկաս 1.24-38

**Մարիամն էլ ասաց.
«Ահա Տիրոջ
աղախինն եմ. թող
ինձ քո խոսքի պես
լինի»:**

Ղուկաս 1.38

Աստվածաշունչը
մեկ տարում

■ Հովել 1-3

■ Հայտնություն 5

Հանդեպ իրենց ունեցած հավատքով, որ Նրա ժամանակացույցը կատարյալ էր, և Նրա համար անկարելի բան չկար (Ղուկ. 1.24-25,37-38):

Երբ կարդում ենք Ծնունդի պատմությունը, կարող ենք զարմանալ մեզ շատ ծանոթ մարդկանց իրական կյանքում տեղի ունեցող պատահարների վրա: Նույնիսկ Զաքարիան և Եղիսաբեթը՝ որպես անզավակ մնացած ընտանիք, տառապեցին իրենց մշակույթի մտայնությունից՝ հակառակ նրա, որ համարվում էին Աստծու առաջ արդար և Նրա պատվիրաններից հնազանդ գույգ (Ղուկ. 1.6):

Հրեշտակն ասաց Մարիամին, որ նա շնորհք է գտել Աստծու մոտ (Ղուկ. 1.30):

Այս անձանց կյանքի օրինակը ցույց է տալիս, որ պետք է վստահել Աստծուն և ընդունել Նրա խորհրդավոր, երբեմն մեզ անբացատրելի թվացող գործելակերպը:

Հավատացյալը չպետք է փորձարկելը բաժանի
վստահությունից:

Թվում է, թե մեր շատ մաքա-
ռուսներ այնպիսի բաների
չուրջ են, որ չունենք, կամ այնպիսի
բաներ ունենալու համար են, որոնց
կարիքը չունենք: Մեր ամենախո-
րունկ ըղձանքներն ու մարտահրա-
վերները խորապես արմատացած են՝
տեսնելու համար, թե Աստծու ձեռքը
որքանով է ներկա այս երկու իրո-
ղությունների մեջ: Այս կետից է, որ
սկսվում է Հիսուսի ծննդյան պատ-
մությունը Ղուկասի Ավետարանում:

Տարիքն առած Եղիսաբեթը կա-
րոտ էր երեխայի: Երիտասարդ և
նշանված Մարիամի համար հղիանա-
լը անպատվություն էր: Բայց եր-
կուսն էլ, երբ իմացան, որ հղի են,
այդ բարի լուրն ընդունեցին Աստծու

**Աստծու և մարդկանց
կարիքն ունենք:**

Կարգա՝
Ժողովող 4.9-12

**Տե՛ր, ո՛ւշ դարձրու
աղաղակիս...**

Թագավոր իմ և

Աստված իմ:

Սաղմոս 5.2

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Ամոս 1-3

■ Հայտնություն 6

որ մենք կարիքն ունենք Աստծու ու նաև ուրիշ մարդկանց:

Աստվածաշունչը հաստատում է, որ մենք կարիքն ունենք Աստծու և Նրա նման եղող մարդկանց: Դավիթն արտահայտում է Աստծուց իր կախյալ լինելը և աղոթքով աղերսում է Աստծուն, որ իր հետ լինի: Նա ասում է. «Ակա՛նջ դիր իմ խոսքերին, Տե՛ր, և ո՛ւշ դարձրու աղաղակիս» (Սաղմ. 5.2): Իսկ Ժողովողի գրքում կարդում ենք, որ Սողոմոն իմաստունը քաջալերում է մեր նմանների վրա հատուկ վստահություն ունենալը: Դրանով նա ուզում է ասել, որ իրար օգնելը կարող է մեզ հզորացնել, իսկ անձնասպան լինելը և միայն ինքներս մեզ վստահելը մեզ տկարացնում է: Երկուսով գործելն ավելի լավ է, քան միայն ինքդ քեզ վրա հենվելը (Սաղմ. 4.9-12): Աստված մեզ ստեղծել է, որ իրար հետ լինենք: Սիրով իրար վստահենք, բայց դրանից առաջ վստահենք Նրան:

Կինոբեմադրիչ Սիլվեսթեր Սթալոնեն 2006-ին իր «Ռոքի Բալբոա» ժապավենով մեծ զարմանք պատճառեց հավատացյալներին իր հայտարարությամբ: Նա ասաց, որ միայն առ Քրիստոս հավատքը չէր, որ ազդել էր իր վրա՝ նման մի ժապավեն ստեղծելու, այլ այդ որոշումը ներշնչված էր նաև իր վերանորոգված քրիստոնեական հավատքով: Նա գիտակցում էր նաև, որ նախկինում շատ թույլ ընտրություններ էին առաջնորդում իր կյանքը, և ինքը միշտ միայն իրեն էր վստահում: «Պետք է ունենալ մասնագիտություն և մեկ ուրիշի առաջնորդություն», - ասում է նա: Սթալոնեն յուրացրել էր մի բան՝ այն, որ շատ մարդիկ սկսել են ընդունել,

Մենք շատ ավելի հեռուն կարող ենք գնալ միասին,
քան թե մենակ:

Սեւլա՝ մի ըոպե

Կարդա՛
Սաղմոս 23. 1-10

**...ինքն է փառքի
արքան:**

Սաղմ. 23.10

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Ամովս 4-6

■ Հայտնություն 7

Ժամանակ հատկացնելու Աստծուն պաշտելու:

Լուռ և հանդարտ, և լսել Աստծուն (Սաղմ. 45.10):

Դադար անել մեր հեքոտ ժամանակացույցում՝ հոգեպես
թարմանալու համար (Սաղմ. 41.1-2):

Շեշտել ուրախությունը Աստծու տված բարիքների հա-
մար՝ գոհունակությունը (Սաղմ. 50.1-10):

Շեշտել ուրախությունը Աստծու տված բարիքների
համար (Սաղմ. 64.9-13):

Փառաբանել Աստծու անունը Նրա պատասխանած աղոթք-
ների համար՝ հակառակ մեր ունեցած մի շարք հուսախաբու-
թյունների (Սաղմ. 39.1-3): Վերջացնել օրը՝ անդրադառնալով
Տիրոջ հավատարմությանն ու օրհնություններին (Սաղմ. 118.
148): Դավիթն անդրադառնում է Աստծու օրհնություններին
«սեւլա» դադարով: Նրա օրինակին հետևելը կարող է մեզ օգնել՝
Աստծուն փառաբանելու ամբողջ օրվա ընթացքում:

Ոչ մի օր կատարյալ չէ առանց պաշտամունքի:

Դավիթ թագավորը հայտա-
բարում է. «Զորությունների
Տերը՝ նա ինքն է փառքի արքան»
(Սաղմ. 24.10): «Սեւլա» բառը հետա-
գայում են ավելացրել այս և շատ ու-
րիշ սաղմոսների: Ոմանք կարծում
են, թե այդ բառը երաժշտական դա-
դարի նշան է, որովհետև սաղմոսնե-
րը հաճախ երգելով էին ներկայաց-
վում: Աստվածաշնչի որոշ ուսում-
նասիրողներ էլ հնարավոր այլ
իմաստներ են տալիս այդ բառին,
ինչպես՝ «լուսթյուն», «դադար»,
«ընդմիջում», «շեշտ», «փառաբա-
նություն» և կամ «վերջ»:

Այդ բառին անդրադառնալը կա-
րող է օգնել մեզ՝ մի «սեւլա ըոպե»
դադար տալու օրվա ընթացքում և

**Հավիտենապես
երջանիկ**

Կարգա՛
Ա Տիմոթեոս 6.6-16

**...ձեզ համար
աղքատացավ նա, որ
հարուստ էր, որպեսզի
դուք նրա
աղքատանալով
հարստանաք:**

Բ Կորնթ. 8.9

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Ամովս 7-9
■ Հայտնություն 8

Հարստություն, որն անհամեմատ բարձր արժեք ունի, քան որևէ նյութական հարստություն:

Աստված Աստվածաշունչը մեզ չտվեց որպես երջանկության համար մեզ ուղղություն տվող գիրք: Սակայն այն մեզ ասում է, թե ինչպե՛ս կարող ենք տևականորեն երջանիկ լինել և ապրել մինչև հավիտենական երջանկություն: Ուրեմն Աստվածաշնչյան ճշմարտությունը մարդկային տրամաբանությունը համադրելը ավելի է լույս սփռում մեր իմացածի վրա:

«Բայց մեծ շահ է իսկական աստվածապաշտությունը՝ գոհունակություն հետ», - ասում է Առաքյալը (Ա Տիմ. 6.6):

Առաքյալն ուզում է, որ հավատացյալները կարողանան հասկանալ, որ կյանքի Հիմնական կարիքների համար Աստծուն երախտագետ լինելը կարող է նրանց հեռու պահել ազահությունից: Կենտրոնանանք Աստծու շնորհքի հրաշալիքների վրա և վարժեցնենք մեզ՝ երախտագետ հոգի ունենալու:

ԹՎԻՐ անհամար օրհնություններդ և դու շուտով պիտի կորցնես հաշիվդ:

Մի թերթի հոգվածագիր էր ընթերցողներին ներկայացրել էր «Ինը խրատ՝ ուրախությունը նպաստելու»: Հետաքրքիր էր տեսնել, որ այդ խրատներից մեկը ճիշտ նույնն էր, որ գտնում ենք մի սիրված հոգևոր երգի բառերում. «ԹՎԻՐ քո շատ օրհնություններ»: Հոգվածագիրը խստորեն պատվիրում էր, որ չմտածենք հարևանների ունեցած հարստության մասին, այլ մեր ուշադրությունն ավելի կենտրոնացնենք այն բազում օրհնությունների վրա, որ ունենք և վայելում ենք: Սա մի իմաստուն խորհուրդ է, որը մեզ մղում է անդրադառնալու մեր հոգևոր հարստություններին, որ ունենք Քրիստոսով: Հոգեկան

Գորտեր և էլի գորտեր

Կարգակ

Սաղմոս 138.1-12

**Տե՛ր, ինձ փորձեցիր
ու ճանաչեցիր ինձ:**

Սաղմոս 138.1

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Աբդիու

■ Հայտնություն 9

լավ են ճանաչում: Բայց ոչ ոք չի կարող մեզ այքան լավ ճանաչել, որքան Աստված: Մենք Աստծու համար բաց գրքի պես ենք: Չկա մի բան, որ թաքուն մնա Նրանից: 138 Սաղմոսն ասում է.

«Դու իմացար իմ նիստուկացը» (Ն. 2). - Նա գիտի մեր ամբողջ օրվա գործունեությունը՝ իր բոլոր մանրամասներով:

«Դու հեռվից հասկացար իմ մտածումները» (Ն. 2). - Լավն ու վատը, մաքուրն ու անմաքուրը, ամեն ինչ գիտի:

Աստված գիտի ամեն վայր, ուր գնում ենք. «Իմ շավիղներն ու վիճակը դու քննեցիր և բոլոր ճանապարհներս նախապես տեսար» (Ն. 3): Աստված գիտի ամեն բան, ինչ խոսում ենք (Ն. 4):

Նա ավելի լավ է ճանաչում մեզ, քան մենք ինքներս: Լավ է այդքան մոտիկից ճանաչվենք մեր Տիրոջից և իմանանք, որ մեր բոլոր թերություններով հանդերձ՝ Նա մեզ շարունակում է սիրել:

Մարին իր տարեդարձի առթիվ նվեր ստացավ խեցիկից պատրաստված մի գորտ և դրեց իր սեղանին, որ բոլորը տեսնեն: Մի քանի գործընկերներ, կարծելով, թե Մարին գորտ է սիրում, սկսեցին գորտեր նվիրել նրան Ծննդյան տոնի և այլ առիթներով: Կարճ ժամանակ անց նրա աշխատասեղանը լցվեց գորտ ներկայացնող առարկաներով՝ մատիտ, մոմ, հուշատետր, սուրճի գավաթ և այլն:

Երբ Մարին դուրս եկավ աշխատանքից, մի բարեկամ նրան հարցրեց, թե ինչ արեց գորտերը: Նա պատասխանեց. «Ճիշտն ասած, ես գորտ չեմ սիրում: Դրա համար էլ ցրեցի դրանք»:

Շատերը կարծում են, թե մեզ

Դու պարզապես մի թիվ չես, որ համակարգիչը կարողանա գտնել: Քրիստոսը գիտի բո կարիքը, անունը և դեմքը:

Իսկական Ծնունդ

Կարգավ՛
Ղուկաս 2.25-35

**Իսրայելում այս
մանուկը շատերի
համար ընկնելու,
կանգնելու և
հակառակույթյան
նշան է լինելու:**

Ղուկ. 2.34

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Յովնան 1-4

■ Յայտնություն 10

տալու, որ կարողանանք կրել ամեն տեսակ դառնություն: Նա չեկավ՝ հրաչքով մեզ հեռու պահելու կյանքի փորձություններին, այլ եկավ մեզ իր խաղաղությունը տալու, խաղաղություն մեր սրտերին, որով կարողանանք հանդարտորեն և հաստատակամորեն դիմագրավել այն բոլոր տագնապները, որ կյանքը բերում է մեզ: Որպեսզի կարողանանք պառակտված աշխարհին ամոքում բերել, այսինքն՝ խաղաղություն»:

Երբ Մարիամը և Հովսեփը Մանուկ Հիսուսին ներկայացրին Տիրոջը, Սիմեոնն ասաց. «Իսրայելում այս մանուկը շատերի համար ընկնելու, կանգնելու և հակառակույթյան նշան է լինելու: Եվ հենց քո հոգով սուր կանցնի, որ շատ սրտերից խորհուրդներ հայտնվեն» (Ղուկ. 2.34-35):

Ծնունդը իրականությունից նահանջելու եղանակ չէ, այլ խաղաղության իշխանի հետ առաջ ընթանալու կոչ:

Հիսուսը եկավ՝ լուսավորելու համար մի մութ աշխարհ:

Բարիք գործել

Կարգա՛
Ա Պետրոս 3.8-17

Որովհետև ավելի լավ է, եթե դա Աստծու կամքն է, բարիք գործելով չարչարվել, քան թե չարիք գործելով:

Ա Պետրոս 3.17

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Միքիա 1-3

■ Հայտնություն 11

կաշառք ստանալու, առաջարկեցին նրան, որ աչք փակի նրանց ապօրինի առևտրի վրա: Բայց Հովսեփը մերժեց լսել իր մեծավորներին և ի վերջո անտեղի զրպարտությունամբ բանտարկվեց ու թ տարով՝ պարզապես բարիք գործելու համար:

Դժբախտաբար, ապրում ենք մի աշխարհում, որտեղ բարիք գործելը երբեմն տառապանք է բերում, ինչպես եղավ Հովսեփի պարագայում: Պետրոս Առաքյալն էլ բանտ նետվեց բարիք գործելու համար և զգաց այդ անարդարությունն ու ցավը: Դրա համար էլ նա մեզ խրատում է՝ ասելով. «Որովհետև ավելի լավ է, եթե դա Աստծու կամքն է, բարիք գործելով չարչարվել, քան թե չարիք գործելով» (Ա Պետ. 3.17):

Չար մարդիկ չեն կարող խափանել արդարությունը: Բարիք անելը Աստծու կոչն է, թեև երբեմն այն թանկ արժե:

Հովսեփը բանակայինի տիպար է և վստահելի պաշտոնյա էր և աստիճանի բարձրացումներով հասավ մինչև գնդապետի պաշտոնի մասնավոր ուժերի բաժանմունքում: Երբ Հովսեփին կառավարելու հանձնվեց մի առանձին շրջան, որտեղ թմրանյութերի առևտուրը մեծ ավերածություններ էր գործում, նա ուզեց կարգուկանոն հաստատել և արդարություն գործադրել այդ վտանգավոր շրջանում: Ուստի ինքը և իր զինվորները հասարակ ժողովրդին պաշտպանելու համար սկսեցին խստորեն վարվել չարագործների և ոճրագործների հետ: Սակայն նրա մի շարք պաշտոնյաներ, ովքեր վարժված էին թմրանյութեր վաճառողներից

Բարիք անելու հաճույքը թերևս միակ վարձատրությունն է, որ ստանում ենք, բայց արժե այն գործել:

**Աստծու զարմանա-
լի պատասխանը**

Կարգա՛
Եսայի 42.1-9

**Եթե բացես երկինքը,
քո ահից լեռները
կասանվեն և
կհալվեն...:**

Եսայի 64.1

Աստվածաշունչը
մեկ տարում

- Միքիա 4-5
- Հայտնություն 12

«Եթե բացես երկինքը, քո ահից լեռները կասանվեն և կհալվեն... և քո անուկը հայտնի կդառնա...: (Եսայի 64.1),-ասում Եսայի մարգարեն:

Մարգարեն ուզում է, որ Աստված մարդկանց հետ վարվի այնպես, ինչպես արել էր անցյալում: Նա հիշում է Աստծու այցելությունը Մովսեսին Սինա լեռան վրա և ուզում է, որ նույնը կրկնվի:

Սակայն Աստված արդեն ասել էր Եսայի մարգարեին, որ նոր բան պիտի անի: «Ինչ որ նախասահմանված էր, այն էլ կատարվեց, իսկ ինչ որ նոր պիտի պատահի, ե՛ս կպատմեմ ձեզ, մինչև պատմելն էլ այն հայտնի կդառնա ձեզ» (Եսայի 42.9):

«Նոր Բանը» Հիսուսն ինքն էր: Աստված իսկապես ցած իջավ: Բայց ոչ Եսայի մարգարեի ժամանակ: Եվ ոչ էլ այն ձևով, որ նա փափագում էր. «Նա չի աղաղակելու և չի վիճելու, ոչ ոք դրսում նրա ձայնը չի լսելու (Եսայի 42.2): Նա եկավ չենթադրված ձևով՝ մանկան կերպարանքով:

Մեզնից շատերը կարող են հիշել պարագաներ, երբ Աստված զարմանալի կերպով ճիշտ ժամանակին պատասխանել է մեր խնդրանքին: Եսայի մարգարեի պես մենք էլ հաճախ ուզում ենք, որ նա նույն բանն անի դարձյալ: Բայց Աստծու խորհուրդները մեր խորհուրդները չեն: Թերևս Նա մի ուրիշ բան ունի Իր մտքում: Երբ հիշատակում ենք Աստծու՝ երկրի վրա իջնելը, պետք է արթուն լինենք և գիտակցենք, որ Նա եկավ մեր սրտերը փոխելու և ոչ թե այն կացությունը, որի մեջ ապրում ենք:

Աստծու պատասխանները մեր աղոթքներին կարող են մեր ակնկալություններից շատ ավելին լինել:

Ո՞ր է կապը

Կարդա՛
Միքիա 6.1-8

... Ի՞նչ է ուզում քեզնից
Տերը. իրավունք հաս-
տատել, ողորմություն
սիրել և պատրաստ լինել
քո Տեր Աստծու հետևից
դնապու։

Միքիա 6.8

Աստվածաշունչը
մեկ տարում

- Միքիա 6-7
- Հայտնություն 13

Աստծու հետ մեր քայլերն էլ պետք է այսպես կանոնա-
վոր լինի: Աստված իր կարեկցությամբ մեզ տալիս է մի եր-
կար կապ և հազվագեպ՝ մեզ աշխուժացնելու հոգևոր մտ-
րակում: Նա չի սիրում բռնի կերպով կարգ ու կանոնի մեջ
պահել մեզ: Նա ուրախանում է, երբ մենք հանձնվում ենք
իր կամքին և համաչափ քայլում իր կողքով:

Երբ Իսրայելի ժողովուրդը տրտնջաց Միքիա մարգարե-
ին, թե որքան դժվար է հաճեցնել Աստծուն, Աստված ուղ-
ղակի պատասխանեց մարգարեի միջոցով, թե որքան պարզ
ու հեշտ է իրեն հաճեցնելը: Արդար լինելը, գլխափրակ և խո-
նարհաբար Աստծու հետ քայլելը մեծ ուրախություն պիտի
պատճառի Աստծուն (Միք. 6.8):

Աստված շատ է փափագում, որ մենք վարժ ու հնազանդ
լինենք իր հետ քայլելու ընթացքում, որ Ինքն այլևս կարիք
չունենա մեր կապը բռնելու:

Ճշմարիտ ազատություն ենք գտնում, երբ հնազանդությամբ
քայլում ենք Աստծու հետ:

Վերջերս, երբ բարեկամներին
հետ չհինական ուստորան
էի գնացել, նկատեցի մի մարդու,
որը քայլում էր իր շան հետ: Հան-
կարծ նա կանգ առավ, քանդեց շան
կապը, կլոր փաթաթեց և ամուր խց-
կեց շան բերանը:

Բարեկամս բացատրեց, որ այդ
քաղաքում օրենքը թույլ չի տալիս
շանը զբոսանքի հանել առանց
դնչկալի: Այդ շան հնարամիտ տերը
գտել էր ելքը, որ օրենքի խախտում
չհամարվի: Սակայն այդ ճարպիկ մի-
ջոցը գտնելուց ավելի զարմանալին
այն էր, որ շունը հնազանդորեն
հետևում էր իր տիրոջը, երբ կարող
էր վազել քիչ հեռվում թռչկոտող
սկյուռիկների հետևից:

Ապահով՝ երկնքում

Կարգավ՝
Ա Պետրոս 1.3-12

Անարատ...

Ժառանգությունը, որ երկնքում պահված է ձեզ համար, Աստծու զորությամբ ու հավատով...:

Ա Պետրոս 1.4-5

Աստվածաշունչը
մեկ տարում

- Նաում 1-3
- Հայտնություն 14

անում եմ նրա կատարյալ վստահությունը, որ հեծանիվը իրենն է, չնայած դեռ անձամբ չէր էլ ստացել այն:

Այդ վստահությունն ինձ հիշեցրեց Պետրոս Առաքյալի մի խոսքը. «Աստված իր առատ ողորմությունը, Հիսուս Քրիստոսի՝ մեռելներից հարություն առնելով, մեզ վերստին ծնեց դեպի կենդանի հույսը, դեպի այն անեղծ, անարատ ու անթառամ ժառանգությունը, որ երկնքում պահված է ձեզ համար, որ Աստծու զորությունը, հավատով պահպանվում եք պատրաստված փրկության համար, որ հայտնվելու էր փերջին ժամանակում» (Ա Պետ. 1.3-5):

Ի՞նչն է, որ ապահովված է մեզ համար: Մեր ժառանգությունը՝ երկինքը, և մի կտակ, որը, չենք կարող վստահաբար ասել, թե հավիտենական կյանքի համար է, որ «հավիտենական դարերից առաջ խոստացավ անսուտ Աստված» (Տիտոս 1.2):

Բարեկամներիցս մեկը ամիսներ հարունակ նորոգում էր հին ավտոմեքենան՝ քաղաքի տարածքում քշելու համար, և այն պահում էր կողպված ավտոտնակում: Երբ մոտեցան Ծննդյան տոները, նա մտածեց, որ այդ կողպված ավտոտնակը շատ հարմար տեղ է աղջկա նվերը մինչև Ծնունդ թաքցնելու համար:

Ծննդյան տոնից մի քանի օր առաջ ընկերներից մեկը հարցրեց աղջկան, թե արդյոք գիտե՞ր՝ ի՞նչ նվեր է ստանալու: «Իհարկե գիտեմ,- պատասխանեց նա,- հեծանիվ է, որ տուփով պահված է մեր ավտոտնակում՝ հորս նորոգած հին մեքենայի մեջ»:

Չգիտեմ, թե այդ աղջնակն ի՞նչ ձևով էր գտել իր նվերը, սակայն հիանում եմ նրա կատարյալ վստահությունը, որ հեծանիվը իրենն է, չնայած դեռ անձամբ չէր էլ ստացել այն:

Հավատացյալի ապագան այնքան փայլուն է, որքան՝
Աստծու խոստումները:

Մոռացված մարդը

Կարդա՛
Մատթեոս 1.18-25

**Ամբողջ սրտով
հույսդ դի՛ր Աստծու
վրա և մի՛
հպարտացիր քո
իմաստությամբ:**
Առականեր 3.5

Աստվածաշունչը
մեկ տարուն
■ Ամբակյուն 1-3
■ Հայտնություն 15

Հովսեփին արդար, գլխասիրտ, հոգատար և քաջարի մարդ էր: Սակայն ամենից ավելի՝ հնազանդ մարդ էր նա: Երբ հրեշտակը նրան ասաց, որ Մարիամին ընդունի որպես իր կինը, նա հնազանդվեց (Մատթ. 1.24): Եվ երբ հրեշտակը դարձյալ ասաց նրան, որ վերցնի Մարիամին ու մանուկ Հիսուսին և Եգիպտոս փախչի, նա դարձյալ հնազանդվեց (Մատթ. 2.13-14):

Ճիշտ ինչպես Մարիամն էր զգուշորեն ընտրվել՝ կրելու Աստծու Որդուն, այնպես էլ Հովսեփին ընտրվել էր հատկապես՝ իր երիտասարդ կնոջ և մանուկ Հիսուսի մասին հոգ տանելու համար: Եվ վստահելով Աստծուն՝ Հովսեփը հետևեց Աստծու ցույց տված բոլոր ուղղություններով:

Պատրաստ ես անձդ տրամադրելու Աստծուն, որ անի, ինչ ուզում է, որ անես: Հնազանդության մասին շատ բան կարող ենք սովորել Հովսեփից՝ Ծնունդի տոնի ժամանակ մոռացված անձից:

Ծնունդի արարողությունների ընթացքում, չգիտես՝ ինչպես է պատահում, միշտ մի մարդ մոռացվում է: Նկատի չունեմ այն անձին, ում ծննդյան տարեդարձն ենք տոնում: Թեև շատ հաճախ մենք էլ Ծնունդի օրերին մոռանում ենք առաջին տեղը տալ Հիսուսին, որն այնքա՛ն արժանի է դրան: Խոսքս հիմա Հովսեփի մասին է, այն մարդու, ում Աստված այնքան շատ վստահեց, որ իր Որդին նրա տան մեջ ծնվեց, որ նա սիրի և հոգ տանի Նրա մասին: Ի՛նչ մեծ պատասխանատվություն:

Հովսեփին իսկապես մոռացված մարդն է Ծնունդի պատմության մեջ՝ հակառակ նրա, որ կարևոր դերակատարություն ունի Աստծու ծրագրում:

Աստծու հանդեպ մեր ունեցած սիրո փաստը մեր՝ իր պատվերներին հնազանդությունն է:

Օրհնարքեր ծառը

Կարգա՛
Ղուկաս 1.46-55

**Որովհետև Հզորն ինձ
համար մեծամեծ
բաներ արեց. և սուրբ
է նրա անունը:**

Ղուկաս 1.49

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Սոփոնիա 1-3
■ Հայտնություն 16

թյան ծառին: Չնայած մեր դժվարին օրերին՝ Աստված դարձյալ շատ ձևերով օրհնեց մեզ, և որոշեցինք այս տարի Ծննդյան այս ծառը նվիրել նրան: Ոլորված այս թղթերից յուրաքանչյուրի վրա գրված է մի օրհնութուն, որ Աստված տվել է մեզ»:

Դրանից հետո այդ գույգը շատ փորձություններ տարավ, սակայն հաստատ մնաց Աստծուն վստահելու որոշմանը: Ամուսինները հաճախ հիշում էին Ծնունդի այն «օրհնության ծառը», որը ամենագեղեցիկն էր, որովհետև Մարիամի պես կարողացել էին վկայել. «Իմ հոգին ուրախացավ իմ Փրկիչ Աստծով... որովհետև Հզորն ինձ համար մեծամեծ բաներ արեց» (Ղուկ. 1.47-49):

Ի՛նչ էլ լինեն դժվարություններդ, դրանք չպիտի խանգարեն Ծնունդի տրամադրությունդ: Պետք է գտնել ձևը՝ Աստծու օրհնություններին բաժնեկից անելու նաև ուրիշներին:

Ծնունդին իմաստ տալու համար առաջին տեղը տո՛ւր
Քրիստոսին:

Մի տեղ կարդացի մի երիտասարդ գույգի մասին, որը գործերի անհաջողության պատճառով քիչ փող ուներ՝ Ծննդյան տոներին ծախսելու: Նրանք ստիպված էին նոր տարվանից անմիջապես հետո ազատել իրենց տունը: Սակայն նրանք չէին ուզում, որ դա պատճառ դառնար իրենց տոնը խափանելու, և որոշեցին հավաքույթ կազմակերպել՝ հրավիրելով բարեկամներին: Հյուրերը, ներս մտնելով, տեսնում էին մի փոքրիկ մայրի ծառ՝ զարդարված լույսերի մի շարքով և ճուղերին կապված ոլորված փոքրիկ գունավոր թղթերով:

Երբ բոլոր հյուրերը ժամանեցին, ամուսինները վառեցին ծառի լույսերը և ասացին. «Բարի՛ եկաք մեր օրհնության ծառին: Չնայած մեր դժվարին օրերին՝ Աստված դարձյալ շատ ձևերով օրհնեց մեզ, և որոշեցինք այս տարի Ծննդյան այս ծառը նվիրել նրան: Ոլորված այս թղթերից յուրաքանչյուրի վրա գրված է մի օրհնութուն, որ Աստված տվել է մեզ»:

Միշտ նոր

Կարդա՛
Ա. Կորնթացիներ 15.1-8

**Իմացնում եմ ձեզ
այն Ավետարանը, որ
ձեզ ավետարանեցի...:**
Ա. Կորնթ. 15.1

Աստվածաշունչը
մեկ տարում

- Անգե 1-3
- Հայտնություն 16

նրանցից շատերն էլ պիտի հնանան, ժամանակավրեպ և անգործածելի դառնան:

Ամեն բան, ինչ ստեղծում է մարդը, ի վերջո ժամանակավրեպ պիտի դառնա: Ամեն ինչ, բացի Ավետարանից: Ավետարանը 2000 տարվա հնություն ունի: Թեև եղել են բազմաթիվ թարգմանություններ, սակայն Ավետարանը տակավին այժմեական է՝ իր գրված օրից մինչև այսօր:

Ավետարանի խոստացած և անժամանցելի ճշմարտությունն այս է. Հիսուսն աշխարհ եկավ, ապրեց կատարյալ կյանքով, իր կյանքը զոհաբերեց խաչի վրա, թաղվեց վարձված գերեզմանում և երեք օր հետո Հարություն առավ (Ա. Կորնթ. 15.1-4): Քանի որ մեր մեղքերի պատիժը իր վրա առավ, Նա կարող է ներել մեր մեղքերը և մեզ Աստծու զավակներ դարձնել, եթե հավատ ու վստահություն ցույց տանք Նրան (Գործք 13.38-39):

Ավետարանը երբեք չի հնանում:

Երբեք նկատե՞լ եք, թե առարկաները հաճախ որքան արագ են հնանում կամ ժամանակավրեպ դառնում: Այս մասին սկսեցի մտածել անցյալ օրը, երբ դասախոսում էի Քրիստոնեական համալսարանում: Եղավ մի պահ, երբ յուրաքանչյուր ուսանող պետք է իր անձնական համակարգիչն ունենար: Շատ չանցած՝ ամեն տեղ նորածեղ դարձավ, և պետք էր, որ գրադարաններում համակարգիչներ դրվեին ուսանողների գործածության համար: Ավելի ուշ կարիք զգացվեց, որ ուսանողներն իրենց գիշերօթիկի ննջարաններում համակարգիչներ ունենան: Բայց շուտով

**Ընտանեկան
պատմություններ**
Կարգա՛
Հետու 4.1-9

**...Այս քարերը
հավիտյան հիշատակ
թող լինեն
իսրայելացիների մեջ:**
Հետու 4.7

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Ձաքարիա 1-4
■ Հայտնություն 17-18

երին: Երեխաները պետք է ավագ սերնդի կողքին լինեն, որպեսզի կարողանան լսել պատմություններ իրենց ծնողների, ազգականների, պապերի ու տատերի մասին, ճանաչեն նրանց, ովքեր իրենցից առաջ են եղել: Հին Կտակարանը մեծ արժեք է տալիս մանուկներին, որոնց պետք է ուսուցանվի իրենց հոգևոր ժառանգությունը: Աստված Հորդանան գետի ջրերը բաժանելուց հետո պատվիրեց Հեսուլին, որ գետի միջից 12 քար առնի և հիշատակի կոթող չինի ապագա սերունդների համար. «Երբ վաղը ձեր որդիները ձեզ հարցնեն և ասեն. «Ի՞նչ են նշանակում այս քարերը ձեզ համար», դուք ձեր որդիներին կպատմեք և կասեք, թե Հորդանանի ջրերը կտրվեցին ամբողջ երկրի Տիրոջ ուխտի տապանակի առջև, երբ այն անցնում էր Հորդանան գետով: Այս քարերը հավիտյան հիշատակ թող լինեն իսրայելացիների մեջ» (Հետու 4.6-7): Կարևոր է հոգևոր հաղորդակցությունը երկու սերունդների միջև:

Մերի Ֆայֆերն իր «Ընտանեկան պատմություններ» գրքում մի շարք ցուցումներ է տալիս, թե ինչպե՛ս կարելի է փրկել քայքայման վտանգի առաջ հայտնված ընտանիքները: Նա ցույց է տալիս, թե ինչպես այսօրվա պատանիները հաճախ չափն անցած ձևով են օգտվում հեռուստացույցից կամ խաղում համակարգչային խաղեր՝ հակառակ ծնողների խրատներին: Նա օրինակ է բերում, թե ինչպես ընտանեկան հավաքույթի ժամանակ փոքրերին, որպեսզի չխանդարեն մեծերի խոսակցությունը, ուղարկում են հարևան սենյակ՝ տեսաֆիլմ դիտելու: Նա հավատացած է, որ այդ վարվելակերպը բազմաթիվ կարևոր բաներից զրկում է մանուկներին:

Աստվածավախ նախասիայերը լավ ուսուցիչներ են լինում:

**Մեռնել՝ ապրելու
համար**

Կարգավ՛
Մատթեոս 16.21-28

**Որովհետև ով իր
անձը փրկել ուզի,
կկորցնի այն, իսկ ով
իր անձը կորցնի ինձ
համար, կգտնի այն:**
Մատթեոս 16.25

Աստվածաշունչը
մեկ տարում

- Ձաքարիա 5-8
- Հայտնություն 19

վրա ամեն կողմից ցողվեց մեկ ուրիշ հեղուկ: Ազգանշան տրվեց՝ «չորացնող հեղուկ»: Շատ տարօրինակ էր. թրջող հեղուկը ինչպե՞ս կարող է չորացնող լինել: Սակայն հենց դրա համար էլ ստեղծված էր այդ հեղուկը: Հակասական բան. թրջելով չորացնել: Մարդկային տրամաբանությունը հակառակ բան:

Հիսուսն էլ այդպիսի հակասական մտքեր ներկայացրեց, երբ իր թագավորության պատգամն էր տալիս իր հետևորդներին: Մատթ. 16.25 համարում նա ասում է. «Որովհետև ով որ իր անձը փրկել ուզի, կկորցնի այն, իսկ ով իր անձը կորցնի ինձ համար, կգտնի այն»: Առաջին հայացքից ճիշտ չի թվում նրա ասածը: Սակայն բացարձակապես ճիշտ է: Մենք մեր անձը միայն Քրիստոսին տալով և վստահելով կարող ենք փրկել՝ Իրենից սովորելով, թե ի՞նչ է նշանակում իսկապես ապրել:

Արևմտյան Միջիգանը ձյունառատ ձմռանը անտանելի է դառնում ճամփորդության համար: Ծանապարհները ծածկվում են մերկասառույցով, և մեքենա վարելը դառնում է վտանգավոր: Ուստի սառույցը փափկացնելու համար ճանապարհներին պետք է առատորեն աղ ցանել: Սակայն հարցն այն է, որ աղն էլ իր հերթին մաշում է մեքենաների մետաղյա մասերը: Ահա թե ինչու ձմռանը ավտոմեքենաները պետք է հաճախակի լվանալ:

Վերջերս ավտոմեքենաս տարել էի լվացման: Երբ լվացող մեքենան վերջացրեց իր գործը, մեքենայիս վրա ամեն կողմից ցողվեց մեկ ուրիշ հեղուկ: Ազգանշան տրվեց՝ «չորացնող հեղուկ»: Շատ տարօրինակ էր. թրջող հեղուկը ինչպե՞ս կարող է չորացնող լինել: Սակայն հենց դրա համար էլ ստեղծված էր այդ հեղուկը: Հակասական բան. թրջելով չորացնել: Մարդկային տրամաբանությունը հակառակ բան:

Քրիստոսի համար ապրել նշանակում է իմանալ մեր անձը զոհել:

Լավ չէ

Կարդա՛
Ծննդոց 2.15-25

**Տեր Աստված ասաց.
«Լավ չէ, որ մարդը
միայնակ լինի: Նրա
նման մի օգնական
ստեղծենք նրա
համար»:**

Ծննդոց 2.18

Աստվածաշունչը

մեկ տարում

■ Չաքարիա 9-12

■ Հայտնություն 20

Միացյալ Նահանգներում բանտարկուծյան մի ձև կա, որի սկզբունքով երբեմն 25.000 ամենավտանգավոր հանցագործներ ապրում են մի վայրում՝ ամեն մեկն իր խցի մեջ մեկուսացված: Նրանք ընդհանրապես ոչ մի կապ չունեն արտաքին աշխարհի հետ: Այդպիսի մի բանտարկյալ Արիզոնա նահանգից ասում էր, թե մեկուսացման մեջ ամենազովարը «մարդկանց երես առ երես տեսնել չկարողանալն է, նրանց դիպչելու, ողջագուրվելու, սիրված զգալու անհնարինությունը»: Այդ մարդու բառերը ազադակի նման են, որը կարծես ասում է. «Ես մենակ եմ, արդար չէ այս վերաբերմունքն իմ հանդեպ»:

Ծննդոց գրքի հեղինակը համաձայն է սրան: Աստված ստեղծելուց հետո տեսավ Ադամի մենակությունը և ասաց. «Լավ չէ, որ մարդը միայնակ լինի: Նրա նմանություն մի օգնական ստեղծենք նրա համար» (Ծննդոց 2.18): Այլ խոսքով, մարդը կարիք ունի մի ուրիշ անձի, որի հետ լինելով՝ նա կարող է կատարյալ մարդ լինել: Լայն իմաստով Աստված մեզ ասում է, որ իսկական մարդ լինել նշանակում է վայելել իր նմանների հետ լինելու հարաբերությունները: Կարևոր չէ, թե ի՛նչ է մենակության պատճառը՝ մեղքը, կորուստը, ամոթը, հիվանդությունը թե ընկճվածությունը: Աստված ասում է. «Լավ չէ»: Նա ստեղծել է մեզ, որ մոտիկից հարաբերության մեջ լինենք մեր նմանների (Ժող. 4.9-12) և Իր (Հայտն. 21.3) հետ: Պետք է դուրս գանք մեր ինքնամիտի մենակեցությունից և մեր նմանների հետ զարգացնենք այն բարեկամությունը, որի կարիքն ունենք բոլորս:

Բարեկամությունն օգնում է վանելու մենակությունը:

Ամրացնողները

Կարդա՛
Բ Թես. 2.13-17

**Ձեզ համար ամեն
ժամանակ աղոթք ենք
անում...: Որպեսզի
մեր Տեր Հիսուս
Քրիստոսի անունը
ձեր մեջ փառավորվի:**
Բ Թես. 1.11-12

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Ձաքարիա 13-14
■ Հայտնություն 21

Ես մեծ հարգանք ունեմ այն հողամարդկանց և կանանց հանդեպ, ովքեր մագլցում են՝ ժայռեղեն լեռան գագաթը հասնելու համար: Նրանք շատ լուրջ նախազգուշական քայլեր պիտի ձեռնարկեն, մանավանդ եթե լեռը քարքարոտ է: Ապահովության ձևերից մեկն այն է, երբ բարձրացողը գործածում է պարան, որի մի ծայրը ներքևում գտնվող ընկերոջ մոտ է, որը կոչվում է «ամրացնող»: Եթե մագլցողը կորցնում է հավասարակշռությունը կամ ընկնում է, ամրացնողը կարող է նրան ամուր բռնել, մինչև որ նա ուղղվի և շարունակի վերելքը կամ վայրէջքը: Ուրեմն՝ «ամրացնել» նշանակում է խարսխել. ամուր բռնել ապահովության համար:

Ամերիկայում կա մի «Հուլյսի եկեղեցի», որն ունի չափահասների ընկերակցություն: Նրա անդամները նպատակ ունեն կատարյալ նվիրումով իրար օգնելու և բարոյապես նեցուկ կանգնելու և իրար համար աղոթելու՝ Քրիստոսի հետ քայլելու համար կամ իրենց ամենօրյա կյանքի մեջ: Նրանք նաև նյութական օգնություն են հայթայթում այնտեղ, որտեղ պետք է: Քաջալերում են իրար և կողք կողքի են կանգնում, երբ հայտնվում են հոգևոր վտանգի մեջ: Նրանք «պարան են բռնում» իրար համար:

Մտածում եմ, որ Պողոս Առաքյալն էլ ամրացնող մեկն էր շատ եկեղեցիների համար: Թեսաղոնիկեի եկեղեցու հավատացյալները հալածվում էին և նեղության մեջ էին: Առաքյալը նրանց հիշեցնում է, որ նրանք ընտրված և տակավին սիրված են Աստծու կողմից (Թես. 2.13): Ո՞ւմ պարանն է Աստված ուզում, որ բռնես:

Մի քաջալերական խոսքը կարող է մեծ նշանակություն ունենալ ոտքի կանգնելու և շարունակելու համար:

**Օգտակար՝ աճելու
համար**

Կարդա՛
Ք Տիմոթեոս 3.10-17

**Ամբողջ Գիրքն
աստվածաշունչ է ու
օգտակար՝
սովորեցնելու...:**
Ք Տիմ. 3.16

Աստվածաշունչը
մեկ տարում
■ Ձաքարիա 1-4
■ Հայտնություն 22

Հոր. 5.7-ը: 1800-ական թվականների հոգևոր հովիվ և որբանոցի տնօրեն Ջորջ Միլլերի համար դժվարություն չէր իմանալը, թե այս խոսքերից որոնք են աստվածաշնչյան: Ինչո՞ւ: Որովհետև նա Աստծու խոսքը կարդացել էր հարյուրավոր անգամներ: Նա ասել է. «Այն օրերը, երբ բավարար ժամանակ չեմ ունեցել Աստվածաշունչ կարդալու, ես համարում եմ կորսված... Միշտ օրենք եմ սահմանել՝ երբեք գործ չսկսել, մինչև լավ ժամանակ չանցկացնեմ Աստծու և Իր խոսքի հետ: Այդ պահերից իմ ստացած օրհնությունները սքանչելի են եղել միշտ»:

Պետք է, որ մենք մեզ մեղավոր զգանք, եթե Աստվածաշունչը չկարողանանք կարդալ այնքան հաճախ, որքան Միլլերն էր կարդում: Բայց որոշե՛ք մի տարի այն ամբողջությամբ կարդալ, որպեսզի կարողանանք պատասխանել մի շարք հարցադրումներին՝ հավատարիվ, որ ամբողջ գիրքը Աստծու շնչով է գրված և օգտակար է մեր հոգևոր աճի համար (Ք Տիմ. 3.16-17):

Հետևյալ խոսքերից որո՞նք են վերցված Աստվածաշնչից.

1. Մաքրությունը գալիս է Աստվածապաշտությունից:
2. Աստված օգնում է բոլոր նրանց, ովքեր իրենք իրենց են օգնում:
3. Խոստովանությունը լավ է հոգու համար:
4. Մարդը ծնվել է նեղություն քաշելու համար՝ նման կայծերին, որոնք վեր են թռչում:
5. Դրամը արմատն է ամեն չարիքի:
6. Պարկեշտությունը լավագույն քաղաքականությունն է:

Հավատանք թե ոչ, սրանցից միայն մեկն է Աստվածաշնչից: Չորրորդը՝

Կարդա՛ Աստվածաշունչը՝ իմաստուն լինելու համար, հավատա՛ ապահով լինելու համար:

Նյութերի այբբենական ցանկ

Աղոթք	Հոկ. 6, նոյ. 2, դեկ. 21
Ապաշխարություն.....	Դեկ.8
Առանձնություն.....	Դեկ. 29
Աստվածաշունչ.....	Նոյ. 29, դեկ. 31
Աստծու գիտությունը.....	Դեկ. 18
Աստծու զորությունը.....	Հոկ. 6, նոյ. 7
Աստծու խոսքը.....	Հոկ. 21
Աստծու հավատարմությունը.....	Նոյ. 30
Աստծու նկարագիրը.....	Նոյ. 26
Աստծու սերը	Նոյ. 13,27
Աստծու ստեղծագործությունը	Նոյ. 13
Աստծու սրբությունը.....	Հոկ. 14, նոյ. 26
Բարեպաշտություն.....	Հոկ. 21, նոյ. 4
Գոհունակություն.....	Նոյ. 22, դեկտ. 17
Գութ.....	Դեկ. 4
Դիսցիպլին.....	Հոկ. 28, դեկ. 22
Դրախտ.....	Նոյ. 6, դեկ. 23
Եկեղեցական միաբանություն.....	Հոկ. 29
Եկեղեցի.....	Դեկ. 15,30
Ենթարկում.....	Նոյ. 15
Երախտագիտություն.....	Նոյ. 21
Երջանկություն.....	Հոկ. 1,7,23
Լեզու.....	Հոկ. 16
Ծառայություն.....	Հոկ. 8, նոյ. 25
Ծերություն.....	Հոկ. 7, նոյ. 17,25,30
Կառավարություն.....	Նոյ. 1
Կեղծավորություն.....	Նոյ. 23
Կորուստ.....	Դեկ. 12
Հալածանք.....	Դեկ. 20
Հանգիստ.....	Հոկ. 3,18

Հանդարտ պահ.....	Հոկ. 31, դեկ. 31
Հարստություն.....	Նոյ. 10
Հավատք.....	Նոյ. 3
Հնազանդություն.....	Հոկ. 28, նոյ. 5, դեկ. 22,24
Հոգեկան աճում.....	Հոկ. 8,25,31, նոյ. 16, դեկ.3
Հոգեկան պատերազմ.....	Հոկ. 10
Հաղթանակ.....	Դեկ. 5
Հանձնում.....	Դեկ. 22, 28
Հարություն.....	Նոյ. 17
Հիսուսի անունը.....	Դեկ. 7
Հիսուսը՝ բարեկամ.....	Նոյ. 24
Հիսուսի ծնունդը.....	Հոկ. 4, դեկ. 2, 19,25
Հիսուսի մահը.....	Նոյ. 9
Հույս.....	Նոյ. 14
Մահ.....	Հոկ. 30, նոյ. 6, դեկ. 12
Մանուկներ.....	Դեկ. 27
Մտահոգություն.....	Նոյ. 19
Ներում.....	Դեկ. 8
Պաշտամունք.....	Դեկ. 16
Սատանա.....	Հոկ.10
Սեր ուրիշների հանդեպ.....	Հոկ. 12, նոյ. 8, 11
Սուգ.....	Հոկ. 18, դեկ. 9, 12
Վախ.....	Հոկ. 13
Վկայություն.....	Հոկ. 1,9,22,24, նոյ. 12, դեկ. 10
Վստահություն.....	Նոյ. 7,19, դեկ.1,14
Տալ.....	Հոկ. 11, դեկ. 13
Փորձարկություն.....	Հոկ. 3,8,19,25, նոյ. 3, դեկ. 1
Փրկություն.....	Հոկ. 2,4,5,15,20, նոյ. 9,16,18, դեկ. 6,26
Քաջակերություն.....	Հոկ. 27, դեկ. 11, 15, 30
Քրիստոնեական կյանք.....	Հոկ. 17
Օրինակ.....	Հոկ. 22

Կարևոր ազդ

Հարգելի՛ բարեկամ, եթե գիտեք մարդկանց, ովքեր ուզում են ունենալ այս գրքույկի հաջորդ համարները, կարող եք նրանց անունները գրել ներքևի կտրոնի վրա և ուղարկել հետևյալ հասցեով.

*Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցության
Հայաստանի մասնաճյուղ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 18
Հեռախոս՝ (010) 54-35-76; (010) 54-35-78
Էլփոստ՝ amaa.armenia@amaa.am
Կայքէջ՝ www.amaa.am*

ԼՂՀ

*ք. Ստեփանակերտ
Ալեք Մանուկյան 7ա
Հեռ. (374) 94 52 75; 95 02 95*

Անուն, ազգանուն

Հասցե.....

.....

Հեռախոս.....
